ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(76-րդ տարի**) Թիվ-10** (1668) — *Հոկտեմբեր 2022*

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Իսկ ժամանակը սպառվում է (էջ 1-3)

2- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Հայաստանը կործանման նախաշեմին. ի՞նչ է տեղի ունենում երկրի ներսում և շուրջը (էջ 4-6)

«ԻՌՆԱ» պետական լրատվական գործակալության հարցազրույցը Ահմադ Քազեմիի հետ
«ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքը». ՆԱՏՕ-ի և միջազգային սիոնիզմի դավադրությունն ընդդեմ Իրանի, Ռուսաստանի և Չինաստանի (էջ 7-11)

Լիանա Պետրոսյան
2022 թ. սեպտեմբերի 13-ին Հայաստանի դեմ ադրբեջանական հերթական ագրեսիան և միջազգային հանրության արձագանքը (էջ 12-13)

3- Տարածաշրջանային

Նարե Գևորգյան
Արևմուտքն ու Իրանում տեղի ունեցող իրադարձությունները (էջ 14-15)

4- Պատմաքաղաքական

Անի Մելքոնյան
Ռուսաստանի հեռացումը տարածաշրջանից. պատմական ակնարկ (էջ 16-18)

5- Իրավաքաղաքական

Արփի Գասպարյան
ՌԴ և ԱՄՆ կոնֆլիկտային ռազմավարությունների արտացոլումը ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթերում (էջ 19-22)

6- Աշխարհաքաղաքական

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն *ԱՄՆ զենքի վաճառքի նախապատմությունը և հիմնական փաստաթղթերը (էջ 23-26)*

7- Հայ Կյանք

Մարի Հովհաննիսյան
Հայոց ցեղասպանության բանավոր պատմության բացառի արխիվի պատմությունից (էջ 27-29)

8- Դաշնակցական բեմ

Աւօ Գաթրճեան
Հայ ազատագրական շարժման մեծագոյն նուիրեալ Գէորգ Չաւուշին ձօնուած երգերը (մաս 2) (էջ 30-38)

9- Պատմության լուսարձակ

Արարատ Հակոբյան
Դրվագներ Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարի պատմությունից (1722-1730 թթ.)(պայքարի սկզբնավորման 300-ամյակի առթիվ) (մաս 2) (էջ 39-42)

10- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Մեր մղձաւանջը՝ անզօրութեան զգացումն այս (էջ 43-44)

Իսկ ժամանակը սպառվում է

Սույն թվականի հոկտեմբերի 6-ին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի և Եվրոպայի խորհրդի նախագահ Շառլ Միշելի մասնակցությամբ Փաշինյանի և Ալիևի միջև տեղի ունեցած բանակցությունները, ինչպես և դրանց հետևանքով ստորագրված հայտարարությունը շրջադարձային քայլ էին՝ դուրս բերելու հայ-ադրբեջանական բանակցային գործընթացը ռուսական միջնորդական ծիրից և տեղափոխելու արևմտյան վերահսկողության դաշտ: Այս ուղղությամբ նախնական քայլ կարելի է համարել ընդունված հայտարարության համաձայն Եվրոպական միության քաղաքացիական առաքելության հրավիրումը հայ-ադրբեջանական սահման: Այլ խնդիր է, թե առավելագույնը երկամյա գործունեության իրավասություն ունեցող «առաքելությունը» որքանով կարող է օգտակար լինել շփման գծի լարվածության թուլացման համար, եթե, ըստ հայտարարության, «Առաքելության նպատակը կլինի վստահության կառուցումը և իր զեկույցների միջոցով սահմանային հանձնաժողովներին աջակցելը»: Ընդ որում, դարձյալ ըստ հայտարարության, Ադրբեջանը համաձայնել է համագործակցել նշյալ առաքելության հետ այնքանով, որքանով որ առնչություն կունենա, կարծես սահմանային խնդիրները վերաբերում են միայն Հայաստանին: Հայկական կողմի համար նսեմացուցիչ այս ձևակերպումը Ադրբեջանին թույլ կտա ինքնուրույն որոշել, պարզ ասած, բանի տեղ դնել այդ հանձնաժողովին, թե՞ ոչ: Մյուս կողմից՝ ռուսների հնարավոր դժգոհությանը նա կկարողանա պատասխանել, թե դա հայկական կողմի նախաձեռնությունն է: Իսկ որ Ադրբեջանը Թուրքիայի ուղղորդմամբ թքել է բոլոր տեսակի բանակցություններից ու փաստաթղթերից բխող պարտավորությունների վրա, և դրանք բոլորը հայկական կողմի համար են պարտադրանք, ապացուցում են ոչ միայն նրա բոլոր գործողությունները 2020 թ. նոյեմբերի 9-ին ստորագրված հայտարարությունից հետո, այլև կրկին հայկական սահմանների ու դիրքերի գնդակոծումները, երբ թանաքը դեռ չէր չորացել Պրահայում ստորագրված փաստաթղթի վրա, կողմերը դեռ չէին հասցրել տուն վերադառնալ Աստանայում տեղի ունեցած բանակցություններից:

Պրահայում ադրբեջանական կողմը, հիշյալ հայտարարության առաջին պահանջի համաձայն, հասավ նրան, որ «Հայաստանն ու Ադրբեջանը հաստատեցին իրենց հանձնառությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը և 1991 թ. Ալմա Աթայի հռչակագրին, որոնցով երկու կողմերն էլ ճանաչել են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը»: Հայ և օտար քաղաքական ու քաղաքագիտական հանրույթը արդեն տվել է այդ բանաձևման գնահատականը, ըստ որի՝ հայկական կողմը դրանով Արցախը ճանաչել է Ադրբեջանի կազմում: Իհարկե, Ալիևն այնքան միամիտ չէ, որ բավարարվի այսքանով, այլ փորձելու է ամրագրել տվյալ պայմանավորվածությունը՝ դրանից բխող մանրամասներով, որպեսզի հայոց ազգային որևէ իշխանություն ապագայում իրավական հնարավորություններ չունենա բարձրացնելու Արցախի անկախ կարգավիճակի հարցը:

Հոկտեմբերի 10-ին https://eadaily.com/ru/news/ ռուսական առցանց լրատվամիջոցին տված հարցազրույցում ադրբեջանցի քաղաքագետ Իլգար Վելիզադեն ասել է. «…. Այն, որ կողմերը ճանաչում են միմյանց սահմանները՝ ելնելով 1991 թ. Ալմա Աթայի հռչակագրից, շատ կարևոր է: Բայց խաղաղության պայմանագրում չպետք է տեղ լինի հին օրակարգին վերադառնալու համար, և այդ պայմանագրում պետք է հստակ ամրագրված լինեն կողմերի իրավասությունները: Հայաստանը պետք է հասկանա և ընդունի, որ Ղարաբաղի հայերին վերաբերող հարցերը Հայաստանի իրավասությունը չեն, և ապագայում, եթե Հայաստանը ճանաչի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ապա պետք է ճանաչի նաև Ղարաբաղը Ադրբեջանի կազմում՝ այդպիսով առաջնորդվելով միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքով: Չպետք է բարձրացնի Ղարաբաղի հայերին առնչվող հարցերը: Դա նույնպես պետք է տեղ գտնի խաղաղության պայմանագրի տեքստում: Եթե խաղաղության պայմանագրում լինեն ինչ-որ սողանցքներ և չբարձրաձայնված հարցեր, ապա դրանք հետագայում յուրաքանչյուր կողմ կարող է օգտագործել իր շահերի համար, և դա անթույլատրելի է: Դրա համար էլ խաղաղության պայմանագիրը պետք է փակի այսօրվա համար մնացած բոլոր հարցերը»[1]:

Եվ ահա հոկտեմբերի 12-ին Ադրբեջանի արտգործնախարար Բայրամովի անունից տարածվեց այն լուրը, որ Ադրբեջանը Հայաստանին է փոխանցել խաղաղության պայմանագրի ընդլայնված տարրերը: Ըստ Բայրամովի՝ դրանք լրացնում են ավելի վաղ ներկայացված հինգ հիմնական սկզբունքները, որոնք պետք է Բաքվի և Երևանի միջև խաղաղության պայմանագրի և հարաբերությունների կարգավորման հիմք դառնան: «Ադրբեջանական կողմը հայկական կողմին ներկայացրել է ընդլայնված տարրերը: Հայկական կողմը խնդրել է ժամանակ տրամադրել այդ տարրերին ծանոթանալու համար»: Ի դեպ, այս նույն ժամանակահատվածում Ադրբեջանն ամրապնդում է իր դիրքերն ու ռազմականորեն հզորացնում Հայաստանի Հանրապետությունից գրավյալ տարածքները, ինչը վկայում է, որ նա չի պատրաստվում իր կամքով լքելու դրանք: Ի պատասխան սրա՝ հայկական կողմը տարբեր ատյաններում հարցը լուծելու խնդրանք ու բողոք է ներկայացնում՝ գործնականում ոչ մի ձևով ցույց չտալով, թե իր ուժերով պատրաստվում

է լուծելու երկրի տարածքային ամբողջականության ապահովման ու անվտանգության հարցը, ինչի պատասխանատվությունը ստանձնել է՝ ստանձնելով երկրի կառավարումը:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ քանի դեռ ռուսները լրջորեն խրված են Ուկրաինայի դեմ պատերազմի մեջ, թուրք-ադրբեջանական տանդեմը ձգտում է վերջնականապես փակելու Արցախի հարցը և Հայաստանից պոկելու առավելագույնը՝ միջանցքի կամ միջանցքների ներառմամբ:

Արևմուտքը շտապում է Հայաստանի ու Արցախի հաշվին հասնելու խնդրի լուծմանը՝ ստանձնելով կովկասյան գործերը տնօրինելու իրավունքը և տարածաշրջանից դուրս մղելով Ռուսաստանին, իսկ Հայաստանի իշխանությունը շտապում է... իրականացնելու արևմտյան հովանավորների ցանկությունները, ինչը, ըստ էության, փորձում է անել իր ղեկավարման չորս տարիների ընթացքում: Իրազեկ աղբյուրների համաձայն՝ Հայաստանի ղեկավարությունը Արևմուտքին խոստացել է նաև հրաժարվել ՀԱՊԿ-ին անդամակցությունից, ինչպես և խզելով պայմանագիրը՝ Հայաստանից դուրս բերել ռուսական ռազմական 102-րդ ռազմաբազան: Զոհաբերելով ազգային շահերը՝ Հայաստանի իշխանությունը այդպիսով կամրապնդի Արևմուտքի բարեհաճությունը՝ երկրի ներսում անօրինական ու բռնի մեթոդներով պահպանելու իշխանությունը և մի օր էլ ստանալու ապաստանի իրավունք:

Ռուսաստանի մոտեցումը մնում է սառեցնելը կամ երկարաձգելը գործընթացները, ամեն կերպ կանխելը հակամարտության թևակոխումը պատերազմական փուլ, քանի դեռ չի կարող իր ունեցած քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ գործիքակազմերով դրանք լիարժեքորեն ուղղորդել և հանգուցալուծել իր միջնորդական տրամաբանության համաձայն: Միաժամանակ նրա համար հեշտ չէ զսպել ադրբեջանցիների ու թուրքերի գործողությունները, երբ Հայաստանն ինքը հակառուսական խաղերի մեջ է և ձգտում է վերջինիս փոխարինել արևմտյան տերություններով: Ըստ էության Փաշինյանի իշխանությունը Արևմուտքի ձեռքին գործիք դառնալով Հայաստանը վերածում է Ռուսաստանի դեմ երկրորդ ճակատի: Այս պայմաններում Ռուսաստանը հաշվի է նստում ուժեղ Ադրբեջանի ու Թուրքիայի հետ, որոնց հետ իր քաղաքական, տնտեսական, հաղորդակցական և այլ խնդիրները արևմտյան պատժամիջոցների խստացման այս փուլում շատ ավելի մեծ նշանակություն են ստացել: Խրվելով ճակատագրական նշանակություն ձեռք բերած պատերազմի մեջ՝ Ռուսաստանն ակնհայտորեն չի մոռանում, այլ չափազանց խանդով է վերաբերվում իրեն թիկունքից հարվածելու, խաղից դուրս թողնելու քայլերին, որոնց մեջ կարծես միասնական են թե՛ Արևմուտքը, թե՛ Ադրբեջանն ու Թուրքիան և թե՛ Հայաստանը:

Ռուսաստանի արտգործնախարարության մամուլի

Պրահա. 6-ը հոկտեմբերի 2022 թ.

և տեղեկատվության դեպարտամենտի տնօրեն Մարիա Զախարովան հոկտեմբերի 10-ի ճեպազրույցի ժամանակ հայտարարել է. «Ցավոք, այստեղ մենք տեսնում ենք Եվրամիության հերթական փորձը՝ որևէ կերպ միջամտելու Ադրբեջանի և Հայաստանի հարաբերությունների կարգավորմանը, դուրս մղելու մեր երկրի միջնորդական ջանքերը: Բաքվի և Երևանի հաշտեցման, տարածաշրջանում կայուն խաղաղության և երկարաժամկետ կայունության հաստատման միակ բանալին Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների եռակողմ հայտարարությունների լիարժեք իրականացումն է»[2]:

Ռեգնում լրատվական գործակալության վերլուծաբան Ստանիսլավ Տարասովը գրում է. «Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները շատերի համար անսպասելի շրջադարձ են ունենում. մեծ հետաքրքրություն է նկատվում Ֆրանսիայի և ԱՄՆ-ի կողմից: Ընդ որում, սկսել են ավելի հստակ երևալ Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղելու քաղաքականության ուրվագծերը, որի ոտքերի առաջ, մի փորձագետի խոսքերով, «սկսել են նետել կոտրված ապակի, որի վրայով քայլելը վտանգավոր է»: Ավելին՝ գրեթե կասկած չի հարուցում կովկասյան տարածաշրջան մերձավորարևելյան անկայունության հնարավոր տեղափոխման հարցը: Ուստի աշխարհաքաղաքական փոփոխությունների դինամիկան տարածաշրջանում Մոսկվայի օրակարգ է բերում ազդեցության ոլորտների վերաբաշխման խնդիրը: Գլխավորը հիմա չուշանալն է»[3]:

Հոկտեմբերի 13-ին Աստանայում անցկացված ԱՊՀ երկրների ղեկավարների գագաթնաժողովում Պուտինը Ալիևին և Փաշինյանին հրավիրեց հանդիպման Ռուսաստանում: Այս հրավերի բովանդակությունը հոկտեմբերի 14-ին հետևյալ կերպ է մեկնաբանել ռուս հայտնի քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը. «Մոսկվան ամեն կերպ հասկացնում է, որ հեռավար դիվանագիտության չի անցել, հակամարտության կարգավորմանն ուղղված նրա ջանքերը, ՌԴ-ի պատկերացման համաձայն, շարունակվելու են»[4]:

Ռուսաստանը, իհարկե, հայ-ադրբեջանական և

հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում հետապնդում է իր շահերը, որոնք չեն նույնականանում Հայաստանի շահերի ու պատկերացումների հետ, սակայն երբ Արևմուտքը, այլևս անտեսելով Արցախի կարգավիճակի խնդիրը, դարձյալ փորձում է հօգուտ Ադրբեջանի լուծել հայ-ադրբեջանական կնճիռը, Հայաստանն ինչ հաշվարկով է նույնպես ձգտում Ռուսաստանին դուրս մղելու գործընթացից, որն առնվազն մեծ ընդհանրություններ ունի ռուսական շահերի հետ, ինչպես և որոշակի հակակշռման վիճակ կարող է ստեղծել բանակցություններում՝ հայկական կողմին ընձեռելով սեփական շահերն առաջ մղելու հնարավորություն: Երբ, օրինակ, Փաշինյանը Արևմուտքում բերանը ջուր է առնում Արցախի հարցում, արևմտյան առաջնորդները որոնք բազմիցս հայտարարել էին կարգավիճակի հստակեցման անհրաժեշտության մասին, շրջանցում են խնդիր և բնականաբար, այս հանգամանքը Աստանայում Ալիևին հնարավորություն է տալիս հայտարարելու, թե Ղարաբաղի հարցն իր ներքին գործն է, և ոչ մեկի հետ ինքը չի պատրաստվում այն քննարկելու: Եվ ի դեպ Ադրբեջանն է սկսել հայկական կողմին մեղադրել հարցը տարբեր միջնորդների դաշտ տեղափոխելու փորձերի մեջ, ինչի հետ իրենք իբրև թե համաձայն չեն: Արևելքից Արևմուտք և այս արանքում թուրք-ադրբեջանական դաշտում խաղեր տալու Նիկոլ Փաշինյանի և իր թիմի ճիգերը ոչ թե քաղաքականություն են, այլ գավառական խորամանկություն, որը կարող է թերևս ընդունվել նիկոլապաշտ ամբոխի կողմից և ոչ թե աշխարհի բախտը տնօրինող առաջնորդների:

Տեղին է այստեղ անդրադառնալը նաև այն փաստին, որ Պրահայում տեղի ունեցած Փաշինյան-Էրդողան հանդիպումից հետո Թուրքիայի նախագահը լրագրողներին հայտարարել է, թե Զանգեզուրի միջանցքի հարցում խնդիրներ չի տեսնում, իսկ Աստանայում Փաշինյանը դարձյալ ասել է, որ միջանցքների մասին որոշում չկա: Այս անգամ ո՞ւմ է փորձում ֆոռացնել Հայաստանի ոչ բարով առաջնորդը՝ ռուսների՞ն, թուրքերի՞ն, թե՞ հայերին՝ յուրաքանչյուրին տարբեր բան ասելով: Ակնհայտ է, որ այս ամենը սպառնալիքներ է ստեղծում պատերազմի շեմին գտնվող Հայաստանի համար թե՛ Ադրբեջանի, թե՛ Թուրքիայի և թե՛ նույնիսկ Ռուսաստանի կողմից, որն անգամ իր եղբայր ուկրաինացիներին չխնայեց, երբ նրանք փորձեցին թշնամուն բերել Ռուսաստանի դարպասների մոտ:

Ինչո՞ւ Նիկոլ Փաշինյանը չի փորձում իր համար ռազմաքաղաքական լուրջ խնդիրներ լուծել Իրանի հետ, որն ամեն օր ամենաբարձր մակարդակներով հայտարարում է Հայաստանի անվտանգության և ամբողջականության հետ կապված իր կարմիր գծերի մասին: Ինչո՞ւ են անտեսվում Հնդկաստանի, Չինաստանի և այլ երկրների հետ փոխհարաբերություններն ակտիվացնելու փորձերը, որոնք ուժեղանալու, մանևրելու հավելյալ հնարավորություններ կստեղծեն Հայաստանի համար: Նիկոլ ղեկավարը, չձգտելով ուժեղացնելու սեփական բանակը, անհեռանկար ճիգեր է գործադրում Հայաստանի համար անվտանգության երաշխիքներ ապահովելու արտաքին ուժերից: Արտաքին թշնամիներից պաշտպանվելու համար բանակն ուժեղացնելու փոխարեն նա շռայլորեն գումարներ է ծախսում ոստիկանության վայրենի պատժիչ մեքենան հզորացնելու համար, որն իրեն պետք է պաշտպանի սեփական ժողովրդից, որի գիտակից ու հայրենասեր հատվածն ի վերջո իրենից հաշիվ է պահանջելու Արցախն ու հայոց պետականությունը կործանման եզրին հասցնելու համար: Վերը շարադրված իրողությունները ևս մեկ անգամ հաստատում են այն փաստը, որ Նիկոլ Փաշինյանի գերնպատակը իշխանությունն է, հանուն որի պահպանման նա թշնամիների ու տարածաշրջանով շահագրգիռ ուժերի առջև աճուրդի է դրել իր հայրենիքն ու հայրենի պետությունը:

Այս պայմաններում անհրաժեշտություն է առողջ և գործուն ներուժի կենտրոնացումն ու հայրենիքի փրկության վճռական պայքարի ազդարարումը: Այլընտրանքը պետականության կործանումն ու թուրքական հպատակությունն է, դեպի ուր տանում է մեզ կույր ու ատելությամբ թունավորված ամբոխի բախտախնդիր առաջնորդը: Իսկ ժամանակը սպառվում է:

Աստանա. 13-ը հոկտեմբերի 2022 թ.

Հղումներ

1. 1. https://eadaily.com/ru/news/2022/10/10/posrednicheskie-torgi-po-karabahu-baku-trebuet-erevan-manipuliruet-intervyu (մուտք՝ 15.10.2022).
2. 2. https://yerkir.am/hy/article/2022/10/12/1185 (մուտք՝ 15.10.2022).
3. 3. https://regnum.ru/news/polit/3718827.html (մուտք՝ 15.10.2022).
4. 4. https://armeniasputnik.am/20221014/mvoskvan-arcakhi-harcvov-heravar-divanagitutjan-chi-ancel-markedvonvov-49787744.html (մուտք՝ 15.10.2022).

Հայաստանը կործանման նախաշեմին. ինչ է տեղի ունենում երկրի ներսում և շուրջը

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Հոկտեմբերի 6-ին Պրահայում տեղի ունեցած քառակողմ հանդիպումից հետո ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնն ու ԵՄ նախագահ Շառլ Միշելը հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որում նշվում է, որ «Հայաստանն ու Ադրբեջանը հաստատեցին իրենց հանձնառությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը և 1991 թ. Ալմա-Աթայի Հռչակագրին, որոնց միջոցով երկու կողմերն էլ ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը»[1]:

Սա մի ձևակերպում է, որը բացահայտում է ադրբեջանա-հայկական բանակցությունների հետագա ողջ ընթացքը: Հայ հանրությունը տարակուսած է՝ ինչ է նշանակում ճանաչել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Արցախն էլ է մաս կազմում այդ ամբողջականությանը՝ տարբեր հարթակներում հարցնում են հայ քաղաքացիները՝ կարծես չցանկանալով հավատալ, որ անցած երեսուն տարվա պայքարը կարող է այսպիսի անփառունակ ավարտ ունենալ: Եվ ոչ ոք կարծես չի համարձակվում խոստովանել, որ այո՛, այս փաստաթղթով Փաշինյանն Արցախը ճանաչում է Ադրբեջանի մաս: Բայց որպեսզի իր հասցեին ուղղված մեղադրանքներն ու քննադատությունները որոշ չափով մեղմելու հնարավորություն ունենա, Հայաստանի գործող ղեկավարը երկու փոքրիկ հնարք է կիրառում.

ա) Ասում է, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը Հայաստանը ճանաչել է դեռևս 1991 թ., երբ անդամակցում էր ԱՊՀ-ին:

բ) Խոսում է «Բաքվի և Ստեփանակերտի միջև քննարկումների մեխանիզմներ» ստեղծելու անհրաժեշտության մասին [2]:

Այս երկու պնդումն էլ, իհարկե, մանիպուլյատիվ են և բխում են բացառապես Ադրբեջանի շահերից: Սակայն սեփական ընտրազանգվածի առաջ արդարանալու տեսանկյունից լիովին աշխատող են Փաշինյանի համար, որը վստահ է, որ այդ կերպ կարող է Ադրբեջանի «տարածքային ամբողջականության» ճանաչման մեղքը գցել նախկինների վրա, իսկ Արցախի համար տալ այնպիսի խոստումներ, որոնք կհամոզեն իր էլեկտորատին, թե իբր ինքն ամեն ինչ անում է, որպեսզի արցախահայության շահերը պաշտպանված լինեն: Ընդ որում, պետք է նշել, որ Ալիևի շարունակ կրկնվող հայտարարություններն այն մասին, որ Ստեփանակերտի հետ Բաքվի հարաբերություններն Ադրբեջանի ներքին գործն են, և իրենք թույլ չեն տա, որ որևէ այլ երկիր փորձի միջամտել դրանց, Հայաստանի քաղաքացիների բացարձակ մեծամասնության համար լսելի չեն: Այս առումով Փաշինյանն ու իր քարոզչամեքենան իսկապես լավ են աշխատում:

Ինչևէ, հայկական պետությունների առջև այսօր ծառացած հիմնական մարտահրավերը նույնիսկ Պրահայում ընդունված քառակողմ հայտարարությունը չէ, այլ այն, թե իրականում ինչ օրակարգով է Ադրբեջանը ներկայանում բանակցությունների:

Հոկտեմբերի 3-ին Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակ» օրաթերթն ուշագրավ մի նյութ հրապարակեց, որում «Հավաստի աղբյուր» կեղծանվամբ հանդես եկող հեղինակը, որը, ամենայն հավանականությամբ, հենց ինքը՝ Փաշինյանն է, ներկայացրել է Հայաստանին ուղղված Ադրբեջանի պահանջները՝

- ԼՂ պաշտպանության բանակի լուծարում,
- ԼՂ ճանաչում Ադրբեջանի կազմում՝ առանց որևէ, նույնիսկ ինքնավար կարգավիճակի, այսինքն՝ 0 կարգավիճակով,
- միջանցք Հայաստանի տարածքով,
-սահմանագծման և սահմանազատման գործընթաց 1919, 1920 թվականների քարտեզներով (առայժմ հայտնի չէ, թե կոնկրետ որ քարտեզների մասին է խոսքը),
-անհետ կորած ադրբեջանցիների ճակատագրի պարզաբանում, ինչը, հնարավոր է, ունի հետագայում Հայաստանին պատերազմական հանցագործությունների մեջ մեղադրելու միտում [3]:

Նշված կետերից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, վկայում է միայն այն մասին, որ Ադրբեջանի քաղաքականության նպատակը ոչ թե Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումն է, այլ հայկական երկու պետությունների ոչնչացումը կամ առնվազն Արցախի պետականության ոչնչացումն ու Հայաստանի նկատմամբ լիարժեք վերահսկողությունը: Ի՞նչ է սրան հակադրում պաշտոնական Երևանը: Ցավոք, ոչինչ: Բառացիորեն ոչինչ:

Երկրի վարչապետը սեպտեմբերի 14-ին ԱԺ-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ հստակ հայտարարել է, որ «ծանր որոշումների» գնալու պատասխանատվություն է վերցրել իր

վրա. «Մենք ուզում ենք ստորագրել մի թուղթ, որի արդյունքում մեզ լիքը մարդ կքննադատի, լիքը մարդ կհայհոյի, լիքը մարդ դավաճան կասի, նույնիսկ կարող ա ժողովուրդը որոշի մեզ իշխանությունից հեռացնել, էլի գոհ ու շնորհակալ կլինենք, որ դրա արդյունքում ՀՀ-ն 29,800 ք/կմ տարածքով ստանա տևական խաղաղություն և անվտանգություն: Ես շատ հստակ ասում եմ՝ էն որոշումը, որ սա ապահովելու ա, ես այդ որոշումը, շատ հստակ ասում եմ, ստորագրելու եմ: Ու ինձ չի հետաքրքրում՝ ինչ կլինի հետո ինձ հետ, ինձ հետաքրքրում է՝ ինչ կլինի հետո ՀՀ-ի հետ» [4]: Եվ ահա այս հայտարարությունից մի քանի օր անց «Հայկական ժամանակ»-ում հրապարակվում է Ադրբեջանի պահանջների մասին վերը հիշատակված նյութը…

Իշխանական շրջանակներից անընդհատ լուրեր են հասնում, որ Փաշինյանն իսկապես պատրաստվում է կատարելու թուրք-ադրբեջանական դաշինքի պահանջները: Ավելին՝ իշխող թիմի վերնախավը կողմ է դրան և նույնիսկ պահանջում է Փաշինյանից հնարավորինս շուտ խաղաղության պայմանագիր ստորագրել Ադրբեջանի հետ: Հարցը, սակայն, ձգձգվում է այն պատճառով, որ պաշտոնական Երևանը չի կարողանում կողմնորոշվել, թե աշխարհաքաղաքական կենտրոններից որի հովանու տակ կատարի այդ քայլը՝ Ռուսաստանի՞, թե՞ Արևմուտքի: Երկրորդ խնդիրն էլ, որ ծառացել է Փաշինյանի առջև, այսպես կոչված «խաղաղության» պայմանագրի ստորագրումից հետո իշխանության պահպանումն է: Այդ է պատճառը, որ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը փորձում է Ադրբեջանի պահանջներից գոնե մեկը՝ ՀՀ տարածքով միջանցքի տրամադրումը, անկատար թողնել: Հաջողելու պարագայում նա այդ փաստը կօգտագործի՝ ցույց տալու, որ կարողացել է «միջանկյալ» լուծում ապահովել, և կհայտարարի, որ հասել է իր նպատակին՝ «խաղաղության դարաշրջանի» հաստատմանը:

Իրենց արդյունավետությամբ, ցավոք, չեն առանձնանում նաև հայկական ընդդիմության լուծումները: Այս թեմաներով Հայաստանի ներքաղաքական դաշտում վերջին շրջանում բավական ակտիվ քննարկումներ են ընթանում: Հատկապես ուշագրավ էր ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ Իշխան Սաղաթելյանի՝ սեպտեմբերի 14-ին Հայաստանի նախկին նախագահներին, Վեհափառ հայրապետին և ընդհանրապես բոլոր կարող ուժերին արված առաջարկը՝ հանդես գալ միասնական ճակատով, վարչապետի պաշտոնից հեռացնել Նիկոլ Փաշինյանին և, միավորելով ազգային ողջ ռեսուրսը, լուծել Հայաստանի և Արցախի առջև ծառացած խնդիրները[5]: Այս կոչից հետո Սաղաթելյանը բավական ծավալուն ու դժվար աշխատանք է տարել և կարողացել է համոզել կաթողիկոսին, ՀՀ ու Արցախի նախկին նախագահներին նստել մեկ սեղանի շուրջ ու ելքեր փնտրել: Այդ հանդիպումը տեղի է ունեցել սեպտեմբերի 22-ին Մայր Աթոռում: Սակայն, ցավոք, մինչ այս պահը հանդիպման մասնակիցները որևէ արդյունքի չեն հասել և որևէ առաջարկով հանդես չեն եկել: Ավելին՝ պարզ դարձավ, որ ստեղծված իրավիճակում Լևոն Տեր-Պետրոսյանի առաջարկը Փաշինյանին աջակցելն ու նոր կապիտուլյացիա ստորագրելն է[6]: Մինչդեռ Հայաստանն արտաքին մարտահրավերներին դիմակայելու թե՛ ներքին և թե՛ արտաքին բավական մեծ ներուժ ունի: Հարցն այդ ռեսուրսը կազմակերպելն ու երկրի անվտանգային խնդիրներին ծառայեցնելն է: Սակայն սա մի ճանապարհ է, որով իշխանությունները չեն ցանկանում գնալ, իսկ ընդդիմությունը դեռևս չի կարող:

Մեկ այլ կարևոր խնդիր է Հայաստանի արտաքին միջավայրը: Ինչպես հայտնի է, 2013 թ. սկիզբ առած ռուս-ուկրաինական ճգնաժամը խափանել է մեր տարածաշրջանում Ռուսաստանի և Արևմուտքի՝ նախկինում բավական կայուն հիմքերի վրա դրված համագործակցությունը: Ըստ էության, արդեն 2014 թ. առաջին ամիսներից աշխարհաքաղաքական այդ երկու կենտրոնները դադարել են Հարավային Կովկասում հակամարտությունների զսպման մեխանիզմների գործադրման հարցում իրենց կարևոր բաժինը կատարելուց: 2014 թվականից ընդհուպ մինչև 2020 թ. 44-օրյա պատերազմը այդ գործառույթը կատարել են բացառապես հայկական զինված ուժերը: 2020 թ. վերջից փոխվել է ոչ միայն այդ իրողությունը, այլև ընդհանրապես մեր տարածաշրջանի ողջ աշխարհաքաղաքականությունը: Փոխվել են նաև ուժերի հարաբերակցությունը, հակամարտությունների զսպման մեխանիզմները, տարածաշրջանային պետությունների ձգտումներն ու ախորժակները, հարևան տերությունների շահերն ու հնարավորությունները: Այդ փոփոխություններն էլ ավելի ակնհայտ դարձան սույն թվականի փետրվարի վերջին Ռուսաստանի՝ Ուկրաինայում ռազմական հատուկ գործողություն սկսելու հետևանքով: Հիմա արդեն պարզ է, և ռուսական դիվանագիտական ու փորձագիտական շրջանակները այլևս չեն էլ փորձում թաքցնել, որ Հարավային Կովկասում, ի դեմս Թուրքիայի, ի հայտ է եկել նոր մեծ և ուժեղ դերակատար: Իսկ սա նշանակում է, որ Հայաստանը պարտավոր է անվտանգային նոր հայեցակարգ մշակել ու ստեղծված իրողություններին համարժեք քաղաքականություն վարել:

Ռուս-ուկրաինական պատերազմը հնարավորինս լավ բացահայտում է նոր իրողությունների տրամաբանությունը: Այսպես՝ ս.թ. մարտի վերջին, երբ պարզ դարձավ, որ Ռուսաստանը չի կարող արագ լուծել Ուկրաինայում իր առջև դրված ռազմական խնդիրները, Ադրբեջանի զինված ուժերն Արցախում ներխուժեցին ռուս խաղաղապահների պատասխանատվության գոտի և գրավեցին Փարուխ գյուղն ու Քարագլուխ ռազմավարական բարձունքը: Իսկ սեպտեմբերի կեսերին, երբ ռուսական բանակը մի շարք պարտություններ կրեց Խարկովի ուղղությամբ, Ադրբեջանը հարձակվեց Հայաստանի արևելյան սահմանների վրա, և քիչ էր մնում՝ գրավեր Ջերմուկ քաղաքը: Ակնհայտ է, որ թուրք-ադրբեջանական դաշինքն իր գործողությունները դիտարկում է աշխարհաքաղաքական վերափոխումների լույսի

ներքո և ներդաշնակեցնում իր քայլերն այն իրողությունների հետ, որոնք ձևավորվում են հարակից տարածաշրջաններում: Սա գլոբալ նշանակության մի գործընթաց է, որի հետևանքով, ըստ տարածված կարծիքի, ձևավորվելու է նոր աշխարհակարգ: Պարզ է, որ վերջին տարիներին տնտեսական և քաղաքական մեծ հնարավորություններ ձեռք բերած Թուրքիան ամեն ինչ անելու է աշխարհաքաղաքական այդ մրցավազքում առավելագույն արդյունքների հասնելու համար: Այդ է պատճառը, որ Ռուսաստանի յուրաքանչյուր ձախողում թուրք-ադրբեջանական դաշինքին մեր տարածաշրջանում էլ ավելի ուժեղանալու, նոր դիրքեր գրավելու և սեփական հնարավորություններն ավելացնելու առիթ է տալիս:

Պաշտոնական Երևանը սա կարծես չի նկատում: Արցախի և ընդհանրապես մեր տարածաշրջանի խնդիրները Փաշինյանի կառավարությունը դիտարկում է բացառապես հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերությունների տիրույթում՝ հընթացս փորձելով իր համար լուծումներ գտնել մե՛կ Մոսկվայում, մե՛կ Բրյուսելում և մե՛կ Վաշինգտոնում: ՀՀ իշխանություններն այդպես էլ չհասկացան, որ եկել է ընտրություն կատարելու ժամանակը: Ադրբեջանը, օրինակ, այդ ընտրությունն արդեն կատարել է. Ալիևն իր երկրի ապագան տեսնում է փոփոխվող այս աշխարհում Թուրքիայի կողմից ձևավորվող նոր աշխարհաքաղաքական բևեռում: Այդ է պատճառը, որ Ալիևը չի խորշում ժամանակ առ ժամանակ դեմ գնալ Ռուսաստանի տարածաշրջանային շահերին և նույնիսկ հակամարտության մեջ մտնել Կրեմլի հետ: Հայաստանում նման որոշում չկա: Փաշինյանը կարող է գնալ և «համբուրել» Պուտինի ձեռքերը, իսկ հաջորդ պահին լուրջ հարված հասցնել նույն Ռուսաստանին: Նույն կերպ է Փաշինյանն աշխատում նաև Իրանի հետ, որը, ի դեպ, վերջին մեկ տարվա ընթացքում սկսել է հանդես գալ որպես Հայաստանի ֆիզիկական անվտանգության ապահովման բավական ազդեցիկ դերակատար:

Մեր տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական պայքարում լուրջ դերակատարում է ստանձնել նաև Արևմուտքը, որի հիմնական խնդիրը Հարավային Կովկասից Ռուսաստանի դուրսմղումն է: Փաշինյանի կառավարությունն անմասն չէ նաև այս զարգացումներից: Համենայնդեպս, ակնհայտ է, որ վերջին ամիսներին հայկական կողմն ավելի ակտիվ համագործակցում է հենց Բրյուսելի, Փարիզի և Վաշինգտոնի հետ: Ընդ որում, կարևոր է նշել, որ այդ համագործակցությունն ընթանում է հենց Արևմուտքի քաղաքական օրակարգերի շրջանակներում: Հայկական շահն այստեղ նույնպես իսպառ բացակայում է: Ամեն դեպքում արդեն փաստ է, որ Ադրբեջանի «տարածքային ամբողջականությունը» Հայաստանը ճանաչել է Պրահայում կայացած «Եվրոպական քաղաքական համայնքի» առաջին հանդիպման ժամանակ՝ Ֆրանսիայի և ԵԽ նախագահների անմիջական մասնակցությամբ տեղի ունեցած Ալիև-Փաշինյան հանդիպմանն ի հետևանք:

Իհարկե, վերոնշյալ փաստերը չեն նշանակում, թե հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման ռուսական առաջարկները, որոնք, ըստ ՌԴ ԱԳՆ-ի, արդեն փոխանցվել են Հայաստանին ու Ադրբեջանին, ավելի լավն են, քան Արևմուտքինը: Դա այդպես չէ: Բայց այստեղ կարևորն այն է, որ Նիկոլ Փաշինյանի կառավարությունը զբաղված է ոչ թե հայամետ, այլ իր համար նվազագույնս ցավոտ լուծումների որոնումով: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, Հայաստանն ունի մարտահրավերներին դիմագրավելու ներքին և արտաքին լուծումներ: Օրինակ՝ պաշտոնական Երևանը կարող է և պարտավոր է կրկին քաղաքական օրակարգ վերադարձնել ուժի կամ ուժի սպառնալիքի բացառման սկզբունքը կամ նվազագույնը զբաղվել սեփական զինված ուժերի վերականգնման և վերակազմակերպման խիստ անհրաժեշտ գործով: Ինչո՞ւ այս ամենը չի արվում: Կարծում եմ՝ պատասխանն ակնհայտ է. Փաշինյանին ու իր թիմակիցներին հետաքրքրում է բացառապես սեփական իշխանությունը:

Ստեղծված իրավիճակից ելքերի մասին արդեն բավական շատ է խոսվել: Առաջին քայլը, անկասկած, դավաճան իշխանությունների հեռացումն է: Սակայն մենք տեսնում ենք, որ չափազանց ակնհայտ այս քայլը, տարբեր, կարծում եմ՝ հիմնականում արտաքին գործոններով պայմանավորված, հետաձգվում է: Ցավոք, հայ քաղաքական էլիտաները մինչ այս պահը բացարձակ անկարողություն և թուլություն են հանդես բերել: Շատ ուղիղ եմ ուզում ասել՝ ես չեմ կարող և չեմ ուզում հավատալ, որ կաթողիկոսի, նախագահների, մտավորականների այսչափ հանդիպումներից ոչ մի առաջարկ, բացի Լևոն Տեր-Պետրոսյանի կապիտուլյացիայի օրակարգից, չի ծնվում: Չի կարող նման բան լինել: Սա աներևակայելի փաստ է: Եվ որքան ուշանում է այդ առաջարկը, այնքան Հայաստանի վիճակն ավելի օրհասական է դառնում: ■

Հղումներ

1. 1. Վարչապետ Փաշինյանի, նախագահ Ալիևի, նախագահ Մակրոնի և նախագահ Միշելի՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ին կայացած հանդիպման հայտարարությունը, 06.10.2022, https://www.primeminister.am/hy/press-release/item/2022/10/07/Nikol-Pashinyan-Announcement/ (մուտք՝ 08.10.2022):
2. 2. Երևանը հայտարարում է Ստեփանակերտի և Բաքվի միջև քննարկումների մեխանիզմների մասին, 03.10.2022, https://www.azatutyun.am/a/32062951.html (մուտք՝ 04.10.2022):
3. 3. Ի գիտություն Վեհափառ հայրապետի, 3 նախագահների և փորձագիտական հանրության. ինչ է ուզում Ադրբեջանը, 03.10.2022, https://armtimes.com/hy/article/245285 (մուտք՝ 04.10.2022):
4. 4. Ստորագրելու ենք մի թուղթ, որի արդյունքում լիքը մարդ դավաճան կասի. չի հետաքրքրում՝ ինչ կլինի ինձ հետ. Փաշինյան, 14.09.2022, https://lurer.com/?p=481372&l=am (մուտք՝ 15.09.2022):
5. 5. Վիճակն օրհասական է, մեկ սեղանի շուրջ պետք է հավաքվեն ՀՀ նախկին նախագահները, պաշտպանության նախարարները, կաթողիկոսը Իշխան Սաղաթելյան, 13.09.2022, https://www.tert.am/am/news/2022/09/13/saghatelyan/3839144 (մուտք՝ 15.09.2022):
6. 6. Եկել է հազարապատիկ լրջանալու պահը: Հարցազրույց Լևոն Տեր-Պետրոսյանի հետ, 26.09.2022, Հանրային հեռուստաընկերություն, Լուրեր, https://youtu.be/kTeWytVBdVI (մուտք՝ 27.09.2022):

«ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքը». ՆԱՏՕ-ի և միջազգային սիոնիզմի դավադրությունն ընդդեմ Իրանի, Ռուսաստանի և Չինաստանի

Թեհրան – «ԻՌՆԱ» պետական լրատվական գործակալության հարցազրույցը Ահմադ Քազեմիի հետ.

Դոկտոր Ահմադ Քազեմի. Միջազգային իրավունքի և եվրասիական հարցերի փորձագետ

– Ղարաբաղյան երկրորդ պատերազմի սցենարից անցել է ավելի քան 22 ամիս: «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» հարցը, որը Ադրբեջանի Հանրապետությունը և Թուրքիան անհիմն կերպով անվանում են «Զանգեզուրի միջանցք», շարունակում է մնալ ՆԱՏՕ-ի և հատկապես Միացյալ Թագավորության ու միջազգային սիոնիզմի օրակարգում, որն էլ իրականացվում է Բաքվի և Անկարայի անմիջական գործակցությամբ:

– Ղարաբաղյան երկրորդ պատերազմում Ղարաբաղի ազատագրման նպատակը իրականում քող էր «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» նախագծի իրականացման համար, ինչը մինչ այս ձախողվել է: Այս պնդման ապացույցն այն է, որ եթե Ադրբեջանի Հանրապետությունն իսկապես ունենար Ղարաբաղի ազատագրման «ինքնուրույն կամք», տրամաբանորեն 26 տարվա ընթացքում՝ 1994 թ. զինադադարից սկսած մինչև 2020 թվականը, թեկուզ սահմանափակ, սակայն որոշակի քայլեր պետք է ձեռնարկեր այդ ուղղությամբ և ոչ թե իմանալով ԱՄՆ-ի, Միացյալ Թագավորության և Ֆրանսիայի բացասական վերաբերմունքի մասին՝ ռազմական գործողությունների առնչությամբ պնդեր Մինսկի խմբի գործունեությունը շարունակելու հարցում և, դադարեցնելով հակահիրանական քարոզչությունը, պետք է դրականորեն արձագանքեր բռնագրավյալ տարածքների ազատագրման վերաբերյալ Թեհրանի առաջարկին: Առ այդ թվում է, որ եվրասիական իրադարձությունների հարցում հիմնական խաղացողների ստանդարտ մոտեցումների փոփոխության հետևանքով Ղարաբաղը ևս 2020 թ. սկսած վերածվել է ՆԱՏՕ-ի և միջազգային սիոնիզմի աշխարհաքաղաքական նպատակների իրագործման միջոցի, որոնց առանցքում Իրանի, Ռուսաստանի և Չինաստանի հիմնարար շահերին հարվածելու նպատակով «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» ստեղծումն է:

Այս համատեքստում կարևոր է անդրադառնալ երկու կետի. առաջին՝ «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցք»-ի փոխարեն «Զանգեզուրի միջանցք» կեղծ եզրի օգտագործումը պատմական, քաղաքական և իրավական առումներով սխալ է, քանի որ «Զանգեզուրի միջանցք» կամ ավելի ստույգ՝ «Արևմտյան Զանգեզուր» կեղծ եզրը, որը մոգոնել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, վերաբերում է Հայաստանի հարավային մարզ Սյունիքին, որը Իրան-Հայաստան սահմանային գոտին է: Իրականում այս եզրը պարունակում է Բաքվի տարածքային նկրտումները Հայաստանի Սյունիքի մարզի նկատմամբ: Ադրբեջանի Հանրապետության ղեկավարության տրամաբանությունն այն է, որ այդ շրջանը (Սյունիքը) 1922 թ. ԽՍՀՄ-ի կողմից հանձնվել է Հայաստանին: Եթե առաջնորդվենք այս տրամաբանությամբ, ապա կան բազմաթիվ նմանատիպ տարածքներ, այդ թվում՝ Կովկասը՝ Ադրբեջանի Հանրապետությունը ներառյալ, որոնք 1828 թ. անջատվել են Իրանից և կցվել Ռուսական կայսրությանը: Իգդիրը, Կարսը և Ղարասուի միջանցքը, որոնք բոլորն էլ պատկանել են Իրանին, 1931 թ. առանց որևէ իրավական հիմնավորման հանձնվել են Թուրքիային: Կամ՝ Օսմանյան կայսրության կողմից 1920 թ. ստորագրված Սևրի պայմանագրի համաձայն՝ այդ կայսրության հարավարևելյան 6 նահանգները «Արևմտյան Հայաստան» անվամբ պատկանում են հայերին: Բնականաբար, եթե առաջնորդվենք Բաքվի տրամաբանությամբ, այս բոլոր տարածքները պետք է վերադարձվեն իրենց պատմական տերերին:

Սա է պատճառը, որ միջազգային իրավուն-քը Արդարադատության միջազգային դատարանի վճիռներում շեշտում է՝ պատմական իրադարձությունները, որոնք հետագայում ենթարկվել են միջազգային հարաբերություններում գրանցված փոփոխություններին, չեն կարող դառնալ տարածքային պահանջատիրության հիմք: Առ այդ Հայաստանի հարավային շրջանի նկատմամբ «Զանգեզուր» եզրույթի կիրառումը նշանակում է այդ երկրի տարածքային ամբողջականության խախտում և հակասում է ՄԱԿ-ի կանոնադրության 4-րդ հոդվածին: Հետևաբար «Զանգեզուրի միջանցք»

կեղծ եզրույթի կիրառումը, որը, ցավոք, ակամա գործածվում է իրանական որոշ լրատվական և վերլուծական հրապարակումներում, որոնցում հղում է արվում Բաքվի և Անկարայի պաշտոնյաներին, և միտումնավոր տիրաժավորվում պանթուրքիստական լոբբիստական շրջանակների կողմից, քաղաքական, իրավական և պատմական առումներով սխալ է: Որևէ կեղծ եզրույթ «ահաբեկչություն» երևույթի պես չի կարող լավը կամ վատը լինել: Ինչպես «Արաբական ծոց» կամ «Հարավային Ադրբեջան» կեղծ եզրույթների կիրառումն է անընդունելի, նույնպես էլ «Զանգեզուրի միջանցք» եզրույթի: Թվում է, թե այս կեղծ եզրույթի լավագույն այլընտրանքը «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցք» անվանումն է, որը ես օգտագործել եմ դեռևս 22 ամիս առաջ: Քանի որ նախ՝ «թուրանական» այս միջանցքի ստեղծումը անմիջականորեն ուղղված է Իրանի, Ռուսաստանի և Չինաստանի դեմ, և երկրորդ՝ այս նախագծի իրականացումը վեր է Ադրբեջանի ու Թուրքիայի ուժերից: Կուլիսներում բրիտանական գաղութատիրությունն է, որն ավելի քան 200 տարի ձևավորել ու զարգացրել է պանթուրքիստական գաղափարախոսությունը հրեական ծագումով անգլիացի այնպիսի տեսաբանների միջոցով, ինչպիսիք են Քոենը և Արթուր Լյումլեն: Ի դեպ, սա նույն գաղափարախոսությունն է, որն ընկած էր Օսմանյան կայսրության փլուզման հիմքում: Հաջորդն այն է, որ Բաքվի հղումը 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության 9-րդ կետին զուրկ է որևէ իրավական հիմքից, քանի որ, հակառակ հայտարարության 6-րդ կետի, որում հստակորեն նշված է Հայաստանի և Ղարաբաղի միջև 5 կմ լայնությամբ Լաչինի միջանցքի ստեղծման մասին, 9-րդ և 10-րդ կետերում խոսվում է միայն հաղորդակցական ուղիների վերաբացման և կառուցման մասին, որոնց առումով որևէ հստակ տեղանք նշված չէ: Եվ այս ուղիները Հայաստանի հարավային շրջանի փոխարեն կարող են անցնել Ադրբեջանի Հանրապետության հյուսիսային շրջանով՝ Ղազախով, որը կապող ճանապարհներ ունի Հայաստանի և Նախիջևանի հետ: Միևնույն ժամանակ հաղորդակցական այդ ուղիները պետք է գտնվեն տվյալ երկրի (Հայաստանի) իշխանության ներքո այն դեպքում, երբ Լաչինի միջանցքի առնչությամբ հրադադարի համաձայնագրում Բաքվի վերահսկողության մասին որևէ խոսք չկա: Մյուս կողմից՝ Լաչինի միջանցքի և, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» կարգավիճակների համահարթեցումը, որն ուղեկցվում է Բաքվի կողմից Երևանի նկատմամբ հոգեբանական ու մեդիա շանտաժներով և քաղաքական ու ռազմական ճնշումներով, իրավաբանական մեկ այլ դիտանկյունից ևս խոցելի է: Դա վերաբերում է Լաչինի միջանցքի իրավական ճակատագրի և Ղարաբաղի իրավական կարգավիճակի նույնությանը, որը կառուցված է Լեռնային Ղարաբաղի լայն ինքնավարության (գոնե այնպիսին, ինչպիսին Նախիջևանի պարագայում է) առանցքի շուրջ: Կարգավիճակ, որն ընդունվել է Ադրբեջանի Հանրապետության կողմից ԵԱՀԿ լիսաբոնյան գագաթնաժողովի ժամանակ՝ 1996 թ.,

և որի տրամադրման մասին Բաքուն բազմիցս իր պատրաստակամությունն է հայտնել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին: Մինչդեռ այսօր պաշտոնական Բաքվի դիրքորոշումը փոփոխության է ենթարկվել, և Ադրբեջանի նախագահը շեշտում է Ղարաբաղին որևէ իրավական կարգավիճակ չտրամադրելու մասին: Բնական է, որ Ղարաբաղի իրավական կարգավիճակի բացակայության դեպքում հայերի համար Լաչինի միջանցքը կորցնում է իր իրավական նշանակությունը:

Այն, որ, չնայած Ղարաբաղի հիմնահարցի կարգավորված չլինելուն, Ադրբեջանի Հանրապետությունը կենտրոնացած է «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» միջոցով Իրանի և Հայաստանի միջև սահմանային կապի խզման վրա, պայմանավորված է մեկ այլ՝ ավելի մեծ դավադրությամբ, որը տարիներ ի վեր նախագծվել է ՆԱՏՕ-ի անվտանգային ուղեղային կենտրոններում՝ Միացյալ Թագավորության և միջազգային սիոնիզմի առանցքային դերակատարությամբ, և որի իրականացման համար մշակվել են գործնական ուղիներ: Նրանց տեսանկյունից Ռուսաստանը, Չինաստանը և Իրանը ՆԱՏՕ-ի երեք հիմնական ախոյաններն են, որոնց միջև դաշինքի ձևավորումը կնշանակի Արևմուտքի դեմ տարածաշրջանային նոր համակարգի ստեղծում:

Եվ քանի որ Կովկասը և Կենտրոնական Ասիան համարվում են աշխարհի աշխարհաքաղաքական զարգացումների կենտրոնը, միակ տարածաշրջանն են, որտեղ համընկնում են այս երեք տերությունների շահերը, ուստի աշխարհագրական ամենանպաստավոր կենտրոնն են Իրանին, Ռուսաստանին և Չինաստանին հարվածելու համար, ինչի շարժիչ ուժը պանթուրանական գաղափարախոսությունն է: Աշխարհաքաղաքական փոփոխությունների այս գործընթացում պանթուրանիզմը և թուրանական միջանցքը պետք է գործեն այնպես, ինչպես նացիզմը և Հիտլերի Դանցինգի միջանցքը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ:

«ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքը», վերացնելով Իրանի և Հայաստանի միջև սահմանը,

պետք է ապահովի պանթուրանական շղթայի աշխարհագրական ձևավորումը Թուրքիայից մինչև Ադրբեջանի Հանրապետություն և Կենտրոնական Ասիա՝ միջազգային սիոնիզմի և ՆԱՏՕ-ի տրամաբանության շրջանակներում երաշխավորելով Իրանի, Ռուսաստանի և Չինաստանի կենսական շահերին վճռական հարվածի արդյունավետությունը ներքոնշյալ 4 ոլորտներում:

Տարանցիկ հաղորդակցությունների ոլորտ. Ռուսաստանը, Չինաստանը և Իրանը ներկա պահի դրությամբ համագործակցում են տարանցիկ 4 մեծ նախագծերի (Մետաքսի ճանապարհի վերականգնման, հյուսիս-հարավ միջանցքի, Պարսից ծոց-Սև ծով միջանցքի և ԷԿՕ-ի միջանցքի) շրջանակներում:

«ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» շրջանակում Անկարայի միջոցով պետք է ստեղծվի «Լազուրի միջանցքը», որը պետք է ձգվի Թուրքիայից մինչև Կովկաս, Կենտրոնական Ասիա, Աֆղանստան և Պակիստան՝ ընդհատելով և թուլացնելով 4 տարանցիկ միջանցքները: Այս միջանցքը կարևորվում է նրանով, որ ամերիկյան ուղեղային կենտրոնները հայտարարել են, որ ԱՄՆ-ի համար Չինաստանի նախագիծը («Մեկ ճանապարհ, մեկ գոտի») շատ ավելի վտանգավոր է, քան նրա ռազմական ներուժը: Այն, որ Թուրքիան և Ադրբեջանը պնդում են, այսպես կոչված, Թուրքալեզու երկրների համագործակցության խորհրդին դիտորդի կարգավիճակով պարսկափուշտունալեզու Աֆղանստանի անդամակցության հարցում, բխում է Աֆղանստանի առանցքային դերակատարությունից, որը նախատեսված է «Լազուրի միջանցքում»:

Էներգետիկայի ոլորտ. «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքը» պետք է Ուզբեկստանի, Ղազախստանի և Թուրքմենստանի գազը Կասպից ծովով Բաքու հասցնի: Ներկա պահի դրությամբ գործում է Ադրբեջանի գազը Եվրոպա հասցնող՝ Բաքվից Իտալիա ձգվող գազամուղը: Ադրբեջանը, սակայն, չի կարողանում ապահովել գազամուղի ամբողջական թողունակությունը: «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» ծրագրի իրականացման և դրա շրջանակում միջինասիական վերոնշյալ երեք երկրների գազի հոսքի ապահովման դեպքում Եվրոպան այլևս ռուսական («Նորդ Սթրիմ» գազամուղ) և իրանական գազի («Նաբուկո» նախագիծ) կարիքը չի ունենա, ինչը զգալիորեն կթուլացնի էներգետիկայի ոլորտում Ռուսաստանի և Իրանի աշխարհաքաղաքական դիրքերը և միևնույն ժամանակ լուրջ խնդիրներ կբստեղծի Չինաստանի համար Կենտրոնական Ասիայից, հատկապես Թուրքմենստանից իրեն անհրաժեշտ գազի ծավալների ապահովման հարցում:

Ազգային հարցերի ոլորտ. նախատեսվում է, որ «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքը», հենվելով վերջին տասնամյակների ընթացքում Անկարայի և Բաքվի կողմից ազերիների, թուրքմենների, թաթարների և ույղուրների շրջանում հրահրված ազգայնական խնդրի վրա, կձևավորի պանթուրքիզմի հիմքի վրա ազգայնական լուրջ շարժում Իրանի ազերիաբնակ ու թուրքմենաբնակ շրջաններում, Չինաստանի ույղուրաբնակ շրջանում և Ռուսաստանի թաթարաբնակ ու թուրքաբնակ շրջաններում:

ՆԱՏՕ-ի ընդլայնման ոլորտ. թուրանական միջանցքի միջոցով ՆԱՏՕ-ն պետք է ուղղակիորեն ներթափանցի Իրանի հյուսիսային, Ռուսաստանի հարավային և Չինաստանի արևելյան սահմաններ՝ ամբողջացնելով այդ երկրների ամբողջական շրջափակման նախագիծը, որը հող է նախապատրաստելու դրանց կազմաքանդման համար: Իրականությունն այն է, որ Խորհրդային Միության փլուզումից հետո դեպի արևելք ընդլայնվելու ՆԱՏՕ-ի ցանկությունը երբեք էլ չի մարել: Վերանայելով իր միջազգային դերակատարությունը՝ ՆԱՏՕ-ն երբևէ մտադիր չի եղել հրաժարվել այնպիսի տարածաշրջաններից, ինչպիսիք են Կովկասը և Կենտրոնական Ասիան: Ինչ-պես ասել է ՆԱՏՕ-ում Միացյալ Թագավորության նախկին ներկայացուցիչ Ադամ Թոմսոնը, թուրանական միջանցքը ՆԱՏՕ-ն կհասցնի մինչև Չինաստանի արևմտյան սահմաններ:

Պարզամտություն կլինի ընդունել այն տեսակետը, թե ՆԱՏՕ-ին Թուրքիայի անդամակցությամբ պայմանավորված՝ այդ կազմակերպությանը անհրաժեշտ չէ անմիջական ներկայություն այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսիք են Կովկասը և Կենտրոնական Ասիան: Քանի որ նախ՝ նման տրամաբանությամբ ՆԱՏՕ-ն չպետք է ձգտեր ընդլայնվելու դեպի Ուկրաինա, Շվեդիա և Ֆինլանդիա՝ Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ ներքաշվելու գնով: Քանզի Ռուսաստանի մյուս հարևանները՝ մերձբալթյան երեք հանրապետությունները, սկսած 2004 թվականից, և Լեհաստանը (Ռուսաստանի Կալինինգրադի մարզի հարևանը), սկսած 1999 թվականից, ՆԱՏՕ-ի անդամներ են: Երկրորդ՝ ՆԱՏՕ-ի գլխավոր նպատակներից մեկը Ռուսաստանի, Չինաստանի և Իրանի շրջափակումն է: Ըստ էության, ՆԱՏՕ-ի ներկայությունը Կովկասում և Կենտրոնական Ասիայում կլրացնի Ռուսաստանի՝ Սև ծովի կողմից, Չինաստանի՝ Հարավչինական ծովի կողմից և Իրանի՝ Պարսից ծոցի կողմից շրջափակումը: Երրորդ՝ ՆԱՏՕ-ի նպատակների սահմանման շրջանակում («ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքը») Թուրքալեզու երկրների կազմակերպության հզորացման և դրա շրջանակում, այսպես կոչված, «Թյուրքական ՆԱՏՕ-ի» ստեղծման նախապայմանն է այնպես, ինչպես Պարսից ծոցի համագործակցության կազմակերպության շրջանակում «Արաբական ՆԱՏՕ-ի» ստեղծումն է:

Հենց այդ պատճառով էլ վերջին տասնամյակների ընթացքում, չնայած Ռուսաստանի զգայնությանը, ՆԱՏՕ-ն չի բավարարվել Թուրքիայի անդամակցությամբ և շարունակել է ընդլայնումը դեպի արևելք այնպիսի ծրագրերի շրջանակներում, ինչպիսիք են «Գործընկերություն հանուն խաղաղության», «ՆԱՏՕ-ի հետ անհատական գործընկերության» կամ «Բաց երկնքի» ծրագրերը:

Հաշվի առնելով («ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի») վերոնշյալ չորս հակագործառույթները՝

ակնհայտ է դառնում, թե որն է այս միջանցքի ստեղծման հարցում համառության պատճառը, և ինչու է ոգևորված Բաքուն, ինչը նաև մեծապես պայմանավորված է Միացյալ Թագավորության և Իսրայելի հովանավորությամբ:

Վերոնշյալ հակագործառույթներից բացի՝ «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքը» որոշակի հետևանք-ներ կունենա հատկապես Իրանի համար: Այս միջանցքի ծրագրի շրջանակում նախատեսվում է Հայաստանի հարավում կառուցել նոր գազամուղ, որը գործնականում առ ոչինչ կդարձնի դեպի Նախիջևան, Թուրքիա և նույնիսկ Հայաստան իրանական գազի արտահանումը, կչեզոքացնի Իրանի տարածքով դեպի Ադրբեջան թուրքմենական գազի սվափը, նաև խիստ բացասական ազդեցություն կունենա Թուրքիայից դեպի Ադրբեջան և Կենտրոնական Ասիա Իրանի տարանցիկ աշխարհաքաղաքական նշանակության վրա:

Միևնույն ժամանակ «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքը» կխթանի ազերիական ինքնության տարրալուծումը պանթուրքիստական գաղափարախոսության մեջ: Այս երևույթը հետապնդում է 2 գլխավոր նպատակ. առաջին՝ չեզոքացնել կամ վերացնել ազերիական ինքնությունը, որը պատմության ընթացքում դիմակայել է անատոլիական-թուրքական-հանաֆիական ինքնությանը՝ այն փոխարինելով թուրքական-անատոլիական ինքնությամբ: Մյուս կողմից՝ ազերիական ինքնության կերպափոխումը թուրքականի կնպաստի ազերիների շրջանում շիիզմի վերացմանը: Հենց այս պատճառով էլ չափազանց կարևոր է բոլոր իրանցիների, հատկապես Իրանի ազերիների (որոնք պատմության ընթացքում մշտապես եղել են իրանական քաղաքակրթության և շիիզմի պաշտպանները Կովկասում) դիմակայությունն այս դավադրական ծրագրին, որի շրջանակում էլ պետք է դիտարկել պանթուրքիստների, այսպես կոչված, «Հարավային Ադրբեջան» նողկալի ծրագիրը:

Հենց այս պատճառով էլ Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո Ադրբեջանի Հանրապետությունում սկսվել է ադրբեջանական ինքնության թուլացումը, և Բաքվի պետական, քաղաքական, անվտանգային և մեդիա շրջանակների օրակարգում է հայտնվել այդ ինքնության թուրքացման ծրագիրը: Սա այն դեպքում, երբ Ադրբեջանի խորհրդարանի 1996 թ. ընդունած բանաձևով ազերիական ինքնությունը հստակորեն տարանջատվել է անատոլիական-թուրքական ինքնությունից: Ըստ այդմ՝ կարելի է նշել, որ «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» ստեղծման գլխավոր նպատակներից մեկը Իրանի, Ադրբեջանի և Կովկասի միջև պատմական, մշակութային և կրոնական խզում առաջացնելն է, ինչը համապատասխանում է միջազգային սիոնիզմի նպատակներին:

Հենց այս հանգամանքը հաշվի առնելով՝ Իրանի հոգևոր առաջնորդը Թեհրանում կայացած Աստանայի գործընթացի անդամ երկրների գագաթնաժողովի ընթացքում Ռեջեփ Թայիփ Էրդողանի և Վլադիմիր Պուտինի հետ առանձին հանդիպումների ժամանակ նշեց, որ չի հանդուրժելու որևէ ծրագիր, որը կվերացնի Իրանի և Հայաստանի միջև եղած սահմանը: Այս կերպ Իրանի հոգևոր առաջնորդը հստակորեն և բացահայտորեն նշեց, որ Իրանը դեմ է «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքին», և դա Իրանի անփոփոխ կարմիր գիծն է: Այնուհետև՝ օգոստոսի 19-ին, Հայաստանի վարչապետի հետ հեռախոսազրույցի ընթացքում նախագահ Ռեիսին, կարևորելով Իրան-Հայաստան սահմանային գոտին, շեշտեց, որ Իրանի համար անընդունելի է տարածաշրջանի քաղաքական քարտեզի որևէ փոփոխություն, և Իրանը պատրաստ է իր ողջ ներուժը ներդնելու Կովկասում խաղաղության և կայունության հաստատման գործում: Վերոնշյալ մոտեցումներից պարզ է դառնում, որ Իրանը որևէ կերպ թույլ չի տա, որ ստեղծվի «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքը», ինչի նպատակն է փոփոխության ենթարկել տարածաշրջանի աշխարհաքաղաքական քարտեզն ու կազմաքանդել տարածաշրջանի երկրները:

Վերջում անհրաժեշտ է անդրադառնալ այս թեմային վերաբերող 4 հարցի:

Առաջին. «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքը» ինչպես Իրանի, այնպես էլ Ռուսաստանի և Չինաստանի դեմ է: Ադրբեջանի և Թուրքիայի հետ կապված պանթուրքիստական կառույցները փորձում են ցույց տալ, թե իբր Մոսկվան կողմ է այդ միջանցքի ստեղծմանը: Նրանց վկայակոչումը ռուս պաշտոնանկ արված մի զինվորականի, որը հայտնի է պանթուրքիստական շրջանակների հետ իր համագործակցությամբ, փաստում է, որ պանթուրքիստները որևէ առիթ բաց չեն թողնում մոլորեցնելու իրանցի պաշտոնյաներին: Իրականությունն այն է, որ ռուս-վրացական պատերազմում (2008 թ.) Ուկրաինայի դեմ պատերազմը, ինչպես նաև ռուսական ուժերի մասնակցությունը 2021 թ. Ղազախստանում տեղի ունեցած քաղաքացիական անկարգությունների ճնշմանը փաստում են, որ Ռուսաստանը անտարբեր չի անցնելու «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» ստեղծման փորձերի կողքով: Այն, որ այս միջանցքը, Ադրբեջանի, Թուրքիայի և ՆԱՏՕ-ի կողմից Հայաստանի արևմտամետ իշխանությունների վրա 22 ամիս շարունակ գործադրված ռազմական, քաղաքական և անվտանգային ճնշումներով հանդերձ, դեռևս կյանքի չի կոչվել, որոշակիորեն պայմանավորված է Ռուսաստանի դիրքորոշմամբ: Ուկրաինական պատերազմի առաջին օրերին Ռուսաստանի հետ դաշնակիցների հայտարարությանը միանալու Ադրբեջանի նախագահի հապճեպ քայլը վկայում է այն մասին, որ պաշտոնական Բաքուն չէր ցանկանում, որ Մոսկվայում տպավորություն ստեղծվեր, թե Ադրբեջանը փորձում է նպաստել ՆԱՏՕ-ի ներթափանցմանը տարածաշրջան: Ներկա պահի դրությամբ Ռուսաստանը հաստատված է Ղարաբաղում և ունի տարածաշրջանային իրադարձությունների վրա ազդելու գլխավոր լծակները: Միևնույն ժամանակ Թուրքիայի հետ Սև ծովի իրավական կարգավիճակի, էներգակիրների և առևտրատնտեսական հարաբերությունների առնչությամբ ունի վերապահումներ և հենց այդ

պատճառով խուսափում է «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» շուրջ ավելորդ աղմուկից:

Երկրորդ. «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» ստեղծումը կնպաստի տարածաշրջանում պանթուրքիզմի կտրուկ հզորացմանը, կհարվածի Հայաստանի տարածքային ամբողջականությանը՝ վտանգելով այդ երկրի պետականության գոյությունը:

Առ այդ, բոլոր պնդումներով հանդերձ, Հայաստանի որևէ կառավարություն չի կարող ստորագրել նման ստորացուցիչ պայմանագիր և շարունակել գոյատևել: Հենց այդ պատճառով էլ, Հայաստանի համար ենթադրյալ տնտեսական առավելությունների վերաբերյալ Բաքվի և Անկարայի բոլոր պնդումներով հանդերձ, Հայաստանը դիմակայել է բոլոր ճնշումներին և ողջունել Կապանում Իրանի հյուպատոսարանի բացումը:

Երրորդ. այսպես կոչված Թուրքալեզու երկրների կազմակերպության ամրապնդման փորձերը «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» դավադրական ծրագրի մի մասն են: Այդ կազմակերպության նպատակը տարածաշրջանում պանթուրքիստական գաղափարախոսության տարածումն ու Շանհայի համագործակցության կազմակերպության, ինչպես նաև տնտեսական համագործակցության զարգացման «ԷԿՕ» կազմակերպության դիրքերի թուլացումն ու պառակտումն է: Նրանք, ովքեր միտումնավոր կամ ակամա խոսում են Թուրքալեզու երկրների կազմակերպությանը դիտորդի կարգավիճակով Իրանի անդամակցության անհրաժեշտության մասին՝ տվյալ կազմակերպության որոշումների վրա ազդելու պարզամիտ հիմնավորմամբ, իրականում գործում են «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» գաղափարի ամրապնդման ուղղությամբ: Քանի որ անգամ դիտորդի կարգավիճակով Իրանի անդամակցությունը կնպաստի, այսպես կոչված, Թուրքալեզու երկրների կազմակերպության լեգիտիմացմանը այն դեպքում, երբ այդ կազմակերպության անդամ երկրների ղեկավարները հաղորդակցվում են թարգմանչի օգնությամբ: Ինչպես, այսպես կոչված, Արաբական ծոցի համագործակցության խորհուրդը չունի օրակարգային առաջնահերթություն Իրանի համար, Թուրքալեզու երկրների խորհուրդը ևս չպետք է ունենա որևէ կարևորություն: Պանթուրքիստների հետ կապված տրվյալ կազմակերպությանը դիտորդի կարգավիճակով Իրանի անդամակցության անհրաժեշտության մասին պանթուրքիստական շրջանակների հետ կապված մեդիացանցի պնդումները իրականում նպատակ են հետապնդում ապացուցելու, որ Իրանի ազերիները թյուրքական աշխարհի բաղադրիչ մասնիկն են: Միևնույն ժամանակ չպետք է աչքաթող անել այն իրողությունը, որ, այսպես կոչված, Թուրքալեզու երկրների կազմակերպության բոլոր անդամները անդամակցում են մեկ կամ մի քանի տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների, որոնց անդամակցում է նաև Իրանը: Այնպես որ այդ երկրների հետ հարաբերությունների կարգավորման համար գործիքակազմի պակաս չի զգացվում:

Չորրորդ. եթե «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» ստեղծման միջոցով Բաքուն, Անկարան և ՆԱՏՕ-ն իսկապես չեն հետապնդում դավադիր նպատակ՝ բռնակցելու Սյունիքը և խզելու Իրան-Հայաստան ցամաքային կապը, այդ դեպքում կարող են օգտագործել Ջանգելանի և Նախիջևանի սահմանային կետերից Իրանի տարածքով Հայաստանի հետ կապի հնարավորությունը, որի մասին հուշագիրը ստորագրվել է 2022 թ. մարտին Թեհրանի և Բաքվի միջև: Վերջին երեք տասնամյակների ընթացքում Իրանը համարվել է Ադրբեջանի և Նախիջևանի, Թուրքիայի և Ադրբեջանի կապի հիմնական տարանցիկ, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ Հայաստանի կապի հիմնական ուղին: Ադրբեջանի, Թուրքիայի և Հայաստանի միջև կայուն խաղաղության հաստատման գործում Իրանը կարող է այժմ նույն առանցքային դերակատարությունն ունենալ իր տարածքով անցնող՝ Ջանգելանը Նախիջևանի հետ կապող ճանապարհով: Դրանից բացի՝ Ադրբեջանը Նախիջևանի հետ կապի համար կարող է օգտագործել Թովուզի և Ղազախի շրջանները, որոնք ունեն դեպի Երևան և այնտեղից դեպի Նախիջևանի հյուսիս ձգվող ճանապարհներ: Նման այլընտրանքների առկայության պայմաններում Բաքվի և Անկարայի պնդումներն այն մասին, թե Ադրբեջանը Նախիջևանի հետ կապող ճանապարհը պետք է անցնի բացառապես Սյունիքի տարածքով, ոչ այլ ինչ են, քան «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» ստեղծման փորձ, որը չունի որևէ տարանցիկ և տնտեսական դեր, և որի դերը բացառապես քաղաքական, անվտանգային, ռազմական և աշխարհաքաղաքական է: Բնականաբար, եթե առաջնորդվենք Ադրբեջանի և Թուրքիայի տրամաբանությամբ, Իրանը ևս կարող է պահանջել, որ Ղարասուի շրջանով Երևանի հետ կապվող միջանցք տրամադրվի, որը սահմանային կետից Իրանի և Հայաստանի մայրաքաղաքների միջև տարածությունը 400 կմ-ից կհասցնի 50 կմ-ի: «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի» ստեղծման վերաբերյալ Բաքվի և Անկարայի պնդումները ոչ միայն չեն նպաստի դրա ստեղծմանը, այլև ընդհակառակը՝ ազգայնական գործոնի առկայության պատճառով կնպաստեն տարածաշրջանային խզումների խորացմանը՝ առավել բարդացնելով Ղարաբաղի ապագայի խնդիրը, միաժամանակ նպաստելով Ալիևի վարչակազմի ներսում եղած տարաձայնությունների խորացմանը, ինչպես նաև Ադրբեջանում էթնիկ խզումների ակտիվացմանը: Դրանից բացի՝ այս թեման Թուրքիայում 2023 թ. նախատեսվող ընտրությունների ժամանակ իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության համար վեցյակ կուսակցությունների դաշինքի և քրդերի ու ալավիների դաշինքի դեմ պայքարում կարող է վերածվել աքիլլեսյան գարշապարի: ■

Սեպտեմբերի 3 2022 թ.
Թարգմանությունը՝ Իվետ Դանիելյանի

2022 թ. սեպտեմբերի 13-ին Հայաստանի դեմ ադրբեջանական հերթական ագրեսիան և միջազգային հանրության արձագանքը

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

2022 թ. սեպտեմբերի 13-ին ադրբեջանական զինված ուժերը հերթական անգամ, առանց պատերազմ հայտարարելու, ռազմական գործողություններ սկսեցին ՀՀ սուվերեն տարածքի նկատմամբ՝ հարվածելով Սյունիքի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի՝ ռազմավարական նշանակության օբյեկտներին և նախկինում անվտանգ համարվող քաղաքների ու գյուղերի ուղղությամբ (Գորիս, Վարդենիս, Ջերմուկ և այլն):

Ռազմական գործողությունների մեկնարկից կարճ ժամանակ անց ՀՀ վարչապետը հեռախոսազրույցներ ունեցավ Ռուսաստանի, Իրանի և Ֆրանսիայի նախագահների հետ, սակայն հարձակումը որակեց որպես սահմանային բախում և խուսափեց «պատերազմ» բառն օգտագործելուց: Ավելի ուշ արդեն հայկական կողմը դիմեց ՀԱՊԿ-ին և ՄԱԿ-ին, սակայն այդպես էլ չհստակեցվեց, թե ինչ հոդվածներով կամ ինչպիսի օգնություն է ակնկալում այդ կառույցներից:

Ասվածի համատեքստում ուշադրության էր արժանի նաև այն հանգամանքը, որ հայկական կողմից գրեթե չկար պաշտոնական տեղեկատվություն թե՛ ռազմական գործողությունների, թե՛ զոհերի ու անհայտ կորածների և թե՛ տարածքային կորուստների վերաբերյալ, մինչդեռ ադրբեջանական իշխանությունները պարբերաբար հասարակությանն իրազեկում էին իրենց «ռազմական հաջողությունների մասին»:

Սեպտեմբերի 13-ին ադրբեջանական հարձակումից հետո՝ ՀՀ վարչապետի հետ հեռախոսազրույցի ընթացքում, Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնը նշել է, որ անընդունելի է լարվածության հետագա սրումը, և ընդգծել իրավիճակի կարգավորման անհրաժեշտությունը[1]: Իսկ Ադրբեջանի նախագահի հետ զրույցի ընթացքում Ֆրանսիայի ղեկավարը վերջինիս կոչ է արել վերադառնալու Բաքվի և Երևանի միջև հրադադարի պահպանմանը[2]:

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը «Թվիթեր»-ում հայտարարություն է տարածել, որով Հայաստանին և Ադրբեջանին կոչ է արել դադարեցնելու ռազմական գործողությունները: Նրա խոսքով՝ հակամարտությունը ռազմական լուծում չունի[3]:

Հայաստանի և Ռուսաստանի պաշտպանության նախարարներ Սուրեն Պապիկյանը և Սերգեյ Շոյգուն հեռախոսազրույց են ունեցել, որի ընթացքում քննարկել են հայ-ադրբեջանական սահմանին տիրող իրավիճակը: Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու իրադրության կայունացման ուղղությամբ[4]:

Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը և ԱՄՆ պետքարտուղարի՝ Եվրոպայի և

Եվրասիայի հարցերով օգնական Կարեն Դոնֆրիդը հեռախոսով քննարկել են հայ-ադրբեջանական սահմանին շարունակվող բախումների և լարվածության խնդիրը: Կ. Դոնֆրիդը մտահոգություն է հայտնել տարածաշրջանում աճող լարվածության ու բախումների կապակցությամբ և կոչ արել անհապաղ դադարեցնելու ռազմական գործողությունները[5]:

Հայաստանի և Ադրբեջանի սահմանին նոր սրացումների շուրջ քննարկումների ընթացքում Թուրքիայի արտգործնախարար Մևլութ Չավուշօղլուն իր ադրբեջանցի գործընկեր Ջեյհուն Բայրամովին հորդորել է կենտրոնանալ խաղաղ բանակցությունների և համագործակցության վրա: Այդ խոսակցությունից հետո Մ. Չավուշօղլուն հայտարարել է, որ Հայաս-տանը պետք է հրաժարվի սադրանքներից և կենտրոնանա խաղաղ բանակցությունների ու համագործակցության վրա՝ հարցը լուծելով Ադրբեջանի հետ պայմանավորվածությունների շրջանակում[6]:

Իրանի արտգործնախարարության խոսնակ Նասեր Քանանին Հայաստանին և Ադրբեջանին զսպվածության կոչ է արել: Նա հայտարարել է, որ պատրաստ է ցանկացած օգնություն ցուցաբերելու երկու հարևան երկրների միջև վեճերի լուծման գործում: Նախարարությունը նաև անընդունելի է համարել Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանների ցանկացած փոփոխություն[7]:

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի սահմանին տիրող իրավիճակի կարգավորմանն աջակցելու Հայաստանի խնդրանքից հետո Մոսկվան կոչ է արել Բաքվին և Երևանին զերծ մնալու սահմանին հետագա էսկալացիայից: ՌԴ արտաքին գործերի նախարարությունը մատնանշել է, որ անդրկովկասյան երկու հանրապետությունների միջև բոլոր վիճելի խնդիրները պետք է լուծվեն

միայն բանակցությունների և քաղաքական պայմանավորվածությունների միջոցով[8]:

Լեհաստանը՝ որպես ԵԱՀԿ նախագահող երկիր, կոչ է արել անհապաղ թուլացնելու լարվածությունը Ադրբեջանի և Հայաստանի սահմանին: Վարշավան ընդգծել է, որ չի կարելի ձեռքից բաց թողնել դիվանագիտական ճանապարհով ձեռք բերված հաջողությունները: Նախագահության հայտարարության մեջ նշված է, որ ԵԱՀԿ Լեհաստանի նախագահությունը պատրաստ է աջակցելու Անդրկովկասում հակամարտության կայուն լուծմանը[9]:

Ընդհանուր առմամբ ՀԱՊԿ-ը սկսել է աշխատել Բաքվի և Երևանի միջև ստեղծված իրավիճակի կարգավորման մեխանիզմների վրա: ՀԱՊԿ երկրները պայմանավորվել էին Հայաստան ուղարկել առաքելություն՝ գլխավոր քարտուղարի գլխավորությամբ[10]: Դրա արդյունքը սեպտեմբերի 20-ին ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ս. Ջասի այցն էր Հայաստան: Այցի շրջանակներում կողմերը քննարկել են ստեղծված իրավիճակը և քաղաքական ու դիվանագիտական անհրաժեշտ համատեղ միջոցառումները՝ ուղղված տարածաշրջանում լարվածության թուլացմանը[11]:

Թուրքիայի նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Էբրահիմ Կալինը կարծիք է հայտնել, որ Բաքվի և Երևանի միջև խաղաղություն կարող է հաստատվել «միայն Ադրբեջանի օրինական իրավունքների հիման վրա»: Նրա խոսքով՝ քանի դեռ բանակցությունները շարունակվում են, Հայաստանը պետք է «զերծ մնա սադրիչ պահվածքից»[12]:

ԵՄ-ն ևս մտահոգություն է հայտնել հակամարտության սրման կապակցությամբ և կոչ արել դադարեցնելու կրակը: ԵՄ հատուկ ներկայացուցիչը անգամ մեկնել է Հայաստան և Ադրբեջան՝ դեէսկալացիայի շուրջ բանակցությունների համար: ԵՄ արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ժ. Բորելը բանակցություններ է վարել իր ադրբեջանցի գործընկեր Ջ. Բայրամովի հետ, որոնց ընթացքում կոչ է արել թուլացնելու լարվածությունը[13]:

Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Խավիեր Կոլոմինան մտահոգություն է հայտնել Հայաստանի վրա Ադրբեջանի իրականացրած հարձակումների առնչությամբ: Նա նշել է. «ՆԱՏՕ-ն կոչ է անում անհապաղ դադարեցնել ռազմական գործողություններն ու ապաէսկալացիայի ենթարկել իրադրությունը»[14]:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշը Ադրբեջանին և Հայաստանին կոչ է արել անհապաղ քայլեր ձեռնարկելու սահմանին լարվածությունը թուլացնելու համար: Նա նաև կոչ է արել հավատարիմ մնալու նախկինում ձեռք բերված պայմանավորվածություններին[15]: Իսկ արդեն սեպտեմբերի 14-ին կայացած ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Նորվեգիայի մշտական ներկայացուցիչ Մ. Ժուլը հայտարարել է, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև լարվածության սրման վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հայտարարության ընդունման մասին խոսք չկա[16]:

Գրեթե երեք օր տևած ակտիվ ռազմական գործողություններից հետո միջազգային ճնշման պայմաններում կողմերի միջև հումանիտար հրադադար հաստատվեց: Թեպետ միջազգային արձագանքը չուշացավ, սակայն գործնականում ագրեսորի զրսպման մեխանիզմների բացակայության պայմաններում լարվածությունն ու սահմանային միջադեպերը մեծացնում են նոր ռազմական գործողությունների վտանգը:

Հղում

1. Տես Президент Франции назвал недопустимой эскалацию напряженности на армяно-азербайджанской границе, https://arminfo.info/full_news.php?id=71271 (մուտք՝ 25.09.2022):
2. Տես Макрон призвал Алиева вернуться к режиму прекращения огня между Баку и Ереваном, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/15741839 (մուտք՝ 25.09.2022):
3. Տես Secretary Antony Blinken, https://mobile.twitter.com/SecBlinken/status/1569519627876827136 (մուտք՝ 25.09.2022):
4. Տես Սուրեն Պապիկյանը և Սերգեյ Շոյգուն պայմանավորվածություն են ձեռք բերել անհրաժեշտ քայլեր ձեռնարկել իրադրության կայունացման ուղղությամբ, https://www.aravot.am/2022/09/13/1290546/ (մուտք՝ 25.09.2022):
5. Տես Глава МИД Азербайджана и помощник госсекретаря США обсудили ситуацию на границе с Арменией, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/15732355 (մուտք՝ 25.09.2022):
6. Տես Состоялся телефонный разговор министров иностранных дел Турции и Азербайджана, https://factor.am/ru/28498.html (մուտք՝ 25.09.2022):
7. Տես Иран призвал Армению и Азербайджан к сдержанности, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/15732473 (մուտք՝ 25.09.2022):
8. Տես Москва получила просьбу Армении о помощи в обострении с Азербайджаном, https://www.gazeta.ru/army/news/2022/09/13/18551935.shtml (մուտք՝ 25.09.2022):
9. Տես Польша как председатель ОБСЕ призвала к деэскалации в Закавказье, https://regnum.ru/news/polit/3695142.html (մուտք՝ 25.09.2022):
10. Տես Организована работа по задействованию механизмов ОДКБ для урегулирования ситуации на границе Армении и Азербайджана, https://newsarmenia.am/news/politics/organizovana-rabota-po-zadeystvovaniyu-mekhanizmov-odkb-dlya-uregulirovaniya-situatsii-na-granitse-a/ (մուտք՝ 25.09.2022):
11. Տես Генеральный секретарь ОДКБ Станислав Зась находящийся в Армении во главе Миссии ОДКБ, встретился с исполняющим обязанности Министра иностранных дел страны Баге Геворгяном, https://odkb-csto.org/news/news_odkb/generalnyy-sekretar-odkb-stanislav-zas-nakhodyashchiysya-v-armenii-vo-glave-missii-odkb-vstretilsya-/#loaded (մուտք՝ 25.09.2022):
12. Տես Турция выступает за мир между Баку и Ереваном на основе законных прав Азербайджана, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/15736045 (մուտք՝ 25.09. 2022):
13. Տես Посредников никто не слышит: Армения и Азербайджан продолжили перестрелки на границе, https://www.aniarc.am/2022/09/15/armenia-azerbaijan-kommersant-14-sept-2022-%D1%8A/ (մուտք՝ 25.09.2022):
14. ՆԱՏՕ-ն կոչ է անում անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները, https://www.armenpress.am/arm/news/1092353/arm/ (մուտք՝ 25.09. 2022):
15. Տես ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը Ադրբեջանին և Հայաստանին կոչ է արել անհապաղ քայլեր ձեռնարկել լարվածությունը թուլացնելու համար, https://bit.ly/3dXrkip (մուտք՝ 25.09.2022):
16. Տես Նորվեգիայի մշտական ներկայացուցիչը կարծում է, որ դեռ վաղ է խոսել ՀՀ և Ադրբեջանի վերաբերյալ ՄԱԿ-ի ԱԽ հայտարարության մասին, https://168.am/2022/09/14/1764434.html (մուտք՝ 25. 09. 2022):

Արևմուտքն ու Իրանում տեղի ունեցող իրադարձությունները

Նարե Գևորգյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Իրանում կանանց գլխաշորերի պատճառով սկսված բողոքի գործողությունները ավելի խորքային երևույթ են, քան թվում է: Իրանի իշխանությունները օրեր շարունակ փորձում են դադարեցնել հասարակության ինքնաբուխ բողոքի ցույցերը այն բանից հետո, երբ սեպտեմբերի 13-ին Իրաքի Քրդստանից Թեհրան ժամանած 22-ամյա Մահսա Ամինիին ոստիկանությունը բերման ենթարկեց և տեղափոխեց հագուստի կանոնները խախտած կանանց վերակրթական կենտրոն:

Համաձայն մի շարք խմբագրված կադրերի, որոնք հրապարակել են իշխանությունները, Ամինին հագնված էր իսլամական նորմերին համապատասխան: Մեկ այլ տեսախցիկի կադրերը, որոնք նկարահանվել են ավելի ուշ, ցույց են տալիս, որ նա ընկել է միջանցքում, ապա նրան տարել են դեպի շտապօգնության մեքենա: Ամինիի ընտանիքը պահանջել է հրապարակել չմոնտաժված կադրերը:

Ամինին հոսպիտալացված մնաց կոմայի մեջ մինչև իր մահը՝ սեպտեմբերի 16-ը: Պետությանն առընթեր լրատվական գործակալությունները հայտնել են, որ նա սրտի կաթված է ստացել ոստիկանության բաժնում: Նրա ընտանիքը չի ընդունել այդ բացատրությունը և պնդել է, որ նրա մարմնի վրա կային մի շարք վնասվածքներ, որոնք չհավատալու իրավունք են տալիս իրենց: Ակտիվիստները պատմել են, որ աղջկան ծեծի են ենթարկել ոստիկանությունում գտնվելու ժամանակ: Ամինիի ընտանիքը նույնպես հերքել է պետական նախնական դիահերձման արդյունքները, որը, ըստ տեղեկությունների, ցույց չի տվել ներքին արյունահոսություն կամ գլխի տրավմայի նշաններ:

Լրատվությունը հաղորդում է, որ Ամինին վատառողջ էր և մանկության տարիներին ուղեղի ուռուցք է ունեցել, ինչը նրա հայրը հերքում է: Պետության կողմից աջակցություն ստացող լրատվական գործակալությունները նույնպես բողոքները ներկայացրել են որպես բռնի սադրիչների և օտարերկրյա ազդեցության հետևանք:

Այս բողոքի գործողությունների և անկարգությունների բոլոր դրդապատճառները հասկանալու համար պետք է նկատի ունենալ նաև իրադարձությունների վրա ներգործած արտաքին ազդակները:

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Է. Ռաիսին զանգահարել է Ամինիի ընտանիքին և խոստացել հետաքննել նրա մահվան պատճառը: Բայց երբ նախագահը Նյու Յորքում ելույթ ունեցավ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ժամանակ, չանդրադարձավ մահացած աղջկա կամ ցույցերի հարցին: Փոխարենը նա քննադատեց Արևմուտքին մարդու իրավունքների հարցում «երկակի ստանդարտների» համար:

Այստեղ արդեն կարող ենք անդրադառնալ այն հայտարարություններին և իրադարձություններին, որոնք ապացուցում են Արևմուտքի ներգրավվածությունը Իրանում ծայր առած անկարգություններին: Իրանի գերագույն առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեին հոկտեմբերի 3-ին հայտարարեց, որ Իսլամական Հանրապետությունում բողոքի ցույցերը ծրագրված են եղել դրսից և կազմակերպված չեն «հասարակ իրանցիների»

կողմից: Սա այաթոլլահի առաջին հրապարակային հայտարարությունն էր երկրում մոլեգնող բողոքի ակցիաների վերաբերյալ:

Պետական լրատվամիջոցների հրապարակած հոդվածներում Խամենեին նշել է, թե 22-ամյա Մահսա Ամինիի մահը խորապես կոտրել է իր սիրտը, և այն անվանել է «դառը միջադեպ»: Միաժամանակ գերագույն առաջնորդը նշել է, որ մի խումբ մարդիկ անկայուն իրավիճակ են ստեղծել փողոցներում, և որոշ մարդկանց համար այդ միջադեպը հարմար առիթ էր նախապես պլանավորած անկարգություններն ի կատար ածելու համար, ինչպիսիք էին Ղուրանն այրելը, ոստիկանական մեքենաները և մզկիթները հրդեհելը, հիջաբները և մազերը կտրելը և այլն[1]:

Խամենեին, դիմելով ոստիկանության ներկայացուցիչներին, ասել է. «….այդ անկարգություններն ու անկայունությունը ծրագրված են եղել Ամերիկայի և սիոնիստական ռեժիմի և կողմից»[2], ապա՝ հավելել, որ դրանք նորմալ և բնական գործողություններ չեն:

Խամենեին իր աջակցությունն է հայտնել անվտանգության ուժերին՝ նշելով, որ բողոքի ակցիաների ընթացքում նրանք բախվել են անարդարության: Ավելի վաղ Մահսա Ամինիի մահվան պատճառով ծայր առած անկարգությունների ալիքի ազդեցությամբ Իրանի ուսանողները բախվել էին անվտանգության ուժերի հետ Թեհրանի առաջատար համալսարանում:

Այնուհետև ԻԻՀ գերագույն առաջնորդն իր թվիթերյան էջում կատարել է հետևյալ գրառումը. «Խնդիրն Իրանում հիջաբը չէ: Շատ իրանցի կանայք, որոնք կատարյալ կերպով չեն պահպանում հիջաբը, Իսլամական Հանրապետության աննկուն կողմնակիցներ են: Խոսքը Իսլամական Իրանի անկախության ու կայունության մասին է: ԱՄՆ-ն չի կարողանում հանդուրժել ուժեղ, անկախ Իրանի գոյությունը»[3]:

Ա. Խամենեին իր ելույթում անդրադարձել է նաև այն խնդրին, որ զանգվածային անկարգություններ, ցույցեր տեղի են ունենում աշխարհի տարբեր հատվածներում, նույնիսկ Եվրոպայում, մասնավորապես Ֆրանսիայում գրեթե միշտ հասարակությունը բողոքի ցույցեր է կազմակերպում, բայց երբևէ չի եղել մի դեպք, որ ԵՄ նախագահը հրապարակավ իր աջակցությունը հայտնի անկարգություններ հրահրողներին[4]:

Մարդու իրավունքների պաշտպանության պատրվակով Գերմանիան, Ֆրանսիան, Դանիան, Իսպանիան, Իտալիան և Չեխիան առաջարկել են Իրանի Իսլամական Հանրապետության նկատմամբ կիրառել 16 պատժամիջոցներից բաղկացած փաթեթ: Այս կապակցությամբ Գերմանիայի ԱԳՆ աղբյուրները պնդում են, որ պատժամիջոցների նոր փաթեթն ուղղված կլինի այն անձանց

և հաստատությունների դեմ, որոնք պատասխանատու են Իրանում բողոքի ցույցերին ոստիկանության անհամարժեք արձագանքի համար:

Գերմանական «Շպիգել» շաբաթաթերթն իր զեկույցում հայտարարեց, որ Իրանի նկատմամբ պատժամիջոցների առաջարկվող փաթեթը կհաստատվի հոկտեմբերի 17-ին կայանալիք հանդիպման ժամանակ՝ Եվրամիության ԱԳ նախարարների ներկայությամբ:

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը ևս հոկտեմբերի 3-ին հանդես եկավ հայտարարությամբ այն մասին, որ ԱՄՆ-ն նոր պատժամիջոցներ է սահմանելու իրանցի պաշտոնյաների նկատմամբ: Նա նաև պնդել է, որ այդ պատժամիջոցներն ուղղված կլինեն նրանց դեմ, որոնց Վաշինգտոնը համարում է ցուցարարների նկատմամբ բռնությունների պատասխանատու[5]:

ԻԻՀ հոգևոր առաջնորդը, անդրադառնալով երկրի ներսում ծավալվող գործընթացներին, հայտարարել է նաև հետևյալը. «Թշնամին մեր երկրի հյուսիսարևմտյան և հարավարևելյան շրջանների վերաբերյալ իր հաշվարկներում սխալվել է: Ես ապրել եմ բելուջների մեջ, և նրանք խորապես հավատարիմ են Իրանի Իսլամական Հանրապետությանը: Քրդերը Իրանի ամենազարգացած ժողովուրդներից են, նվիրված են հայրենիքին, իսլամին և վարչակազմին: Ուստի թշնամու ծրագիրը չի հաջողվելու»[6]: Ա. Խամենեիի այս հայտարարությունը կարելի է կապել այն փաստի հետ, որ հանրային դժգոհությունն արտաքին տարբեր ուժերի կողմից օգտագործվում է՝ խորացնելու անջատողականությունը:

Վերոնշյալի արձագանքներից էր Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հրետանու և անօդաչուների ստորաբաժանումների կողմից Իրաքյան Քրդստանում անջատողական ահաբեկիչների դիրքերի ռմբակոծումը:

«Քուրդիստան 24» սոցցանցը հայտնել է Իրաքի Սուլեյմանիա նահանգի Շարբազիր քաղաքում PKK տարրերին պատկանող մեքենայի վրա անօդաչու թռչող սարքի հարձակման մասին: Առայժմ ոչ մի կուսակցություն դրա պատասխանատվությունը չի ստանձնել:

Ըստ լուրերի՝ ԻՀՊԿ «Ղազա» և «Շահեդ-129» անօդաչու թռչող սարքերի՝ Կոմլե և Փեջակ ահաբեկչական հրամանատարների հանդիպման վայրի վրա հարձակման ժամանակ սպանվել է 17 ահաբեկիչ, ևս 49-ը վիրավորվել են[7]:

Որոշ աղբյուրներ հաղորդում են Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի անօդաչուների և հրետանային ստորաբաժանումների գործողությունների վերսկսման մասին Արևմտյան Ատրպատական նահանգի սահմանային շրջաններում (Փիրանշահր-Աշնոյե)՝ Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության ահաբեկչական խմբավորման կենտրոնակայանի վրա[8]:

Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ցամաքային ուժերի «Ղոդս» հարավարևելյան բազայի հրամանատարը տեղի ունեցողի առնչությամբ հայտարարել է, որ Սիստան Բելուջիստանում լիակատար խաղաղություն է, Ջահեդանում սեպտեմբերի 30-ին տեղի ունեցած միջադեպի մեղավորներից շատերը ձերբակալվել են, ոմանց ինքնությունը պարզվել է, իսկ նրանց խոստովանությունները շուտով կհրապարակվեն: Նա հավելել է, թե իրենք երբեք թույլ չեն տա, որ հանցավոր Իսրայելի ու Ամերիկայի հովանավորած ամբարտավան տականքները, որոնք կանգնած են այս ապստամբությունների հետևում, սպառնալիք ստեղծեն ժողովրդի անվտանգության համար:

Բավականին հետաքրքրական էր նաև «Մոջահեդին-է Խալք» ահաբեկչական խմբավորման պաշտոնական խոստովանությունը սաուդյան կառավարական հեռուստաալիքներով. «Այս բողոքի ցույցերը սկսվեցին Մահսա Ամինիի մահով, բայց այժմ «Մոջահեդին-է Խալքի» ուժերն են առաջնորդում և առաջ տանում այն»[9]:

Մոջահեդների կազմակերպության ուժերը հիմնականում ձևավորվել և պատրաստվել են նման օրերի համար, օրինակ՝ նրանց պարտականություններից մեկն է այրել Ղասեմ Սուլեյմանիի նկարները[10]:

Դեռևս պարզ չէ, թե ինչ հետևանքներ կունենա այս հակակառավարական ալիքը, արդյոք իշխանություններին կհաջողվի հնազանդեցնել հասարակությանը, թե՞ հակառակը, բայց մի բան հստակ է. ինչպես բոլոր հեղափոխություններն ու քաղաքացիական անհնազանդությունները, Իրանում կատարվածը ևս բացառություն չէ, և, մարդկանց բողոքն օգտագործելով, արտաքին որոշ ուժեր կփորձեն օգուտ քաղել ստեղծված իրավիճակից: Մասնավորապես, կփորձեն հասնել Իրանի կառավարման համակարգի փոփոխմանը, և հիջաբներից հրաժարումը կլինի դրան տանող առաջին քայլերից մեկը: Որոշ աղբյուրներ նշում են նաև, որ պետական կառավարման մի շարք ինստիտուտներում հոգևորական վերնախավի առկայությունը ևս խանգարում է արդար և իրավական պետություն ստեղծելու գործընթացին, և աշխարհիկացնելով իշխանական համակարգը՝ կպաշտպանվեն մարդկանց իրավունքներն ու ազատությունները:

Ըստ այդ աղբյուրների՝ երկրում ինտերնետ հասանելիության բացակայության պայմաններում տեսահոլովակների տարածումը համացանցում մի փաստ է, որն ապացուցում է Արևմուտքի ներգրավվածությունը տվյալ ցույցերին: Թե որքանով է նման վարկածը ճշմարտացի, ցույց կտան ժամանակը և հետագա իրադարձությունները: Բողոքի ակցիայի դուրս գալն օրինական իրավունք է, բայց տվյալ դեպքում անկարգությունների հիմքում ընկած են թշնամական նկրտումները: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ տարբերություն կա «բողոքի», որը յուրաքանչյուր քաղաքացու օրինական իրավունքն է, և «անկարգության» միջև, որն արտահայտվում է ժողովրդի թշնամիների կողմից հրահրված դավադրությունների ձևով:

Բողոքը հասարակության ակտիվության նշան է, որը որոշակի վնասների չի հանգեցնում, սակայն դրա վերաճումը քաոսի ու իրավական նորմերի խախտման, երբ այն սնվում է ժողովրդի հանդեպ կարեկցանքից զուրկ լրատվամիջոցներից, չունի այլ պտուղ, քան ծայրահեղականության կամ քաոսային կառավարման արմատավորումը: Այս մասին գրում է մամուլը:

Աղբյուրը

1. Տես https://twitter.com/khamenei_ir/status/1576879526860103680?cxt=HHwWgICpwebkmeIrAAAA:
2. https://t.me/truekpru/93808
3. https://twitter.com/khamenei_ir/status/1576909742219612160?cxt=HHwWgMDSvcjDp-IrAAAA.
4. Տես https://twitter.com/khamenei_ir/status/1576895444080525312?cxt=HHwWgIDQhaeDoeIrAAAA:
5. Տես https://t.me/reisi_ir/21983:
6. https://bit.ly/3RNQ9uW.
7. Տես https://t.me/sepah_pasdaran/114075:
8. Տես https://t.me/Khabar_Fouri/276050:
9. Տես https://t.me/reisi_ir/21999:
10. Տես https://t.me/reisi_ir/21999:

Ռուսաստանի հեռացումը տարածաշրջանից. պատմական ակնարկ

Անի Մելքոնյան
Պատմաբան

2020 թ. նոյեմբերի 9-ի կապիտուլյացիոն համաձայնագրից հետո Հայաստանի Հանրապետությունը ամեն օր կանգնում է նորանոր մարտահրավերների առաջ: Հայաստանի Հանրապետությունը փաստացի պատերազմի մեջ է, որը մերթ ընդ մերթ ընդմիջվում է կարճատև զինադադարներով: Այս իրավիճակում մեր երկրում առանձին շրջանակների կողմից ուղղորդված հակառուսական ակցիաներ են իրականացվում ՀԱՊԿ-ից դուրս գալու և ռուսական 102-րդ ռազմաբազան Հայաստանից դուրս բերելու պահանջով: Իսկ ի՞նչ կարող է տալ Հայաստանին Ռուսաստանի հեռացումը տարածաշրջանից: Այս հարցի պատասխանը մեր ոչ վաղ անցյալի պատմության էջերում է: Այն գտնելու համար ետ գնանք 1917 թվական: 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած փետրվարյան հեղափոխությունը և ժամանակավոր կառավարության ստեղծումը, թեև թուլացրին Ռուսաստանի դիրքերը Այսրկովկասում, բայց հայությանը Արևմտյան Հայաստանի ազատագրման որոշակի հույսեր ներշնչեցին: Մինչդեռ նույն թվականին տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով բոլոր հույսերն ու սպասելիքները հօդս ցնդեցին: 1917 թ. հոկտեմբերի 25-ին բոլշևիկները Պետրոգրադում իրականացրին պետական հեղաշրջում և գրավեցին իշխանությունը: Դրա հետևանքով առանց այդ էլ Ռուսաստանից կտրված Այսրկովկասը հայտնվեց անիշխանության ճիրաններում: Իրավիճակն ավելի բարդացավ Երզնկայի 1917 թ. դեկտեմբերի 5-ի զինադադարից հետո, երբ արագացավ ռազմաճակատի քայքայումը: Սիմոն Վրացյանի վկայությամբ՝ «….ռուս բանակը պատրաստվում էր, 1918 թվի սկզբին, անցնելու ընդհանուր հարձակման՝ անգլիացիներին միանալու ծրագրով, և թուրքերը ուժ չունեին դիմադրելու: 1917 թ. տարեվերջին թուրքերի արևելյան բանակը բոլորովին կազմալուծ ու բարոյալքված վիճակի մեջ էր՝ անընդունակ ռազմագիտական լուրջ խնդիրներ լուծելու»[1]: Ի դժբախտություն հայերի՝ 1917 թ. հոկտեմբերի վերջերին Գերմանիայի օժանդակությամբ բոլշևիկները՝ Լենինի գլխավորությամբ, Ռուսաստանում պետական հեղաշրջում իրականացրին՝ ձեռք գցելով իշխանությունը: 1917 թ. դեկտեմբերի 5-ին ռուսական կովկասյան ճակատի և թուրքական կովկասյան զորախմբերի հրամանատարության միջև Երզնկայում կնքվեց զինադադար, որով դադարեցվում էին մարտական գործողությունները Սև ծովից մինչև Վանա լճի հարավային ափի շրջանները տեղակայված զորքերի միջև:

Այսպիսով՝ Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղաշրջման պատճառով Լենինի «խաղաղության» օրակարգով Ռուսաստանը ստիպված էր հեռանալ Այսրկովկասից, որտեղից հետ կանչվեցին նաև ռուսական զորքերը. «Եւ «դեպի տուն» նշանաբանով ռուսական բանակները ամբոխ դարձան և ճակատները մերկացան»[2]:



Լենինի հրամանով ռազմաճակատից և առհասարակ Կովկասից ռուսների հեռանալուն հաջորդում էր թուրքերի առաջացումը, որոնք առաջնորդվում էին հետևյալ նշանաբանով. «Մենք պիտի կանգ առնենք այնտեղ, որտեղ ռուսական զորքը կանգ կառնի: Մենք չենք ճանաչում ո՛չ անկախություն և ո՛չ էլ ինքնորոշում»[3]: Ազգերի ինքնորոշման անվան տակ Լենինի կողմից ռուսական զորքերի դուրսբերումը Հայաստանից մեծ ծառայություն էր թուրքերին, որովհետև ամենալավատեսների համար անգամ «Պարզ էր…., որ ռուսական բանակը Հայաստանից դուրս բերելը հավասար կլիներ հայերի բնաջնջմանը»[4]: 1918 թ. հունվարի 28-ին, խախտելով Երզնկայի զինադադարը, թուրքական 5000-անոց բանակը՝ Մեհմեդ Վեհիբ փաշայի հրամանատարությամբ, հարձակման անցավ և, զարգացնելով հաջողությունը, հասավ Էրզրում (Կարին), որտեղ ինքնապաշտ-պանության ղեկավար էր նշանակվել զորավար Անդրանիկը: Վերջինիս, սակայն, չհաջողվեց կազմակերպել Էրզրումի ինքնապաշտպանությունը: Թուրքական արշավանքներին զուգահեռ՝ 1918 թ. մարտի 3-ին, Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունը կնքեց Ռուսաստանի պատմության թերևս ամենախայտառակ պայմանագիրը՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որով ոչ միայն հրաժարվեց Արևմտյան Հայաստանից, այլև թուրքերի քմահաճույքին թողեց Արևելյան Հայաստանը. «Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը ավելի ևս արձակեց թուրքերի ձեռքերը: Նրանք չմնացին ռուս-թուրքական սահմանագծի վրա և շարժվեցին դեպի Կովկասի ներսերը՝ իրենց հետ բերելով ավեր ու կոտորած»[5]: Ռուսական զորքերի հեռանալու, Բրեստ-Լիտովսկի խայտառակ

Դրո

պայմանագրի և Լենինի՝ «ազգերի ինքնորոշման իրավունքի» ու «խաղաղության» քաղաքականության հետևանքով թուրքական արշավանքների դեմ «Հայերը առանձին կը մնային, ուրեմն պաշտպանելու համար շուրջ 400 քմ երկարութեամբ ճակատ մը…. Հայկական ուժերը հերոսաբար կռուեցան, բայց տակաւ տեղի տուին թուրքերու թուական առաւելութեան առջև»[6]: Թուրքերի ձեռքերն ազատված էին ռուսական կապանքներից, և նրանք գնում էին դեպի իրենց նպատակը՝ Մեծ Թուրանի ստեղծումը, որի ճանապարհին կանգնած էին ռուսական պետությունն ու հայ ժողովուրդը: Եվ ահա Կովկասից ռուսական բանակի հեռացումով «թուրքերու առջև կը բացուէր Թուրքնի ճամբան և կ'ընծայուէր աննման պատեհութիւն՝ իրագործելու թուրք ծրագրին երրորդ և չորրորդ կէտերը – ռուսահայութեան բնաջնջումը…. Թուրքերու համար «հերթական աշխատանք» է աւելի բան չէ նշանակած հայ ժողովուրդի ամբողջական մաքրագործումը…., անհրաժեշտ գործ մը, զոր պէտք է կատարեն, բանալու համար իրենց ճամբան դեպի Միացեալ և Անկախ Թուրանիա…. Եւ առաջ խաղաց թուրքական բանակ: Մէկ-երկու ամսուան ընթացքին վերագրաւուած էր «արևելեան Անատոլուն», յակառակ հայերու յուսահատական դիմադրութեան»[7]:

Այս պայմաններում դեռևս 1917 թ. նոյեմբերի 19-ի հրամանով նոր կազմավորված Հայկական կորպուսի հրամանատար էր նշանակվել գեներալ Թ. Նազարբեկյանը: Կորպուսի կոմիսարն էր Դրոն, իսկ առաջին դիվիզիայի հրամանատարը՝ գեներալ Մ. Սիլիկյանը: Վիճակը ծանր էր հատկապես Երևանի նահանգում, որը լիքն էր ցեղասպանու-թյունից մազապուրծ գաղթականներով ու որբերով: Բացի այդ՝ նահանգում ակտիվացել էին անիշխանական տարրերն ու թաթար հրոսակները, ահռելի չափերի էր հասնում դասալքությունը: Կարճ ասած՝ Երևանի նահանգում իսկական քաոս էր: Քաոսային այս իրավիճակում ազգային ուժերը (մասնավորապես՝ Դաշնակցությունը) փրկության ելքեր էին փնտրում, և ելքը գտնվեց. 1917 թ. դեկտեմբերին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը և Հայ զինվորական խորհուրդը արտակարգ լիազորություններով Երևանի նահանգ ուղարկեցին Վանի ինքնապաշտպանությունը փայլուն ղեկավարած Արամ Մանուկյանին: Արամը Երևան ժամանեց 1917 թ. դեկտեմբերի 18-ին՝ անմիջապես անցնելով հայության փրկության համար միջոցներ ձեռք առնելուն: Առաջին և գլխավոր միջոցը սեփական ուժերին ապավինելն ու արտաքին որևէ ուժից օգնություն չակնկալելն էր, մի բան, որ ավանդույթի ուժով արտաքին ուժի օգնության հետ հույս կապող հայ ժողովուրդը դեռևս բավարար չափով չէր գիտակցում: Թուրքական վտանգի առաջ մենակ մնացած հայ ժողովրդին սեփական ուժերի նկատմամբ հավատ ներշնչելու նպատակով Արամը հղեց իր հայտնի կոչ-պատգամը. «Ամէն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթէ նայող կայ, նայում է միայն յանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար: Եթէ ընդհանուր ուժերով ճակատ պահելու խօսք էլ է լինում, դա խօսք է՝ զուրկ իրական հիմքից ու անկեղծութիւնից: Հայերով ո՛չ ոք չի հետաքրքրւում, շօշափելի օգնութիւն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մենակ ենք և պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու և թէ՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»[8]: Ձեռնարկված ճիշտ քայլերի շնորհիվ Արամը կարողացավ հաջողությամբ իրականացնել զորահավաքը: Արամը, ապա նաև 1918 թ. հունվար-փետրվարից նրան միացած գեներալներ Դրոն ու Մ. Սիլիկյանը քայլ առ քայլ Երևանի նահանգը պատրաստում էին ինքնապաշտպանության: Զարգացնելով առաջխաղացումը՝ թուրքերը 1918 թ. մարտի 24-ին գրավեցին Սարիղամիշը: Այս լուրը Երևանում իսկական խուճապ առաջացրեց, և այս խուճապային իրավիճակում էր, որ հայ ժողովուրդը կայացրեց իր համար ամենաճիշտ ու ճակատագրական որոշումը, այն է՝ իր ճակատագիրը վստահել Արամ Մանուկյանին: Զորքն ու ժողովուրդը երթով շարժվեցին Արամի բնակարան և նրան հռչակեցին դիկտատոր: Եվ Արամը դարձավ պատմության մեջ այն եզակի դիկտատորներից, որոնք իրենց անսահմանափակ իշխանությունն օգտագործել են միայն ու միայն իրենց ժողովրդի շահերի համար:

1918 թ. մայիսի սկզբներին թուրքական զորքերը կանգնած էին Ախուրյան գետի աջ ափին, և շատերին թվում էր, թե թուրքերն այլևս չեն շարունակի իրենց արշավանքը, ինչպես 2020 թ. նոյեմբերի 9-ից հետո էր շատերին թվում, թե Արցախի 75 %-ին տիրանալուց հետո կովկասյան թուրքերը այլևս չեն շարունակի պատերազմը: Արամը, իհարկե, այլ կարծիքի էր, ուստի Դրոյի ու Մ. Սիլիկյանի հետ տենդագին պատրաստվում էր թուրքերին դիմադրություն ցույց տալուն: Մայիսի 15-ին թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը, իսկ մայիսի 19-ին ներխուժեցին Արարատյան դաշտ: Նույն օրը գումարված Ազգային խորհրդի նիստում քննարկվում էր Երևանը թողնելու և Նոր Բայազետի լեռները քաշվելով պարտիզանական կռիվներ մղելու տարբերակը,

Վեհիբ փաշա

ինչին Արամը կտրականապես դեմ էր: Նա բացառեց Երևանի հանձնումը թշնամուն՝ խստորեն ասելով. «….ոչ մի նահանջ ոչ մի գծի վրա: Նահանջ Երևանից՝ կնշանակե խաչ քաշել մեր ամբողջ գործունեության և մեր ապագա քաղաքական մուրազներուն վրա, բոլորդ պիտի մնաք և մեռնիք»[9]: Արամի որոշումը բեկանման ենթակա չէր և դարձավ վճիռ. «Ազգային Խորհրդի որոշումը՝ թշնամուն Սարդարապատում և Բաշ-Ապարանում ճակատամարտ տալու մասին, հանձնարարվեց զորահրամանատարությանը ի կատար ածելու»[10]: Ապա հաջորդեցին Մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի Հանրապետության ծնունդը: Մյուս իրադարձությունների մասին չխոսելով՝ վերադառնանք մեր օրեր, փորձենք հասկանալ, թե ինչ կտա մեզ Ռուսաստանի հեռացումը տարածաշրջանից այսօր: Շատերը գուցե պնդեն, որ այսօրվա Հայաստանն ու 1917 թ. վերջի-1918 թ. սկզբների Հայաստանը միանգամայն տարբեր կարգավիճակներ ունեն: Իհարկե ճիշտ է՝ այսօրվա Հայաստանը 31 տարվա կայացած պետություն է, բայց Ռուսաստանի հեռացումը Կովկասից նրա համար կարող է ունենալ նույն ողբերգական հետևանքը, ինչ 105 տարի առաջ: Ինչո՞ւ: Որովհետև, սկսած 2018 թվականից, Հայաստանի Հանրապետության «թավշյա» իշխանությունները հետևողականորեն կազմալուծեցին տարածաշրջանում ամենամարտունակներից մեկը համարվող հայկական բանակը, վարկաբեկեցին հերոսներին ու ազգային պետականության գաղափարը, իսկ 2020 թ. նոյեմբերի 9-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայոց պետականությանը հասցրեց ամենածանր հարվածը՝ հաղթող բանակի թիկունքում ստորագրելով կապիտուլյացիոն համաձայնագիր և դավաճանաբար Արցախի 75 %-ը հանձնելով թշնամուն, ինչն էլ գրեթե ոչնչացրեց Հայաստանի Հանրապետության պաշտպանունակությունը և հանգեցրեց 2022 թ. սեպտեմբերի 12-14-ի ողբերգությանը, երբ մեկ գիշերում թշնամին մխրճվեց Հայաստանի Հանրապետության խորքերը՝ հսկողության տակ վերցնելով Սյունիքի, Վայոց ձորի և Գեղարքունիքի մի շարք բնակավայրեր: Այս պայմաններում խոսել ռուսական ռազմաբազան Հայաստանից դուրս բերելու և ՀԱՊԿ-ից դուրս գալու մասին կամ դավաճանություն է, կամ մանկամտություն, որովհետև եթե Թուրքիայի Հանրապետության հետ սահմանին կանգնած չլինեն ռուսական զորքերը, և բարձրացված չլինի ռուսական դրոշը, ոչինչ չի կարող խանգարել Թուրքիային ներխուժել Հայաստանի Հանրապետության տարածք և միանալ Ադրբեջանին: Թե ինչ կլինի այդ դեպքում, կարծում եմ, պարզ է. հայ ժողովրդի՝ Հայաստանում մնացած վերջին հատվածի ցեղասպանություն, որը 1918 թ. կանխվեց բացառապես Արամի, Դրոյի ու Միլիկյանի ջանքերով, իսկ որ այսօր Դրո, Միլիկյան ու առավել ևս Արամ Մանուկյան չկան, ակնհայտ է:

Ինչ անել այս աղետալի վիճակից դուրս գալու համար: Նախ պետք է պետության ու ազգի ճակատագիրը որոշելու հնարավորությունից զրկել սեփական բանակին թիկունքից դաշույնի հարված հասցրած և Հայաստանի 31-ամյա հանրապետությունը կործանման վտանգի առաջ կանգնեցրած Նիկոլ Փաշինյանին, այնուհետև՝ կազմավորել արտակարգ լիազորություններով օժտված ազգային համաձայնության կառավարություն, որը կանցկացնի համընդհանուր զորահավաք, կիրականացնի պատշաճ քայլեր Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ և պարտվողական քաղաքականությամբ թշնամուն Երևանի պատերի տակ չի հասցնի: Կառավարություն, որը կունենա Արամի վճռականությունը՝ արժանի հակահարված հասցնելու թշնամուն և կանգնեցնելու Հայաստանի Հանրապետության կործանումը, հակառակը կարող է 1915 թ. աղետից շատ ավելի մեծ աղետ բերել հայ ժողովրդին:

Հղումներ

1. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 65:
2. Ռուբեն, Հայաստանը միջմայրցամաքային ուղիների վրա, Եր., 2021, էջ 85:
3. Նույն տեղում:
4. Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, Եր., 2022, էջ 19:
5. Նույն տեղում, էջ 23:
6. Տասնապետեան Հ., Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. Ժողով (1890-1924), Աթէնք, 1988, էջ 124:
7. Զարեւանդ, Միացեալ, Անկախ Թուրանիա, Աթէնք, 1987, էջ 112:
8. Ասրյան Ա., Արամ Մանուկյան: Հանրապետության հիմնադիրը, Եր., 2018, էջ 7-8:
9. Նույն տեղում, էջ 13:
10. Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Եր., 2008, էջ 19:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Եր., 2008:
2. Ասրյան Ա., Արամ Մանուկյան: Հանրապետության հիմնադիրը, Եր., 2018:
3. Զարեւանդ, Միացեալ, Անկախ Թուրանիա, Աթէնք, 1987:
4. Ռուբեն, Հայաստանը միջմայրցամաքային ուղիների վրա, Եր., 2021:
5. Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, Եր., 2022:
6. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:
7. Տասնապետեան Հ., Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. Ժողով (1890-1924), Աթէնք, 1988:

ՌԴ և ԱՄՆ կոնֆլիկտային ռազմավարությունների արտացոլումը ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթերում

Արփի Աբրահամյան
ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության վարչության անդամ, քաղաքագիտության և ազգային անվտանգության հարցերի մասնագետ

Միջազգային հարաբերությունները ներկայումս բնութագրվում են աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական դիմակայության կտրուկ սրմամբ, աշխարհի ռազմաքաղաքական ուժի նոր գլոբալ և տարածաշրջանային կենտրոնների ձևավորմամբ, նրանց միջև ազդեցության ոլորտների համար պայքարի սրմամբ:

Աշխարհաքաղաքական շահերի բախման առանցքում ՌԴ-ԱՄՆ ռազմավարական մրցակցությունը վերաճել է բացահայտ գերլարվածության, երկու գերտերությունների միջև կոնֆլիկտային իրավիճակը շարունակում է սրվել (ռուս-ուկրաինական պատերազմ, Ուկրաինան որպես Արևմուտք-ՌԴ հակամարտության օբյեկտ):

ԱՄՆ-ն հանդես է գալիս և՛ որպես հավաքական Արևմուտքի կարևոր բաղադրիչ, և՛ որպես առանձին սուբյեկտ՝ հավակնելով գլոբալ աշխարհի կառավարմանը:

Ավելի պարզ ներկայացնելու համար ՌԴ և ԱՄՆ կոնֆլիկտային ռազմավարությունը անդրադառնանք դրանց ազգային անվտանգության (այսուհետ՝ նաև ԱԱՌ) ռազմավարություն փաստաթղթերին, որոնցում սահմանված են այդ երկրների ռազմավարական նպատակները, կենսական շահերը, սպառնալիքները, գործընկեր, դաշնակից երկրները և այլն:

Նշենք, որ ռուս-ամերիկյան հարաբերությունները ավելի հաճախ մրցակցային բնույթ են կրել, առավել սրվել են 2014 թվականից հետո, ինչը մեծապես պայմանավորված էր Ուկրաինայի շուրջ ծավալվող գործընթացներով:

ԱՄՆ-ն չճանաչեց Ղրիմը որպես ՌԴ մաս և կոչ արեց Ռուսաստանին հարգելու միջազգային իրավունքն ու վերականգնելու Ուկրաինայի տարածքային ամբողջականությունը: Այս իրադարձություններին հաջորդեց Ռուսաստանի նկատմամբ սահմանված բազմաթիվ պատժամիջոցների կիրառումը:

Ռուս-ամերիկյան հարաբերությունները լարվում են 2015 թ., երբ ԱՄՆ-ն որոշում է Արևելյան Եվրոպայում տեղակայել զինտեխնիկա՝ տանկեր, ծանր հրետանի:

2022 թ. վերսկսված և դեռևս չավարտված ռուս-ուկրաինական պատերազմը (մասնավորապես Դոնեցկի, Լուգանսկի, Զապորոժեի, Խերսոնի տարածքների հանրաքվեն) խորացրեց ռուս-ամերիկյան հակասությունները:

2017-2018 թթ. ընթացքում ԱՄՆ-ի ընդունած բոլոր երեք ռազմավարական փաստաթղթերում՝ ազգային անվտանգության[1], ազգային պաշտպանության[2] և միջուկային զսպման քաղաքականության ռազմավարություններում[3], նշվում է, որ ԱՄՆ հիմնական

սպառնալիքն այլևս մեծ տերությունների միջև մրցակցությունն է, այլ ոչ թե ահաբեկչությունը, մասնավորապես՝ Ռուսաստանի, Չինաստանի, Իրանի և Հյուսիսային Կորեայի կողմից:

Ռուսաստանի անունը լայնորեն արծարծվում է նաև ԱՄՆ միջուկային ռազմավարությունում (Nuclear Posture Review)[4], որում հստակ նշվում է, որ ԱՄՆ-ի համար մրցակից պետություններ են ՌԴ-ն և ՉԺՀ-ն:

2019 թ. Պենտագոնի և ԱՄՆ առաջատար վերլուծաբանների պատրաստած «Ռուսաստանի ռազմավարական մտադրությունները» (Russian Strategic Intensions)[5] ուսումնասիրության մեջ նշվում է, որ ԱՄՆ-ի համար ՌԴ-ն վտանգ է ներկայացնում ոչ միայն ռազմական, այլ նաև քաղաքական և գաղափարական ոլորտներում:

Հակահրթիռային պաշտպանության համակարգերի մասին ԱՄՆ ռազմավարությունում (US Missile Defense Review), որում ՌԴ գործողությունները նորից դիտարկվում են որպես սպառնալիք, նշվում են նաև ԱՄՆ-ի հակառակորդ և մրցակից պետությունների՝ Չինաստանի, Իրանի և ՀԿԺՀ-ի հետ ՌԴ հարաբերությունները ՀՕՊ ոլորտում:

Նշենք, որ ռազմավարական փաստաթղթերն ունենում են տարբեր կառուցվածքներ, ձևեր և ոճեր: Օրինակ՝ ԱՄՆ ռազմավարության փաստաթուղթն ուսումնասիրելիս տեսնում ենք, որ ազատ ոճով է շարադրված, այսինքն՝ երկխոսությունը քաղաքացու հետ է, պետությունը դիմում է իր հասարակությանը՝ շեշտելով «մենք», «մեր» բառերը («Մենք առաջնորդվելու ենք դիվանագիտությամբ», «մեր դաշնակիցների թիկունքում», «Մենք լիազորություն կտանք մեր դիվանագետներին» և այլն), իսկ ՌԴ ռազմավարությունը կանոնակարգված է, շարադրված իրավական, դիվանագիտական լեզվով:

2021 թ. մարտի 3-ին Սպիտակ տունը հրապարակել է ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության միջանկյալ ուղեցույցը[6]: Սա առաջին դեպքն է, որ

ԱՄՆ վարչակազմը հրապարակում է ԱԱՌ միջանկյալ ուղեցույց:

Հատկանշական է, որ ԱՄՆ ԱԱՌ փաստաթղթում դիվանագիտությունը սահմանվում է որպես ԱՄՆ արտաքին քաղաքականության առաջատար գործիք: Դրանում նշվում է. «Միացյալ Նահանգները երբեք չի վարանի ուժ կիրառել՝ պաշտպանելու ԱՄՆ ազգային կենսական շահերը, բայց ռազմական ուժի կիրառումը պետք է լինի ոչ թե առաջին, այլ վերջին միջոցը»[7]:

Ուղեցույցում սահմանվում է ԱՄՆ ռազմավարության առանցքային նպատակը՝ նոր աշխարհակարգում պահպանել առաջնորդող դերակատարությունը. վերականգնելով ԱՄՆ-ի հանդեպ վստահությունը և վերահաստատելով հեռագնա գլոբալ առաջնորդությունը՝ ապահովել, որ ոչ թե Չինաստանը, այլ Ամերիկան սահմանի միջազգային օրակարգը՝ ձևավորելու նոր գլոբալ նորմեր և համաձայնագրեր, որոնք առաջ կմղեն ԱՄՆ շահերը և կարտացոլեն ԱՄՆ արժեքները:

Փաստաթղթում ընդգծվում են Միացյալ Նահանգների կայուն առավելությունները՝ ձևավորելու միջազգային քաղաքականության ապագան՝ առաջ մղելով ԱՄՆ շահերը և արժեքները, ստեղծելու ավելի ազատ, անվտանգ և բարեկեցիկ աշխարհ. «Կուժեղանանք ու կկանգնենք մեր դաշնակիցների թիկունքին, կաշխատենք համախոհ գործընկերների հետ և կհամախմբենք մեր հավաքական ուժը, ընդհանուր շահերը, առաջխաղացման համար կվերացնենք ընդհանուր սպառնալիքները: Մենք առաջնորդվելու ենք դիվանագիտությամբ»[8]:

ԱՄՆ ԱԱՌ փաստաթղթում նշվում է՝ պետք է դիմակայել այն իրականությանը, երբ իշխանության բաշխումն ամբողջ աշխարհում փոխվում է՝ ստեղծելով նոր սպառնալիքներ: Առանձնակի նշվում է պայքարը ազգայնականության («….բախվում ենք աճող ազգայնականության, նահանջող ժողովրդավարության աշխարհին»), ավտորիտար պետությունների դեմ՝ ի դեմս Ռուսաստանի և Չինաստանի:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, նշվում է, որ նա հաստատակամ է իր գլոբալ ազդեցությունը համաշխարհային ասպարեզում ուժեղացնելու հարցում: Չինաստանը դիտվում է պոտենցիալ մրցակից, որը կարող է մեկտեղել իր տնտեսական, դիվանագիտական, ռազմական և տեխնոլոգիական ուժը՝ միջազգային համակարգին ուղղված կայուն մարտահրավեր նետելու համար:

Ըստ ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության՝ տարածաշրջանային դերակատարները, ինչպիսիք են Իրանը և Հյուսիսային Կորեան, սպառնալիք են ԱՄՆ դաշնակիցների և գործընկերների համար՝ մարտահրավեր նետելով տարածաշրջանային կայունությանը: Այդ առումով ԱՄՆ-ն կոչ է անում իր տարածաշրջանային գործընկերներին զսպելու Իրանի ագրեսիան և նրանից եկող՝ ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը սպառնացող վտանգները:

Դիտարկված սպառնալիքներին դիմակայելու համար փաստաթղթում նշվում են հետևյալ լուծումները.

«- Մենք լիազորություն կտանք մեր դիվանագետներին՝ աշխատելու նվազեցնել Հյուսիսային Կորեայի աճող միջուկային և հրթիռային ծրագրերից բխող սպառնալիքը՝ ուս ուսի կանգնելով Կորեայի Հանրապետության և Ճապոնիայի կողքին:

- Ընդառաջ գնալով ավելի հաստատակամ Չինաստանի և ապակայունացնող Ռուսաստանի ռազմավարական մարտահրավերներին՝ մենք կգնահատենք ուժերի համապատասխան կառուցվածքը, հնարավորությունները և չափերը:

- Պետք է ներդրումներ անել և արդիականացնել Հյուսիսատլանտյան դաշինքը (ՆԱՏՕ), Ավստրալիայի, Ճապոնիայի և Կորեայի Հանրապետության հետ դաշինքները, որոնք մյուս գլոբալ դաշինքների և գործընկերությունների հետ միասին ԱՄՆ ամենամեծ ռազմավարական արժեքն են:

- ԱՄՆ ազգային կենսական շահերը պարտադրում են ամենախոր կապ Եվրոպայի և արևմտյան կիսագնդի հետ՝ խորացնելու համագործակցությունը անդրատլանտյան գործընկերությունների հետ՝ ձևավորելով կայուն, ընդհանուր օրակարգ Եվրամիության և Միացյալ Թագավորության հետ որոշիչ խնդիրների վերաբերյալ:

- Պետք է Մերձավոր Արևելքում պահպանել Իսրայելի անվտանգությանը մեր «երկաթյա հավատարմությունը»՝ միաժամանակ ձգտելով շարունակելու նրա ինտեգրումն իր հարևանների հետ և վերստանձնելու մեր դերը որպես երկու պետությունների կենսունակությունը խթանող: Մենք կաշխատենք մեր տարածաշրջանային գործընկերների հետ՝ զսպելու Իրանի ագրեսիան»[9]:

Միաժամանակ աշխատում է դիվանագիտությունը որպես ԱՄՆ արտաքին քաղաքականության առաջնային գործիք: Նշվում է, որ ռազմավարական մրցակցությունը չի բացառում և չպետք է խոչընդոտի Չինաստանի հետ համագործակցությունը, ԱՄՆ ազգային շահերից բխում է բովանդակալից երկխոսություն Ռուսաստանի և Չինաստանի հետ մի շարք ռազմական տեխնոլոգիաների զարգացման շուրջ, որոնք ենթադրում են ռազմավարական կայունություն:

2021 թ. հուլիսի 2-ին ՌԴ-ն ընդունեց իր ազգային անվտանգության նոր ռազմավարությունը[10]: Այն հիմնական ռազմավարական փաստաթուղթն է, որը սահմանում է Ռուսաստանի Դաշնության ազգային շահերը և ռազմավարական առաջնահերթությունները, երկարաժամկետ հեռանկարում ՌԴ ազգային անվտանգության և կայուն զարգացման ապահովման ոլորտում պետական քաղաքականության նպատակներն ու խնդիրները: Դրա իրավական հիմքը ՌԴ Սահմանադրությունն է, 2010 թ. դեկտեմբերի 28-ի թիվ 390-ՖՁ «Անվտանգության մասին» և 2014 թ. հունիսի 28-ի թիվ 172-ՖՁ «Ռուսական ռազմավարական պլանավորման մասին» դաշնային օրենքները:

ՌԴ ԱԱՌ-ում առանձնակի նշվում է, որ համաշխարհային տնտեսական և քաղաքական գործընթացների զարգացման արդյունքում առաջացած կենտրոնների թվի աճը, համաշխարհային և տարածաշրջանային նոր առաջատար երկրների դիրքերի ամրապնդումը հանգեցնում են հին աշխարհակարգի վերաձևավորմանը, այսինքն՝ նոր աշխարհակարգի

ճարտարապետությանը, աշխարհի նոր կանոնների և սկզբունքների ձևավորմանը:

«Աճող աշխարհաքաղաքական լարվածության համատեքստում Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականությունը նպաստելու է միջազգային իրավունքի, համընդհանուր, հավասար և անբաժանելի անվտանգային սկզբունքների վրա հիմնված միջազգային հարաբերությունների համակարգի կայունության բարձրացմանը, առանց բաժանարար գծերի բազմակողմ համագործակցության խորացմանը, միաժամանակ, ունենալով Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) և նրա Անվտանգության խորհրդի կենտրոնական համակարգողի դեր, կարևորում է գլոբալ և տարածաշրջանային խնդիրների համատեղ լուծումը»[11]:

Աշխարհաքաղաքական անկայունությունն ու հակամարտությունների, միջպետական հակասությունների սրումը ուղեկցվում են ռազմական ուժի կիրառման սպառնալիքի աճով: Այդ առումով ՌԴ-ն հետևողականորեն վարում է ռազմական քաղաքականություն, որն ապահովում է Ռուսաստանի Դաշնության պաշտպանությունը ռազմական վտանգներից և սպառնալիքներից:

Անդրադառնանք այդ սպառնալիքներին.

«Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի մոտ որոշ երկրների գործողություններն ուղղված են Անկախ Պետությունների Համագործակցությանը (ԱՊՀ) կազմալուծման գործընթացներ ներշնչելուն, որպեսզի ոչնչացնեն Ռուսաստանի կապերն իր ավանդական դաշնակիցների հետ:

Մի շարք պետություններ ՌԴ-ին համարում են սպառնալիք և նույնիսկ ռազմական հակառակորդ: Աճող վտանգ կա, որ զինված հակամարտությունները կվերածվեն տեղական և տարածաշրջանային պատերազմների, այդ թվում՝ միջուկային տերությունների մասնակցությամբ:

Կառավարման արևմտյան լիբերալ մոդելի ճնշման խորապատկերին մի շարք պետություններ փորձում են միտումնավոր իմաստազրկել ավանդական արժեքները, խեղաթյուրել համաշխարհային պատմությունը, վերանայել իրենց տեսակետները Ռուսաստանի դերի և տեղի վերաբերյալ, վերականգնել ֆաշիզմն ու հրահրել էթնիկ և կրոնական հակամարտություններ, իրականացնել տեղեկատվական արշավներ՝ միտված Ռուսաստանի թշնամական իմիջի ձևավորմանը:

Միջազգային ահաբեկչական և ծայրահեղական կազմակերպությունները ձգտում են ակտիվացնելու ՌԴ քաղաքացիների նկատմամբ քարոզչությունն ու նրանց հավաքագրումը, նրանցից գաղտնի բջիջների կազմավորումը Ռուսաստանի տարածքում և ռուս երիտասարդների ներգրավումն անօրինական գործունեության մեջ»[12]:

Ավելին՝ ՌԴ ռազմավարությունում նշվում է, որ ոչ բարեկամ երկրները փորձում են օգտագործել երկրի սոցիալ-տնտեսական խնդիրները՝ քանդելու նրա ներքին միասնությունը, արմատականացնելու բողոքի շարժումը, պառակտելու ռուս հասարակությունը. «Ռուսաստանի Դաշնության համար ռազմական վտանգների և ռազմական սպառնալիքների մեծացմանը նպաստում են Ռուսաստանի, նրա դաշնակիցների և գործընկերների վրա ուժային ճնշման փորձերը՝ ՌԴ սահմանների մոտ Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության ռազմական ենթակառուցվածքների ստեղծումը, հետախուզական գործունեության ակտիվացումը, խոշոր ռազմական կազմավորումների և միջուկային զենքի կիրառման գաղափարի հատունացումը Ռուսաստանի Դաշնության դեմ»[13]:

«Համաշխարհային հակահրթիռային պաշտպանության համակարգի ներուժի զարգացման խորապատկերին Ամերիկայի Միացյալ Նահանգները հետևողական քաղաքականություն է վարում սպառազինության վերահսկման ոլորտում միջազգային պարտավորություններից հրաժարվելու ուղղությամբ:

Եվրոպայում և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ԱՄՆ-ի միջին և փոքր հեռահարության հրթիռների ծրագրված տեղակայումը սպառնալիք է ռազմավարական կայունության և միջազգային անվտանգության համար»[14]:

ՌԴ ԱԱՌ փաստաթղթում հատուկ նշվում է, որ համաշխարհային և տարածաշրջանային անվտանգության համակարգերի թուլացումը պայմաններ է ստեղծում միջազգային ահաբեկչության և ծայրահեղականության տարածման համար: Լարվածությունը շարունակում է աճել հետխորհրդային տարածքում, Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում, Աֆղանստանում և Կորեական թերակղզու հակամարտությունների գոտիներում:

ՌԴ Նշված փաստաթղթում կարևորվում է ռուսական ավանդական հոգևոր և բարոյական արժեքների, մշակույթի և պատմական հիշողության պաշտպանությունը: Դրանք ակտիվ հարձակման են ենթարկվում Միացյալ Նահանգների և նրա դաշնակիցների, ինչպես նաև անդրազգային կորպորացիաների, արտասահմանյան ոչ առևտրային ոչ կառավարական, կրոնական, ծայրահեղական և ահաբեկչական կազմակերպությունների կողմից: Նրանք տեղեկատվական և հոգեբանական ազդեցություն ունեն անհատական, խմբային և հասարակական գիտակցության վրա՝ տարածելով սոցիալական և բարոյական արժեքներ, որոնք հակասում են ՌԴ ժողովուրդների ավանդույթներին և համոզմունքներին:

Արտաքին սպառնալիքներին, մարտահրավերներին դիմակայելու համար կազմակերպվում է երկրի պաշտպանությունը, պետական և հասարակական անվտանգության ապահովումը: Պետական և հասարակական անվտանգության ապահովման նպատակներն են՝ պաշտպանել ՌԴ սահմանադրական կարգը, մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ապահովել ՌԴ ինքնիշխանությունը, անկախությունը, պետական և տարածքային ամբողջականությունը, ամրապնդել քաղաքացիական խաղաղությունն ու ներդաշնակությունը:

ՌԴ ազգային անվտանգության ռազմավարությունում հստակեցված են նրա արտաքին քաղաքականության նպատակները, դրանց իրագործման համար կարևոր խնդիրների լուծումները, որոնցից

է, օրինակ, նպաստավոր պայմանների ստեղծումը երկրի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման, ազգային անվտանգության ապահովման և որպես ժամանակակից աշխարհում ազդեցիկ կենտրոններից մեկի՝ ՌԴ դիրքի ամրապնդման համար:

ՌԴ արտաքին քաղաքականության նպատակների իրագործման համար անհրաժեշտ է՝

- խորացնել համագործակցությունը ԱՊՀ անդամ երկրների, Աբխազիայի Հանրապետության և Հարավային Օսիայի Հանրապետության հետ երկկողմ հիմունքներով և ինտեգրացիոն ասոցիացիաների, առաջին հերթին՝ Եվրասիական տնտեսական միության, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության, միութենական պետության շրջանակներում,
- ապահովել մեծ եվրասիական գործընկերության շրջանակներում տնտեսական համակարգերի ինտեգրումը և բազմակողմ համագործակցության զարգացումը,
- զարգացնել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ համապարփակ գործընկերությունը և ռազմավարական փոխգործակցությունը, հաստատել հատկապես ռազմավարական գործընկերություն Հնդկաստանի Հանրապետության հետ, այդ թվում՝ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում կայունության և անվտանգության ապահովման հուսալի մեխանիզմներ ստեղծելու նպատակով,
- օժանդակել Ռուսաստանի Դաշնությանը հարևան պետությունների տարածքներում լարվածության և հակամարտությունների օջախների վերացմանը,
- բարձրացնել ՌԴ խաղաղապահ դերը,
- աջակցել ՌԴ դաշնակիցներին և գործընկերներին պաշտպանության և անվտանգության ապահովմանն առնչվող հարցերի լուծման, նրանց ներքին գործերին արտաքին միջամտության փորձերի չեզոքացման գործում,
- ամրապնդել եղբայրական կապերը ռուս, բելառուս և ուկրաինացի ժողովուրդների միջև,
- հակազդել պատմությունը կեղծելու փորձերին, պաշտպանել պատմական ճշմարտությունը և պահպանել պատմական հիշողությունը:

«Ռուսաստանի Դաշնությունը ձգտում է բարձրացնելու և ամրապնդելու վստահությունն ու անվտանգությունը միջազգային ոլորտում: Նոր գլոբալ պատերազմի սանձազերծման սպառնալիքը նվազեցնելու, սպառազինության մրցավազքը և դրա տեղափոխումը նոր վայրեր կանխելու համար անհրաժեշտ է կատարելագործել ռազմավարական կայունության պահպանման մեխանիզմները, սպառազինության վերահսկումը»[15]:

«Ռուսաստանը հավատարիմ է մնում միջազգային և ներքին հակամարտությունների կարգավորման համար քաղաքական միջոցների, առաջին հերթին՝ դիվանագիտության և խաղաղության պահպանման մեխանիզմների կիրառմանը: Այն դեպքում, երբ օտարերկրյա պետությունները կկատարեն ոչ բարեկամական գործողություններ, որոնք վտանգ կներկայացնեն ՌԴ ինքնիշխանության և տարածքային ամբողջականության համար, այդ թվում՝ կապված կլինեն քաղաքական կամ տնտեսական բնույթի սահմանափակող միջոցների (պատժամիջոցների) կիրառման կամ ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական միջոցների օգտագործման հետ, Ռուսաստանի Դաշնությունը .....»[16]:

Համեմատելով երկու գերտերությունների ռազմավարական փաստաթղթերը՝ տեսանելի են դառնում նրանց ռազմավարական նպատակների տարբերությունները. եթե ՌԴ-ն սահմանում է, որ ՌԴ առանցքային նպատակն է նպաստավոր պայմաններ ստեղծելը երկրի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման համար, ապահովել ազգային անվտանգությունը, ամրապնդել ՌԴ դիրքը որպես ազդեցիկ կենտրոններից մեկը ժամանակակից աշխարհում, ապա ԱՄՆ ռազմավարության առանցքային նպատակն է նոր աշխարհակարգում պահպանել առաջնորդի դերակատարությունը, վերահաստատել գլոբալ առաջնորդությունը, հասնել նրան, որ ԱՄՆ-ն սահմանի միջազգային օրակարգը՝ ձևավորելով նոր գլոբալ նորմեր և համաձայնագրեր, որոնք առաջ կմղեն ԱՄՆ շահերը և կարտացոլեն ԱՄՆ արժեքները:

Հետևելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստին[17]՝ կարելի է հստակ հասկանալ թե՛ ՌԴ և թե՛ ԱՄՆ դիրքորոշումները և հավակնությունները, այն, որ յուրաքանչյուր երկրի ներկայացուցչի ելույթն անշեղորեն արտացոլում է իր երկրի ԱԱՌ-ի սահմանած ռազմավարական նպատակները:

Թեև ԱՄՆ-ն աշխարհին հայտարարում է՝ «Մենք առաջնորդվելու ենք դիվանագիտությամբ», սակայն տեսնում ենք, որ նրա առավելապաշտական նկրտումներն ավելի են խորացնելու ՌԴ-ԱՄՆ կոնֆլիկտային հարաբերությունները:

Աղբյուրը

1. Տես National Security Strategy of the USA, https://trumpwhitehouse.archives.gov/wp-content/uploads/2017/12/NSS-Final-12-18-2017-0905.pdf (մուտք՝ 30.09.2022):
2. Տես Summary of the US National Defense Strategy, 2018, https://dod.defense.gov/Portals/1/Documents/pubs/2018-National-Defense-Strategy-Summary.pdf (մուտք՝ 30.09.2022):
3. Տես The US Nuclear Posture Review, 2018, https://media.defense.gov/2018/Feb/02/2001872886/-1/-1/1/2018-NUCLEAR-POSTURE-REVIEW-FINAL-REPORT.PDF (մուտք՝ 30.09.2022):
4. Տես նույն տեղում:
5. Տես Russian Strategic Intentions, https://calhoun.nps.edu/bitstream/handle/10945/62483/SMA-TRADOC-Russian-Strategic-Intentions-White-Paper.pdf?sequence=1&isAllowed=y (մուտք՝ 30.09.2022):
6. Տես RENEWING AMERICA'S ADVANTAGES Interim National Security Strategic Guidance, 2021, https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2021/03/NSC-1v2.pdf (մուտք՝ 30.09.2022):
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում:
10. Տես Стратегия национальной безопасности Российской Федерации, 2021., http://www.kremlin.ru/acts/bank/47046/page/3 (մուտք՝ 30.09.2022):
11. Նույն տեղում:
12. Նույն տեղում:
13. Стратегия национальной безопасности Российской Федерации, 2021.
14. Նույն տեղում:
15. Նույն տեղում:
16. Նույն տեղում:
17. Տես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստ, https://www.youtube.com/watch?v=tbP0Z17vG2w, https://www.youtube.com/watch?v=dNImvyUj0k8 (մուտք՝ 30.09.2022):

ԱՄՆ զենքի վաճառքի նախապատմությունը և հիմնական փաստաթղթերը

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

Միացյալ Նահանգների կողմից զենքի միջազգային վաճառքը սկսվել է Առաջին համաշխարհային պատերազմից հետո, սակայն միայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո է ԱՄՆ-ի կողմից զենքի վաճառքը հասել մեծ ծավալների: Զենքի վաճառքի՝ աննախադեպ ծավալների հասնելու հիմնական պատճառներից մեկը ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև մրցակցությունն էր Սառը պատերազմի ժամանակ: Այդ տարիներին ԱՄՆ-ն օգտագործել է զենքի վաճառքը որպես Արևմտյան Եվրոպայի պաշտպանության հիմնարար միջոց, իսկ առավել լայն իմաստով՝ ԱՄՆ նպատակն էր կանխել ԽՍՀՄ առաջխաղացումը և կոմունիզմի տարածումը:

Այժմ Միացյալ Նահանգները զենքի արտահանմամբ աշխարհում առաջատարն է: ԱՄՆն զենքի արտահանումը 2012-2016 թթ. համեմատ 2017-2021 թթ. մեծացրել է 14 %-ով՝ իր համաշխարհային մասնաբաժինը 32 %-ից հասցնելով 39 %-ի: ԱՄՆ-ի և մեծությամբ զենքի երկրորդ արտահանող Ռուսաստանի միջև զենքի վաճառքի ծավալների տարբերությունը զգալիորեն մեծացել է. եթե 2012-2016 թթ. երկու երկրների արտահանումների միջև տարբերությունը կազմում էր 34 %՝ հօգուտ ԱՄՆ-ի, ապա 2017-2021 թթ.՝ 108 %: 2017-2021 թթ. ԱՄՆ-ն սպառազինություն է մատակարարել 103 երկրների[1]:

Միացյալ Նահանգների 37-րդ նախագահ Ռիչարդ Նիքսոնի օրոք զենքի վաճառքը վերածվեց ԱՄՆ արտաքին քաղաքականության կարևորագույն գործիքներից մեկի՝ հիմք դնելով «Նիքսոնի դոկտրինին»: Ըստ այս դոկտրինի՝ զենքի վաճառքը դիտարկվում էր որպես աշխարհում ազդեցությունը պահպանելու միջոց: Այդ դոկտրինի որդեգրումը պայմանավորված էր նրանով, որ Նիքսոնը անհանգստացած էր Վիետնամում ամերիկյան ներգրավվածությամբ, քանի որ նրա՝ նախագահի պաշտոնը ստանձնելու ժամանակ ԱՄՆ-ն արդեն 4 տարի ներգրավված էր Վիետնամի դեմ պատերազմում՝ տալով 25 հազար զոհ: Նպատակը, առանց ԱՄՆ համաշխարհային ազդեցության թուլացման, Վիետնամից ամերիկյան զորքերի աստիճանական դուրսբերումն էր, ինչպես նաև հետագայում այլ հակամարտություններում, առանց ԱՄՆ զորքերի օգտագործման, ամերիկյան ներ-կայության ապահովումը: Այդ ամենն իրականացվելու էր զենքի վաճառքի և տնտեսական օգնության միջոցով: Զենք ստացող երկրները ԱՄՆ զենքի միջոցով պետք է պատասխանատվություն ստանձնեին իրենց պաշտպանությունը կազմակերպելու համար: Բացի այդ՝ ԱՄՆ-ի համար զենքերի արտահանումն ու համատեղ զորավարժությունների անցկացումը սկսեցին դիտարկվել որպես այլ երկրներում ռազմակայաններին հասանելիություն ձեռք բերելու միջոց[2]:

Միացյալ Նահանգների կողմից զենքի վաճառքը ներկայումս կարգավորվում է 1976 թ. «Ամերիկյան արտահանման վերահսկումների ակտի» միջոցով (ԱԱՎԱ, «American Export Controls Act» (AECA))[3]: Այս ակտում սահմանվում է, որ Միացյալ Նահանգների նպատակը շարունակում է մնալ պատերազմներից և սպառազինության խնդիրներից զերծ աշխարհը, որտեղ ուժի կիրառումը ենթակա է օրենքի գերակայությանը, և միջազգային խնդիրները լուծվում են խաղաղ ճանապարհով: Ըստ այդմ, ակտով թույլատրվում է ԱՄՆ կառավարությանը զենք վաճառել բարեկամական երկրներին, որոնք ունեն բավարար միջոցներ՝ սպառազինելու իրենց ռազմական ուժերը կամ ստանձնելու ծախսերի մեծ մասը՝ առանց իրենց տնտեսությունները չափազանց մեծ բեռի տակ դնելու: Այնուամենայնիվ, վաճառքի գործընթացը պետք է համապատասխանի ակտում նշված սահմանափակումներին և վերահսկման մեխանիզմներին, ԱՄՆ ազգային անվտանգության նպատակներին և ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին:

Ակտը առաջ բերեց 4 կարևոր փոփոխություն: Նախ՝ ֆորմալիզացվեց գործադիր ճյուղի առաջատար դերը զենքի վաճառքի իրականացման և դրա համար բանակցությունների հարցում՝ առաջնային պատասխանատվությունը բաժանելով Պետական դեպարտամենտի և Պաշտպանության դեպարտամենտի միջև: Երկրորդ՝ Սպիտակ տունը պարտավորվում էր տեղեկացնել Կոնգրեսին մոտալուտ վաճառքի մասին որոշակի գումարային սահմանն անցնելուց հետո (խոշոր սպառազինություն՝ $14 մլն, պաշտպանական մասնիկներ, վերապատրաստում կամ այլ տեսակի պաշտպանական ծառայություններ՝ $50 մլն, ՆԱՏՕ-ի անդամ-պետությունների, Ավստրալիայի, Ճապոնիայի, Հարավային Կորեայի, Իսրայելի և Նոր Զելանդիայի դեպքում՝ համապատասխանաբար $25 մլն և $100 մլն)[4]: Երրորդ՝ Սպիտակ տունը պարտավորվում էր

գնահատել յուրաքանչյուր առաջարկի քաղաքական-ռազմական ռիսկերը՝ ապահովելու ազգային անվտանգության շահերի գերակայությունը: Ի վերջո, Կոնգրեսին վերապահվեց զենքի վաճառքի արգելումը ծանուցումից հետո 30 օրվա ընթացքում[5]:

Բացի զենքի վաճառքի իրավական կարգավորումներից՝ կա նաև քաղաքական բաղադրիչ: ԱՄՆ զենքի վաճառքի քաղաքականությունը սահմանվում է որոշակի փաստաթղթով՝ «Սովորական սպառազինությունների փոխանցման քաղաքականություն» («Conventional Arms Transfer Policy»), որը պարբերաբար թարմացվում է նախագահների կողմից[6]: Ընդհանուր առմամբ լուրջ փոփոխություններ չեն կատարվում, սակայն կա այս կամ այն չափանիշի շեշտադրման տարբերություն: Այսպես, ի տարբերություն Նիքսոնի[7] 1995 թ. քաղաքականության, Օբամայի 2014 թ. հրամանագրում մարդու իրավունքների և դրանց խախտումների վրա առավել մեծ շեշտադրում էր արվել, մասնավորապես որպես չափորոշիչ նշվում էր, որ ստացող կողմը չպետք է սպառազինությունն օգտագործի մարդու իրավունքների դեմ ոտնձգության կամ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը խախտելու կամ ահաբեկչության համար[8]՝ դրանով իսկ կանխելով որևէ ձևով ԱՄՆ-ի ներքաշումը կամ ասոցացումը նման խախտումների հետ: Ի լրումն Օբամայի քաղաքականությանը՝ Թրամփի վարչակազմը շեշտում էր նաև ԱՄՆ տնտեսական անվտանգության հարցը[9]: Բայդենի վարչակազմը նմանատիպ փաստաթուղթ դեռևս չի ընդունել, այնուամենայնիվ, վերջինիս քաղաքական առաջնահերթություններից ակնհայտ է, որ մարդու իրավունքներն ու ժողովրդավարության պահպանումը առանցքային կարևորություն կստանան նաև այս ոլորտում:

Միացյալ Նահանգների կողմից զենքի վաճառքի իրականացման ձևերը

ԱՄՆ-ի կողմից օտարերկրյա պետություններին զենքի վաճառքը իրականացվում է երկու ձևով: Առաջին՝ *ուղիղ կոմերցիոն վաճառք*, որի դեպքում օտար կառավարությունը, կորպորացիան կամ անհատը ուղիղ ձևով աշխատում է ԱՄՆ պաշտպանական արդյունաբերության ոլորտի իր գործընկերների հետ՝ սպառազինություն կամ ռազմական ծառայություն ձեռք բերելու նպատակով: Այս դեպքում ԱՄՆ կառավարությունը և պաշտպանության դեպարտամենտը ուղղակիորեն ներգրավված չեն: Եթե զենքը կամ ռազմական ծառայությունը ներառված է «Զենքերի միջազգային շրջանառության կարգավորումների» («International Traffic in Arms Regulations») ակտում և դրան կից ԱՄՆ ռազմամթերքի ցանկում (USA Munitions List), Պետդեպարտամենտի կողմից լիցենզիա կամ թույլտվության այլ ձև ստանալը պարտադիր է[10]:

Երկրորդ՝ *օտարերկրյա ռազմական վաճառք*, որի դեպքում օտար պետությունը դիմում է ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտին՝ նրա միջոցով զենք գնելու համար: Նախ օտար պետությունը պետք է դիմում ուղարկի (Letter of Request) ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի համապատասխան մարմին (Defense Security Cooperation Agency): Դիմումը մշակվում է այս գործակալության կողմից՝ դառնալով «Առաջարկի և ընդունման նամակ» (Letters of Offer and Acceptance): Այնուհետև, արժանանալով ԱՄՆ կառավարության և օտար պետության հավանությանը, նամակը փոխանցվում է Պետդեպարտամենտին, որը դիտարկում է այն իրավական և քաղաքական շրջանակներում: ԱԱՎԱ-ով սահմանված գումարային շեմն անցնելու դեպքում այդ մասին ծանուցվում է Կոնգրեսին: Դեպարտամենտի կողմից վաճառքի՝ հավանության արժանանալուց հետո համապատասխան մարմինը «Առաջարկի և ընդունման նամակը» ներկայացնում է գործընկեր երկրին: Այնուհետև ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտը սկսում է վաճառքի գործընթացը[11]:

ԱՄՆ Կոնգրեսի դերը զենքի վաճառքի հարցում

ԱՄՆ-ի կողմից զենքի վաճառքի գործընթացում հետաքրքրական է Կոնգրեսի դերը, որը կարող է արգելք կիրառել զենքի վաճառքի նկատմամբ ծանուցումից 30, իսկ ՆԱՏՕ-ի անդամ-պետությունների և Ավստրալիայի, Ճապոնիայի, Հարավային Կորեայի, Իսրայելի, Նոր Զելանդիայի դեպքում՝ 15 օրվա ընթացքում[12]: Կոնգրեսի կողմից նման լիազորությունների ձեռքբերումը պայմանավորված էր նրանով, որ նախկինում Նիքսոնի վարչակազմը միակողմանիորեն էր գործել այս հարցում, մասնավորապես՝ Իրան, Սաուդյան Արաբիա և Քուվեյթ զենքի փոխադրման ժամանակ: Դա հետևեց 1974 թ. Կոնգրեսի կողմից «Օտարերկրյա աջակցության ակտի» Նելսոն-Բինգհեմի ուղղման ընդունմանը, որով նախագահը պարտավորվում էր տեղեկացնել Կոնգրեսին 25 մլն ԱՄՆ դոլարը գերազանցող զենքի վաճառքի մասին, որից հետո Կոնգրեսը սահմանված ժամկետում կարող էր բանաձևով արգելափակել վաճառքը: Փոփոխված

ակտն արագ գործի է դրվում, երբ Ջ. Ֆորդի վարչակազմը 1975 թ. հուլիսին տեղեկացնում է Կոնգրեսին Հորդանանին օդային պաշտպանության հրթիռների մարտկոցներ վաճառելու մտադրության մասին: Հաշվի առնելով, որ Կոնգրեսն անհանգստացած էր Իսրայելի (որի կառավարությունը դեմ էր վաճառքին) անվտանգությամբ, և նախագահի վարչակազմը Կոնգրեսի հետ նախապես չէր խորհրդակցել՝ վաճառքը կասեցվեց: Այնուամենայնիվ, այն իրականացվեց մեկ տարի անց՝ մի շարք փոփոխություններ մտցնելուց հետո, որոնք փարատեցին մտահոգությունները: Սա դարձավ կարևոր նախադեպ զենքի վաճառքի հարցում Կոնգրեսի դերի առումով[13]:

Այս ընթացակարգերը հետագայում ընդլայնվեցին 1976 թ. «Ամերիկյան արտահանման վերահսկումների ակտով» և հետագա փոփոխություններով: 1986 թ. Կոնգրեսը լրացում կատարեց ԱԱՎԱ-ում՝ պահանջելով ընդունել համատեղ բանաձև զենքի վաճառքն արգելափակելու համար: Վաճառքն արգելելու համար Կոնգրեսի երկու պալատները պետք է ընդունեն համատեղ բանաձև, իսկ նախագահն իր հերթին կարող է վետո կիրառել: Այդ դեպքում վետոն հնարավոր կլինի շրջանցել երկու պալատներում ձայների 2/3-րդի միջոցով: Այնուամենայնիվ, նախագահը կարող է շրջանցել ԱԱՎԱ-ով սահմանված 30-օրյա զննման ժամկետը՝ պաշտոնապես զեկուցելով Կոնգրեսին (ԱԱՎԱ 36(b)(1)-ի կամ 36(c)(1)-ի համաձայն), որ ստեղծվել է արտակարգ իրավիճակ, որը պահանջում է իրականացնել զենքի վաճառքը՝ ելնելով ԱՄՆ ազգային շահերից: Նախագահը պետք է Կոնգրեսին ներկայացնի իր որոշման մասին մանրամասն զեկույց, որը պետք է ներառի արտակարգ հանգամանքների նկարագրությունը: Հարկ է նշել, որ Կոնգրեսը երբեք հաջողությամբ չի արգելափակել զենքի վաճառքը համատեղ բանաձևով, բայց հաճախ մոտ է եղել դրան: Այնուամենայնիվ, զենքի վաճառքի վերաբերյալ իր անհամաձայնությունը Կոնգրեսն արտահայտում է՝ հաճախ ազդելով ժամանակի և վաճառվելիք զենքի կազմի փոփոխության վրա: Օրինակ՝ 1986 թ. ապրիլի 8-ին ԱՄՆ նախագահ Ռ. Ռեյգանը պաշտոնապես առաջարկեց Սաուդյան Արաբիային վաճառել 1700 «Sidewinder» և 100 «Harpoon» հրթիռներ, 200 «Stinger» հրթիռի արձակիչ և 600 «Stinger» հրթիռի վերալցավորող սարք: Մայիսի 6-ին Սենատն ընդունեց համատեղ բանաձև, որն արգելում էր այդ վաճառքը: Ներկայացուցիչների պալատի անդամները, համամիտ լինելով Սենատի հետ, ընդունեցին համանման բանաձև: Չնայած մայիսի 21-ին նախագահը բանաձևի հարցում կիրառեց վետոյի իր իրավունքը, այնուամենայնիվ, տուրք տալով Կոնգրեսի մտահոգություններին, չներառեց վիճահարույց «Stinger» հրթիռներն ու արձակիչները: Հունիսի 5-ին Սենատն իր քվեարկությամբ պահպանեց նախագահի վետոն, և «Sidewinder» ու «Harpoon» հրթիռների վաճառքը տեղի ունեցավ[14]:

Չնայած ԱԱՎԱ-ով իրեն տրված լիազորությանը՝ Կոնգրեսը գործնականում քիչ ջանքեր է գործադրում զենքի վաճառքն արգելելու համար առկա գործնական և քաղաքական խոչընդոտների պատճառով: Դա պայմանավորված է հետևյալ հանգամանքներով: Նախ՝ եթե Կոնգրեսում մեծամասնություն է կազմում նախագահի կուսակցությունը, իրենց համար շահագրգռվածությունը փոքր է՝ հակադրվելու իրենց կուսակցության ներկայացուցչին: Երկրորդ՝ անգամ եթե նախագահն ու Կոնգրեսում մեծամասնություն կազմող կուսակցության անդամները տարբեր ուժերի ներկայացուցիչներ են, այնուամենայնիվ, Կոնգրեսի ներկայացուցիչները հաճախ ձեռնպահ են մնում զենքի վաճառքի գործընթացն անիմաստ ձգձգելուց կամ կասեցնելուց: Պատճառն այն է, որ պաշտպանական արդյունաբերությունը ԱՄՆ արդյունաբերական առանցքային ուղղություններից է, որն աշխատատեղերի զգալի հնարավորություններ է ստեղծում երկրում: Ուստի խոսելով զենքի վաճառքի դեմ՝ նրանք կարող են զրկվել պաշտպանական արդյունաբերական ոլորտի ընկերությունների աջակցությունից և ընտրազանգվածի ձայներից[15]:

Հակամարտող երկրներին ԱՄՆ զենքի վաճառքի արգելքները

Ինչ վերաբերում է զենքի վաճառքի արգելքին կամ սահմանափակումներին հակամարտող երկրների համար, ապա դրանք սահմանված են «Ամերիկյան արտահանման վերահսկումների ակտի» 38-րդ բաժնում, որի համաձայն՝ զենքի վաճառքի և ռազմական ծառայությունների մատուցման լիցենզիաներ շնորհելիս ԱՄՆ նախագահը պետք է հաշվի առնի, «թե դա արդյոք կնպաստի՞ սպառազինությունների մրցավազքին, զանգվածային ոչնչացման զենքերի ստեղծմանը, միջազգային ահաբեկչությանը աջակցությանը, հակամարտության առաջացմանը կամ էսկալացիային, կվնասի՞ զենքի վերահսկման կամ չտարածման երկկողմ կամ բազմակողմ պայմանագրերին կամ այլ պայմանավորվածությունների»[16]: Այսինքն՝ հակամարտության առաջացմանը կամ էսկալացիային հանգեցնելու հանգամանքը ոչ թե ուղղակիորեն արգելում է զենքի վաճառքը, այլ գործոն է, որը վաճառքի ժամանակ պետք է հաշվի առնել:

Հակամարտող կողմերին զենքի վաճառքի սահմանափակումներ նշվում են նաև հենց նախագահների թողարկած քաղաքական փաստաթղթերում: Նմանատիպ սահմանափակում ներառված էր և՛ Օբամայի[17], և՛ Թրամփի[18] նախագահական հրամանագրերում: Վերջիններիս քաղաքականությունը ենթադրում էր ԱՄՆ-ի կողմից զենքի վաճառքի սահմանափակում, եթե այն կարող էր լինել ապակայունացնող և վտանգավոր միջազգային խաղաղության և անվտանգության համար: Այնուամենայնիվ, ԱՄՆ շահերի գերակայության պարագայում վաճառքը կարող է իրականացվել հանգամանքների մանրամասն ուսումնասիրությունից հետո, հատկապես այն դեպքում, երբ չկա այդ հարցում բացարձակ իրավական արգելք:

Ինչ վերաբերում է Հայաստանին ու Ադրբեջանին զենքի վաճառքի արգելքին, ապա նմանատիպ իրավական արգելք սահմանված էր 1993 թ. «Զենքերի միջազգային շրջանառության կարգավորումների» ակտի 126-րդ հոդվածի 1-ին կետով, որով Ադրբեջանն ու Հայաստանը ներառված էին այն երկրների ցանկում, որոնց արգելված էր զենք վաճառել: 126-րդ հոդվածի 1-ին կետը այնպիսի կարգավորում է, որն արգելում է որոշ երկրների համար զենքի և պաշտպանական ծառայությունների լիցենզիաների տրամադրումը: Այնուամենայնիվ, 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո այդ ցանկում կատարվում են լուրջ փոփոխություններ: Նախ՝ 2002 թ. դրանից դուրս են հանվում Տաջիկստանն ու Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը (Սերբիա, Մոնտենեգրո)[19], իսկ 2003 թ.՝ Հայաստանն ու Ադրբեջանը: Այդուհետ Հայաստանին և Ադրբեջանին ԱՄՆ-ի կողմից զենքի վաճառքի յուրաքանչյուր հարց ենթակա է առանձին քննարկման և քննության[20]:

126-րդ հոդվածի 1-ին կետի նոր փոփոխությամբ ներկայումս երկրները, որոնց արգելվում է զենքի վաճառքը, բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբում են այն երկրները, որոնց ընդհանրապես արգելվում է զենքի վաճառքը: Դրանց թվում են Բելառուսը, Մյանմարը, Չինաստանը, Կուբան, Իրանը, Հյուսիսային Կորեան, Սիրիան և Վենեսուելան: Երկրորդ խմբի երկրներին արգելվում է զենքի վաճառքը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Դրանց թվում են Աֆղանստանը, Կամբոջան, Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունը, Կիպրոսը, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Եթովպիան, Էրիթրեան, Հայիթին, Իրաքը, Լիբանանը, Լիբիան, Ռուսաստանը, Սոմալին, Հարավային Սուդանը, Սուդանը և Զիմբաբվեն[21]: Այլ կերպ ասած՝ ԱՄՆ-ին արգելվում է զենք վաճառել այս ցանկում նշված երկրներին, որի մեջ Հայաստանն ու Ադրբեջանն այլևս ներառված չեն:

Այսպիսով՝ իրավական առումով չկա խիստ սահմանափակում Միացյալ Նահանգների կողմից Հայաստանին զենքի վաճառքի հարցում: Թեև 1976 թ. «Ամերիկյան արտահանման վերահսկումների ակտի» 38-րդ բաժնով զենքի վաճառք իրականացնելիս պետք է հաշվի առնել, թե դա արդյոք կհանգեցնի՞ հակամարտության առաջացմանը կամ էսկալացիային, այնուամենայնիվ, դա բացարձակ արգելք չէ, այլ պարզապես մի հանգամանք, որը պետք է հաշվի առնել, և հաճախ նաև կարող է շրջանցվել: Ուստի օրենքը թույլ է տալիս ԱՄՆ նախագահի վարչակազմին զենքի վաճառքի քաղաքականությունն իրականացնել ԱՄՆ ազգային տնտեսական և քաղաքական շահերից ելնելով: Ստացվում է՝ Հայաստանի՝ որպես հակամարտության մեջ գտնվող երկրի պարագայում բացարձակ իրավական արգելք չկա ԱՄՆ-ից զենք գնելու համատեքստում, հատկապես երբ Հայաստանը ոչ թե հակամարտություն հրահրող, այլ ադրբեջանական ագրեսիայից պաշտպանվող կողմ է, ինչը հաստատում են նաև ԱՄՆ պաշտոնյաները: ԱՄՆ-ից զենք գնելու պարագայում այն օգտագործվելու է հայ ժողովրդին Ադրբեջանի ցեղասպանական գործողություններից պաշտպանելու համար: Այնուամենայնիվ, զենք ձեռք բերելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ԱՄՆ թե՛ գործադիր, թե՛ օրենսդիր ճյուղերի բացարձակ համաձայնությունը, քանի որ Հայաստանի դեպքում հակամարտության մեջ գտնվելուց ոչ պակաս խընդրահարույց է ՀԱՊԿ-ի անդամ և Ռուսաստանի անմիջական ազդեցության գոտում լինելը: ■

Աղբյուրը

1. . Տես Trends In International Arms Transfers, 2021, https://www.sipri.org/sites/default/files/2022-03/fs_2203_at_2021.pdf (03.10.2022):
2. . Տես Foreign Relations of the United States, 1969-1976, Volume I, Foundations of Foreign Policy, 1969-1972, https://history.state.gov/historicaldocuments/frus1969-76v01/d29 (03.10.2022):
3. . Տես Rich A., U.S. Exports Arms to the World, https://fas.org/asmp/library/articles/resist.html (03.10.2022):
4. . Տես Arms Export Control Act, https://legcounsel.house.gov/Comps/Arms%20Export%20Control%20Act.pdf (04.10.2022):
5. . Տես Thrall T., Dorminey C., Risky Business, The Role of Arms Sales in U.S. Foreign Policy, March 13, 2018, Number 836, էջ 6-7:
6. . Տես Conventional Arms Transfer (CAT) Policy, https://www.state.gov/t/pm/rsat/c14023.htm (04.10.2022):
7. . Տես Clinton Administration Conventional Arms Transfer Policy, https://fas.org/asmp/atwg/clinton/pdd-34.html (04.10.2022):
8. . Տես Presidential Policy Directive -- United States Conventional Arms Transfer Policy, https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/2014/01/15/presidential-policy-directive-united-states-conventional-arms-transfer-p (04.10.2022):
9. . Տես National Security Presidential Memorandum Regarding U.S. Conventional Arms Transfer Policy, https://trumpwhitehouse.archives.gov/presidential-actions/national-security-presidential-memorandum-regarding-u-s-conventional-arms-transfer-policy/ (04.10.2022):
10. . Տես Foreign Military Sales: Process and Policy, https://www.state.gov/t/pm/rls/rm/2017/271928.htm (05.10.2022):
11. . Տես U.S. Arms Sales and Defense Trade, https://www.state.gov/t/pm/rls/fs/2018/280506.htm (05.10.2022):
12. . Տես նույն տեղում:
13. . Տես Thomas C., Arms Sales in the Middle East: Trends and Analytical Perspectives for U.S. Policy, Congressional Research Service Report, October 11, 2017, էջ 5:
14. . Տես Kerr P., Arms Sales: Congressional Review Process, Congressional Research Service Report, Updated October 22, 2018, էջ 3-6:
15. . Տես Thrall T., Dorminey C., նշվ. աշխ.:
16. . 22 U.S. Code § 2778 - Control of arms exports and imports, https://www.law.cornell.edu/uscode/text/22/2778 (06.10.2022).
17. . Տես Presidential Policy Directive -- United States Conventional Arms Transfer Policy:
18. . Տես National Security Presidential Memorandum Regarding U.S. Conventional Arms Transfer Policy
19. . Տես Amendment to the List of Proscribed Destinations, https://www.federalregister.gov/documents/2002/01/09/02-115/amendment-to-the-list-of-proscribed-destinations (07.10.2022):
20. . Տես International Traffic in Arms Regulations; Amendment to the List of Proscribed Destinations, https://www.federalregister.gov/documents/2002/03/29/02-7346/international-traffic-in-arms-regulations-amendment-to-the-list-of-proscribed-destinations (07.10.2022):
21. . Տես § 126.1 Prohibited exports, imports, and sales to or from certain countries, https://www.ecfr.gov/current/title-22/chapter-I/subchapter-M/part-126/section-126.1 (07.10.2022):

Հայոց ցեղասպանության բանավոր պատմության բացառիկ արխիվի պատմությունից

Մարի Հովհաննիսյան
Քաղաքագիտության մագիստրոս

1982 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգների Մասսաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքում հիմնադրվեց իր տեսակով և առաքելությամբ եզակի գիտահետազոտական ինստիտուտ, որի նպատակն էր ուսումնասիրել և աշխարհին ներկայացնել հայ ժողովրդի պատմությունը, գիտությամբ և կրթությամբ պայքարել ու շտկել պատմական անճշտությունները, սատար կանգնել հայ և աշխարհի մյուս ժողովուրդների խաթարված իրավունքներին՝ հիմնվելով բացառապես գիտական անհերքելի փաստերի և վկայությունների վրա: Ինստիտուտը, որը կոչվեց «Զորյան», նպատակ ուներ անաչառորեն աշխարհին ներկայացնելու իր ազգի պատմությունը, համարժեքորեն արձագանքելու ժամանակակից մարտահրավերներին և աջակցելու ազգին ստեղծելու ապագայի իր տեսլականը: «Զորյան» ինստիտուտը հետապնդում է հիմնականում մարդու իրավունքների և ցեղասպանության, սփյուռքագիտության և հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ուսումնասիրության նպատակներ:

Հիմնադրման օրից ի վեր «Զորյան» ինստիտուտի պատասխանատուները հավատացին գործի հեղափոխությանը և սկսեցին աննախադեպ մի ծրագիր, որի նպատակն էր գտնել 1915 թվականի Հայոց ցեղասպանության վերապրողներին և վավերագրել նրանց վկայությունները:

1980-ական թվականներին չկային ներկայիս հեռահաղորդակցության միջոցները, չկային այսօրվա զարգացած տեխնիկական միջոցները, բայց կար կամք և վճռականություն: Անասելի մեծ նյութական և մարդկային ջանքեր էին պահանջվում ձեռք բերելու տեսաձայնագրող սարքավորումներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ վավերագրել վերապրողների պատմությունները ձայնի և պատկերի միջոցով, քանզի դա կապահովեր վկայությունների իսկությունը: Տեսաձայնագրությամբ վավերագրված բանավոր պատմությունները կոչված էին դառնալու սկզբնաղբյուրային նշանակության գիտահետազոտական ուսումնասիրության բացառիկ նյութ: Ուստիև պատմությունը խեղաթյուրելու և ցանկալի ձևով ներկայացնելու մեղադրանքները դառնում էին անհիմն և սին: Ավելին՝ ծրագրի պատասխանատուները քաջ գիտակցում էին, թե ինչ ահռելի ազդեցություն է ունենալու այն սերունդների վրա՝ ի տարբերություն գրավոր հարցազրույցների, որոնցում չկան ձայն, պատկեր, տեսանելի զգացումներ և հույզեր: Այսպիսով՝ այդ հարցազրույցները կիրառելի էին դառնում ոչ միայն գիտության, այլև կինոարտադրության մեջ:

Ծրագրի նախապատրաստական աշխատանքները և մեկնարկը

Կազմվեց բացառապես գիտական հենք ունեցող շուրջ հարյուր հարցից բաղկացած հարցաթերթ, որի մշակման վրա աշխատել էին գիտության տարբեր բնագավառներ ներկայացնող գիտնականներ՝ պատմաբաններ, սոցիոլոգներ, մշակութաբաններ, իրավաբաններ, քաղաքագետներ, տնտեսագետներ, հոգեբաններ: Հարցաթերթը կազմված էր այնպես, որ դրանով իրականացված հարցազրույցները հետագայում օգտակար և կիրառելի լինեին գիտության և մշակույթի տարբեր բնագավառների հետազոտողների ու գիտնականների համար: Ծրագրին միացել էին «Զորյանի» գաղափարակիր երիտասարդներ, որոնք անշահախնդիր կերպով, բացառապես կամավորության սկզբունքով անցան գործի: Նրանցից ոչ ոք պրոֆեսիոնալ հարցազրուցավար չէր, պետք էր կազմակերպել վերապատրաստումներ, սովորեցնել, թե ինչպես առանց հարցաթերթից շեղվելու և, ամենակարևորը, անաչառորեն արթնացնել տվյալ մարդկանց հիշողությունը, առանց նրանց հույզերն ու զգացումները խոցելու օգնել հիշելու 70-80 տարի առաջ տեղի ունեցածը: Անասելի դժվար էր գտնել նաև ցեղասպանությունը վերապրածներին, որոնք սփռված էին աշխարհի չորս կողմերում և արդեն 70-90 տարեկան էին: Շատերը իրենց պատուհասած ցավն ու ողբերգությունը ուզում են մոռանալ, փորձում են ջնջել հիշողությունից՝ բնականոն կյանքով ապրելու համար, և սա՝ բոլոր ժամանակներում: Իսկ «Զորյան» ինստիտուտի նպատակն էր արթնացնել թեև ցավոտ, բայց կարևոր այդ հիշողությունները՝ սերունդներին փոխանցելու համար: Եվ ձեռք բերվեցին այդ ժամանակվա համար գերժամանակակից համարվող տեսանկարահանող սարքավորումներ: Նորաստեղծ

և շահույթ չհետապնդող գիտահետազոտական ինստիտուտի համար սա լուրջ մարտահրավեր էր, սակայն կար գերնպատակ՝ տեսաձայնագրությամբ վավերագրել ազգի պատմության ամենասև և ողբերգական շրջանը՝ Հայոց ցեղասպանությունը, այն վերապրած, դրա սարսափների միջով անցած, բայց մազապուրծ եղած հայորդիների վկայություններով: Ո՞վ, եթե ոչ ականատես-վերապրողը կարող է ամենայն մանրամասնությամբ պատմել յուր ազգի պատմությունը 1915 թ. սարսափներից առաջ, այդ ընթացքում և դրանից հետո:

Սկսվեց հարցազրույցների անցկացման դժվարին, միաժամանակ անչափ հետաքրքիր փուլը: Հարցազրույցներն անցկացվեցին Հայաստանում, Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, ԱՄՆ-ի և Կանադայի տարբեր քաղաքներում: Ծրագրին մասնակցեց 786 վերապրող, և ստեղծվեց 3000 ժամ կազմող տեսաձայնագրված արխիվ: Այդ ժամանակ, ի լրումն վերոբերյալ խնդիրների, կար նաև ամեն կերպ ցեղասպանության մասին խոսքը լռեցնելու խնդիրը, բայց դա ևս հաղթահարվեց, և ստեղծվեց այդ բացառիկ արխիվը, որը համամարդկային արժեք է ներկայացնում, քանի որ կարևոր է ոչ միայն հայ հետազոտողների համար, այլև գիտական հետազոտությունների անսպառ աղբյուր է նաև օտարազգի գիտնականների համար:

Արխիվից դեպի կինո

«Զորյան» ինստիտուտի՝ Հայոց ցեղասպանության բանավոր պատմության բացառիկ հավաքածուն հետաքրքրեց ոչ միայն գիտնականներին, հետազոտողներին, ուսանողներին, այլև շատ ու շատ կինոգործիչների: 1988 թվականին վավերագրող, «Զորյան» ինստիտուտի նախկին նախագահ Թեոդոր Պողոսյանի «Հայկական ճանապարհորդություն» ֆիլմը դարձավ Ամերիկայի հանրային հեռարձակման ծառայության հիթ: Ֆիլմը ներկայացնում էր Հայոց ցեղասպանության վերապրող, «Զորյան» ինստիտուտի բանավոր պատմության նախագծի առաջին մասնակից Մարիամ Դեյվիսի կյանքի պատմությունը: Ֆիլմի նկարահանման համար Թեոդոր Պողոսյանը հրավիրեց 70-ամյա Մարիամ Դեյվիսին այցելելու վերջինիս ծննդավայր Մարդին, որտեղ իրականացվեցին նկարահանումները՝ հաղթահարելով թուրքական ժխտողական քաղաքականության հետևանք բազում դժվարություններ, այդ թվում նաև՝ գրված և չգրված «օրենքներ», որոնք սահմանափակում էին կինոռեժիսորի աշխատանքները: Բարեբախտաբար, նկարահանումները բարեհաջող ընթացան, և ստեղծվեց «Հայկական ճանապարհորդություն» խորագիրը կրող փաստավավերագրական ֆիլմը: Հույզեր, ապրումներ, հիշողություններ և կյանքի իրական պատմություն, որոնք ցնցեցին ամերիկացի հեռուստադիտողին: Ծննդավայրը տասը տարեկանում լքելուց հետո Մարիամ Դեյվիսը առաջին անգամ էր վերադառնում այնտեղ: Ուշագրավ է, որ, ինչպես շատ վերապրողներ, Մարիամ Դեյվիսը ևս տասնամյակներ շարունակ լռել է և իրեն ու իր ազգին պատուհասած մեծ արհավիրքի մասին չի պատմել անգամ մերձավորներին: Նույնիսկ դուստրը մոր կյանքի պատմության այդ շրջանի մասին տեղեկացավ միայն 1988 թվականին, երբ Թեոդոր Պողոսյանի հետ միասին ուղեկցում էր մորը Մարդին:

«Զորյան» ինստիտուտի՝ Հայոց ցեղասպանության բանավոր պատմության հավաքածուն ծնունդ է տվել նաև Հայոց ցեղասպանության վերապրող, խիզախության և անվեհեր կամքի խորհրդանիշ համարվող Արշալույս Մարտիկյանի կամ, ինչպես ավելի հայտնի է, Ավրորա Մարդիգանյանի կյանքի ոդիսականի մասին պատմող «Արշալույսի լուսաբացը» խորագրով ֆիլմին: 022 թ. հունիսի 14-ին աշխարհում ամենահայտնի անիմացիայի փառատոնում տեղի ունեցավ «Զորյան» ինստիտուտի՝ Հայոց ցեղասպանության բանավոր պատմության արխիվի բացառիկ հարցազրույցներից մեկի հիման վրա ստեղծված «Արշալույսի լուսաբացը» ֆիլմի միջազգային պրեմիերան: Արշալույս Մարտիկյանի կյանքի ոդիսականի մասին պատմող ֆիլմ ստեղծելու գաղափարը ծնվել է 2015 թվականին՝ «Զորյան» ինստիտուտի հիմնադիր-նախագահ Գուրգեն Սարգսյանի և «Բարս Մեդիա» մշակութային հիմնադրամի տնօրեն Վարդան Հովհաննիսյանի՝ Տորոնտոյում կայացած հերթական բարեկամական հանդիպման ընթացքում: Գուրգենը և Վարդանը միմյանց ճանաչում էին դեռևս 1988 թվականից, արդեն ձևավորվել էր փոխվստահություն, և կար միասին աշխատելու փորձ: Սակայն այս հանդիպումը իր արդյունքով խիստ տարբերվող և պատմական էր այն առումով, որ դրա ընթացքում նախաձեռնվեց «Զորյան» ինստիտուտի՝ Հայոց ցեղասպանության բանավոր պատմության հավաքածուի արխիվային

«Ամերիկայի հանրային հեռարձակման ծառայության միլիոնավոր հեռուստադիտողներ դիտել են ֆիլմը 1988 թ. ապրիլի 24-ի պրեմիերայի ժամանակ: «Հայկական ճանապարհորդությունը» կոտրեց թուրքական տաբուները... Առանց «Զորյան» ինստիտուտի բանավոր պատմության նախագծի՝ ֆիլմը չէր ունենա այս նույն ճշմարտացիությունը և թերևս երբեք էլ չէր հեռարձակվի»,- **նշում է Թեոդոր Պողոսյանը:**

Ռոբերտ Աղալյան, Արշալույս Մարտիկյան. 1984 թ.

բացառիկ հարցազրույցներից մեկի հիման վրա ստեղծել Հայոց ցեղասպանությունը վերապրած Արշալույս Մարտիկյանի կյանքի մասին պատմող «Արշալույսի լուսաբացը» ֆիլմը:

Արշալույս Մարտիկյանը՝ 1915 թվականին 14 տարեկան դեռատի մի աղջնակ, ականատես է լինում իր ողջ ընտանիքի սպանությանը, շատ այլ հայ կանանց և աղջիկների հետ հայտնվում սիրիական անապատներում, վաճառվում թուրքական հարեմ, ենթարկվում անպատմելի բռնությունների: Հրաշքով փրկվում և ամերիկացի միսիոներների օգնությամբ հայտնվում է Ամերիկայում, որտեղ և գրի է առնվում նրա կյանքի պատմությունը և հրատարակվում «Հոգիների աճուրդ» խորագրով գրքում: Գրքի հիման վրա 1917 թվականին նկարահանվում է Հայոց ցեղասպանության մասին պատմող առաջին համր ֆիլմը, որի գլխավոր դերակատարը հենց ինքը՝ Արշալույս Մարտիկյանն էր, ով ոչ թե խաղում, այլ վերապրում էր այն բոլոր սարսափները, որոնց միջով անցել էր: Համր ֆիլմը, ցավոք, թուրքական ժխտողական քարոզչամեքենայի ջանքերով անհետացավ, և պահպանվեց միայն 20 րոպեանոց մի պատառիկ, որից հատվածներ օգտագործվել են նաև «Արշալույսի լուսաբացը» անիմացիոն ֆիլմում:

«Զորյան» ինստիտուտը այս ֆիլմով նպատակ է ունեցել ներկայացնելու ինստիտուտի՝ Հայոց ցեղասպանության բանավոր պատմության հավաքածուի վկայությունները մեծ էկրանին անիմացիոն վավերագրական ֆիլմի միջոցով, փոխանցելու ցեղասպանությունը վերապրածների պատմությունները երիտասարդ սերունդներին, հատկապես աղջիկներին, նախնիների պատմությամբ ցույց տալու, թե ինչպես է հնարավոր անցնել ցեղասպանության սարսափների միջով, վերապրել, չընկճվել, չնահանջել, այլ հաղթահարելով բազում աներևակայելի դժվարություններ՝ աշխարհին պատմել ազգի պատմությունը: «Արշալույսի լուսաբացը» ֆիլմը ստեղծվել է «Զորյան» ինստիտուտի՝ Հայոց ցեղասպանության բանավոր պատմության նախագծի շրջանակներում դեռևս 1984 թ. հունվարի 29-ին Արշալույս Մարտիկյանի հետ անցկացրած բացառիկ հարցազրույցի հիման վրա:

Անիմացիոն ֆիլմի ստեղծումը դյուրին գործ չէ: Անհրաժեշտ ֆինանսական միջոցների առյուծի բաժինը հատկացրել է «Զորյան» ինստիտուտը: Ֆիլմի ստեղծմանը ինստիտուտը նպաստել է նաև գիտական աջակցությամբ, ինչը ցեղասպանության մասին պատմող ֆիլմի պարագայում կենսական նշանակություն ունի: Այս ամենի շնորհիվ ստեղծագործական թիմը՝ ֆիլմի պրոդյուսեր Վարդան Հովհաննիսյանի և ռեժիսոր Իննա Սահակյանի ղեկավարությամբ, ստեղծել է մի հիասքանչ անիմացիա:

«Արշալույսի լուսաբացը» ֆիլմը 2022 թվականին մասնակցել է նաև «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին՝ արժանանալով «Արծաթե ծիրան» մրցանակին:

«Զորյան» ինստիտուտի՝ Հայոց ցեղասպանության բանավոր պատմության հավաքածուն Հայաստանի ամերիկյան համալսարանի Փափազյան գրադարանում «Զորյան» ինստիտուտի համար դյուրին չի եղել ոչ միայն Հայոց ցեղասպանության բանավոր պատմության արխիվի ստեղծումը, այլև դրա հետագա պահպանումն ու այն կիրառելի դարձնելը: Ծրագիրը չի սկսվել և ավարտվել 80-ականներին: Տեսաձայնագրությունների որակը պահպանելու, դրանք չկորցնելու ուղղությամբ աշխատանքները մշտական բնույթ են կրում: Նախ պետք է ապահովել դրանց պահպանման համար նախատեսված հատուկ պայմաններ, ապա՝ դրանք թվայնացնել այնպես, որ գործարկելի լինեն նորագույն սարքավորումներով: Բացի այդ՝ հարցազրույցներն անցկացվել են հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն և թուրքերեն, նայած թե տվյալ վերապրողը որտեղ է հաստատվել ցեղասպանությունից հետո: Այս ամենը հետազոտողներին հասանելի դարձնելու նպատակով «Զորյան» ինստիտուտը համագործակցության հուշագիր է ստորագրել Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ, որի Փափազյան գրադարանում է գործում նաև «Զորյան» ինստիտուտի բանավոր պատմության կենտրոնը: Կենտրոնում Ամերիկյան համալսարանի ուսանողների ջանքերով իրականացվելու է տառադարձման ծրագիրը, որից հետո սկսվելու է թարգմանության փուլը: Բոլոր հարցազրույցները պետք է հասանելի լինեն հայերենով և անգլերենով, որոնց թարգմանությունները ենթագրերի տեսքով կավելացվեն հարցազրույցներին:

Բանավոր պատմության վավերագրումը անհրաժեշտ ներդրում է գիտության մեջ, քանզի այն սկզբնաղբյուրային նշանակության գիտական նյութ է սերունդների համար, որն ապահովում է տվյալ ժամանակաշրջանում տեղի ունեցող պատմական իրադարձությունների փաստագրում ականատեսների շուրթերով:

Հայ ազատագրական շարժման մեծագոյն նուիրեալ Գէորգ Չաուշին ձօնուած երգերը (մաս 2)

Աւօ Դաթրճեան
Հրապարակագիր, բանասէր, Հալէպի հայագիտական հիմնարկի Հայ դատի դասախօս

Վերադառնալով Նորշէնի կռիւին՝ պէտք է արձանագրել, որ, մատնութեամբ իմանալով ֆետայիներու այնտեղ գտնուելու մասին, թրքական 100 հեծեալ պաշարած են գիւղը: Ֆետայիները թաքնուած են տուներու մէջ, և երբ թուրքերը մտած են գիւղի հրապարակ, դուրս գալով թաքստոցներէն, շրջապատած են զանոնք, և սկսած է կռիւը: Խուճապի մատնուած թուրք զինուորները, լքելով ձիերը, թաքնուած են գոմերու մէջ և պաշարուած: Ֆետայիները կրակ բացած են նաև թուրքերուն օգնութեան եկած քիւրտերու վրայ՝ թոյլ չտալով գիւղ մտնել: Կռիւը տևած է մինչև ուշ երեկոյ, որմէ յետոյ ֆետայիները, չնայած հերոսական դիմադրութեան, նահանջած են Ալվառինջ (Ալվառինճ): Թուրքերը, մտնելով գիւղ, սկսած են կոտորել ու թալանել գիւղի բնակիչները:

Պատմական կարևորութեան համար պէտք է ըսել, որ Նորշէն գիւղը հիմնայատակ աւերուած է 1915 թուականի Մեծ եղեռնի ժամանակ: Իսկ այսօր Նորշէն գիւղի մէջ կը բնակին 6 հայ ընտանիք, որոնք, սակայն, մահմետական են:

Նորշէն գիւղի երգը հարազատ պատումն է օրուան իրադարձութիւններուն: Երգը սկիզբ կ'առնէ Գէորգի՝ 8 զինակից ընկերներով Նորշէն մուտքի հաղորդումով: Ան ամբողջական պատկերացում մը կու տայ մղուող մարտին մասին:

Ահաւասիկ Նորշէնի կռիւի երգը.

ՆՈՐՇԷՆ ԳԻՒՂԻ ԵՐԳԸ
(Հազար ին հարիւր մէկ թուականին)

Պարոն Գէորգ ութ ընկերներով
Նորշէն մտաւ պատահումով
Գիւղացիք լաւ ընդունեցին,
Սիրով զիրար ողջունեցին:

Խրախոյս կարդացին Հայ կաթոլկաց,
Ձէնքի միայն ապագան է հարց,
Ամէնքը իրաւունք կու տային
Քաջերն ասով խրախուսեցին:

Հայն ալ շատոնց կը լինէր ազատ,
Երբ չունենար մատնիչներ վատ.
Իմաց տուին «Վասակ» Բիմկան
Թէ գիւղ յեղափոխական կան:

Նա շուտ մը լուր տուաւ Մշոյ հուքմաթին [1]
Գուցէ նշան կը վաստըկի.
Մոռնալով մատնիչ Մակարին,
Որուն ի մահ վճիռ տուին:

Հիւսէյն աղէն հըտ ուր դամին,
Ձարկեց Պօղոս կորցուց զքամին.
Հիւսէյն աղէն գետին ընկաւ
Ոտքն ու գլուխ մըջ տըլին չքաւ:

Ապրի Պօղոս ուր սուրմալին,
Թըվոռի Վըրդոն ուր այնալին
Ինչալէս Բաբշէն և Ձրաղաց,
Ցրօնք[2] գիւղ վանք Թարգմանչաց[3]:

Գէորգ Չաուշին նուիրուած յաջորդ երգը քրտերէն յայտնի «Տէ լէխըն, լէխըն, պրանս լէխըն» (Տէ՛ զարկէ՛ք, զարկէ՛ք, եղբայրնե՛ր, զարկէ՛ք) երգն է:

Երգի մասին որևէ մեկնաբանութենէ առաջ նախ պէտք է պարզաբանել և ընդգծել կարևոր իրողութիւն մը, որ քրտերէն շատ մը երգեր, քիւրտ հեղինակներէ զատ, յօրինուած են նաև քրտախօս հայերու կողմէ. քիւրտերը հայ ֆետայիներու, հայ ազատագրական պայքարի դէպքերու և իրադարձութիւններու մասին բազմաթիւ երգեր յօրինած են: Պատմական կարևորութեան համար հարկ է նշել, որ քիւրտերը յատուկ սովորութիւն մը ունին. կռուի պարտութեան ընթացքին թշնամիին գովաբանական երգեր կը հիւսեն, և այս տեսակի երգերը, ըստ մեր ուսումնասիրութիւններուն, պատմութեան ընթացքին շատ են, յատկապէս հայերուն նուիրուած:

Արդարև, Գէորգ Չաուշի քաջութիւնը պատճառ դարձած է, որ հեղինակը քրտերէն երգ հիւսէ անոր մասին՝ վեր առնելով Կելիեկուզանի մէջ թուրքօսմանեան զօրանոցի վրայ յարձակման դէպքը և անոր մասնակից հայ հերոսներու սխրագործութիւնները:

Եթէ ուշադրութեամբ հետևինք «Տէ լէխըն, լէխըն, պրանս լէխըն» երգի բառերուն, յստակօրէն կրնանք ներթափանցել և հասկնալ հեղինակին իրապաշտ մօտեցումն ու արտայայտութիւնը՝ դէպքի մանրամասնութիւններուն:

Հեղինակը կը նկարագրէ Կելիեկուզանի մէջ «թշնամու» զօրանոցի վրայ յարձակումը: Երգը ընթացք կ'առնէ կռուի կոչելու, ոտքի հանելու զինակից ընկերները, երբ կ'ըսէ. «Տէ՛ զարկէ՛ք, զարկէ՛ք, եղբայրնե՛ր, զարկէ՛ք»:

Այնուհետև հեղինակը կ'անդրադառնայ Գէորգ Չաուշի վճռական ոգիին և հեղինակութեան: Հոն մեզի կը ներկայացուի կռիւի պատումը: Հեղինակը հոն կը հիմնաւորէ, որ «Գէորգը երդուեց մոսինի վրայ, Աւրել զօրանոցը Կելիեկուզանի»:

Պէտք է ըսել, որ քրտերէն այս երգը բանաւոր կերպով մեր փոքր տարիքէն լսած էինք և կ'երգէինք: Երաժշտութիւնը «Խրիմեան Հայրիկ» վերնագրուած «Եկել է գարուն, սոխակը սիրուն...» երգին մեղեդիով է: Անմիջապէս հարկ է նշել, որ այստեղ ներկայացուած երգը պահպանած է բանաստեղծական օրէնքները, բայց կայ այլ տարբերակ մը, որ աղաւաղուած ձևով է, և, տողերը հոն պակաս մնալով, յաճախ իւրաքանչիւր տող կրկներգի վիճակի մէջ յայտնուած է:

Ահաւասիկ «Տէ լէխըն, լէխըն, պրանօ լէխըն» երգը և անոր թարգմանութիւնը.

ՏԷ ԼԷԽԸՆ, ԼԷԽԸՆ, ՊՐԱՆՕ ԼԷԽԸՆ

Տէ լէխըն, լէխըն, տը պրանօ լէխըն,
Տուշմանէ մազն, մըլլա ու շէխն,
Մօսունի պինըն, ֆշէկա լէխըն,
Լաշէ քուրմանճա լը արտկէ ռախն:

Ֆիտա դոքէդը ժալէ Խալաթէ,
Կոմդա դաւօրդան հաֆթ ուիլայէթ,
Գէորգ սոնտ խուարի չար ինճիլա,
Խոյնախոթ ռէժմբոյ հէսիրտ:

Գէորգ սոնտ խուարի տըուէ մօսանի,
Կոմ նժտա ռաւէն սար խշլէ գալէ,
Դուժը դինա Իսա, ըժ դինա Իսուս,
Ժէ մէնէնի ժը վա իգի պխալէ:

Թարգմանութիւնը.

Տէ՛ զարկէ՛ք, զարկէ՛ք, եղբայրնե՛ր, զարկէ՛ք,
Թշնամու մեծին. Մոլլին ու շէյխին,
Մօսինը բերէք, փամփուշտ զարկէք,
Թշնամի քիւրտին գլորէք գետին:

Ֆետային ահա, եկաւ Խլաթով
Եօթը վիլայէթ մենք կը պահանջենք.
Գէորգը երդուեց չորս աւետարանով,
Խեղճի համար մենք արիւն պիտ'թափենք:

Գէորգը երդուեց մոսինի վրայ,
Աւրել զօրանոցը Կելիեկուզանի.
Դու մահմետական, ես քրիստոնեայ,
Մեր երկուսից մէ՛կը պիտի ջնջուի:



Քանի որ քիւրտերը Արևմտեան Հայաստանի մէջ զգալի ներկայութիւն էին և, Բարձր դուռէն դրդուած իբրև խաղաքարտ, թուրքերու կողքին ըլլալով, հայ ժողովուրդի թշնամի եղած էին, այդ պատճառով ալ անոնց հետ անմիջական կռիւներ մղուած են: Այդ կռիւներուն իբրև արդիւնք, բնականաբար, հայերէն յեղափոխական և ազգագրական երգերու կողքին յաճախ ծնունդ պիտի առնէին նաև քրտերէն հայրենասիրական, ժողովրդային և յեղափոխական երգեր, որոնց հեղինակները երբեմն եղած են քիւրտեր, իսկ երբեմն ալ՝ քրտախօս հայեր: Ուստի այս աշխատասիրութեան մէջ պիտի հանդիպինք այլ քրտերէն «Շըռ է տը կրան է Կուռաւու է» խորագիրով երգի մը, որուն մէջ լաւագոյնս կը դրսևորուի Գէորգ Չաուշի և այլ ֆետայիներու հերոսութիւնը Կուռաւուի յաղթական կռիւի ընթացքին:

Կուռաւի, Քիրաւի կամ Կուռաւու (Շենոպա) գիւղը կ'ապրէին քիւրտեր ու հայեր: Տարբեր տուեալներով՝ 1902-ին գիւղը ունէր 86 տունի մէջ ապրող 628 հայ բնակիչ: Կուռաւու գիւղին մէջ կար երկու եկեղեցի՝ Սբ Աստուածածին և Սբ Յակոբ:

Գէորգ Չաուշ 1904-էն յետոյ արդէն Տարօն-Տուրուբերանի զինուորական գլխաւոր ղեկավարն էր, սարսափը՝ շրջանի քրտութեան և թրքական ուժերուն: Սասնոյ ապստամբութենէն յետոյ ֆետայիները կ'իջնէին դաշտ, կը հաւաքուին Կուռաւու գիւղը, ուր

տեղի կ'ունենայ յայտնի յաղթական կռիւը: Եւ այդպէս կռուելով՝ ֆետայիներու ամբողջ խումբը կ'անցնի Աղթամար կղզի:

Կուռաւուի յաղթական կռիւին մասին հիւսուած «Շըռ է տը կրան է Կուռաւու է» քրտերէն երգը հանգամանօրէն կը ներկայացնէ Գէորգի և մասնակից միւս ֆետայիներուն սխրանքը, կռիւի ամբողջ իրադարձութիւնը՝ իր ամենայն թափանցիկութեամբ:

Տակաւին երգին ու երաժշտութեան հեղինակը մեզի կը մնայ անծանօթ: Այդ երգը իր բառերով հոգի ու կեանք կը ներշնչէ, և հեղինակը ամենայն հարազատութեամբ կը ներկայացնէ Կուռաւուի կռիւին եղելութիւնը:

Ահաւասիկ այդ երգը.

ՇԸՌ Է ՏԸ ԿՐԱՆ Է ԿՈՒՌԱՒՈՒ Է

Շըռոնք չէ տպլու լը Կուռաւիա
Շֆթի լը փալա կըրան է.
Ժորտայ ռունըշտի է Առաքել աղա
Նը ոլա Աստուր է Մոնկունկ է
Մուսենի է տըստետայ սըշխուլէ,
Մինամունէ նաւ ֆընըրան:

Լէ ժերտայ ռունըշրտի է Մուրատ է
Սեվազէ նաւ գրան.
Նը ոլա Սեպուհ է Պըյպուրդ է
Եիւզպաշի է ջան ֆիտան:
Հըճի է Կոտոյ, թապղուր պաթըրան.
Կորիւն է Գոմսէ խըսպայ
Տը մերէ տը մուսլումանէ:

Սմբատ է Մուշի է պրան է տը քուվիան
Ըվ քոյ ժորտայ հըլայ տըքէ
Յարութ է սխաւու է
Կոմիտէ սըր գիւնտան.
Նը ոլա քաթըպ Մխիթար է տը Յալիճան:
Ըկըր դու պըրսայ Գէորգ Չաուշ տըքի,
Նաւ ու տըկ է վի բալապու է
Սինօթ ու կոնքռէս է տը Եւրոպա.
Ժեռա տըպէժրն օրտու պոզանը:

Անդրանիկ փաշայ ղումանտարէ հըմեան,
Ժէ սըպէ հրեա էուարէ կուշտանէ
Չար միլազըմ, դու սըդ ըզկիր է սուլթանէ
Փան ստանտրն է սըդ ու փէնճ մաւիզըրէ տը տըվլըթ է:

Գէորգ Չաուշին ձօնուած երգերուն նիւթերու իրականութեան ու ստոյգ տեղեկութիւններու իրողութիւնը հաստատելու համար կը բերենք Ռուբէն Տէր-Մինասեանի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» գիրքին Գ. հատորի Ը. գլուխին մէջ արձանագրուած հետևեալ տողերը. «Այս բոլորը սակայն կիսամիջոցներ էին, որովհետև թէ՛ իսլամ ժողովուրդի և թէ՛ կառավարութեան աչքի փուշն էր Գէորգ Չաուշը: Եթէ անգամ ոչ մէկ ֆետայի գոյութիւն չունենար ամբողջ Դուրան-Բարձրաւանդակի մէջ և մնար միայն Գէորգ Չաուշը, այդ ալ արդէն բաւական էր, որ կառավարութիւնը յուզուի և խիստ միջոցներու դիմէ, յեղափոխութիւնը արմատախիլ ընելու համար. որովհետև Գէորգը իրօք որ յեղափոխութեան մարմնացումն էր, զէնքի և կռուի խորհրդանշանը: Վահան պէտք է հեռացնէր նաև Դուրան-Բարձրաւանդակի մարմնով փոքր, բայց հոգիով և հոչակով մեծ այդ մարդը՝ Գէորգը: Այս էր գլխաւոր դրդապատճառը Գէորգ Չաուշի փոխադրման Վասպուրականի շրջանը»[4]:

Վերոնշեալ միտքերը հաստատուած են յաջորդ երգին մէջ՝ «Գէորգ Չաուշի երգը»: Այս երգը տպագրուած է 1906 թ. Թիֆլիսի մէջ լոյս տեսած «Արեան ձայներ» երգարանին մէջ (երկրորդ հրատարակութիւն, էջ 124): Տպագրուած է նաև 1907 թ. Թիֆլիսի մէջ լոյս տեսած «Ծաղկեփունջ» երգարանին մէջ (էջ 123-124), սակայն վերջին երկու տուները՝ առանց առաջին տողերու, «Հայուն երգարան»ի Ա. հատորին մէջ (Կ. Պոլիս, 1911, էջ 132-133)՝ բնագրային աննշան տարբերութիւններով (երկրորդ համարի երկրորդ տողը. «Քաջ Մուրատին[5] ընկեր վարպետ»): Իսկ «Ժողովրդային երգարան»ին մէջ (հրատարակութիւն Ի. Ա. Երան, թիւ 5 (երկրորդ տպագրութիւն), Բոստոն-Վաշինգտոն, էջ 183, երեք համար) ներկայացուած են բնագրի առաջին, երկրորդ և երրորդ տուները:

«Գէորգ Չաուշի երգը» զետեղուած է նաև «Գողթան քնար» երգարանին մէջ (հրատարակիչ՝ նկարիչ Աւօ, Հալէպ, 1947, էջ 21): Բնագրի վերջաւորութեան նշուած է հեղինակի անունը՝ Ներսէս եպ. Խարախանեան (Մշոյ առաջնորդ): Երգարանին մէջ տեղ գտած է միայն երեք տուն, իսկ առաջին տողն ալ նշուած է հետևեալը. «Թուրքը լսեց անունդ Չաուշ»:

«Յեղափոխական և ժողովրդային երգեր»ին մէջ (հրատարակութիւն «Մշակ» մատենաշարի, Պէյրութ, 1972, էջ 36) տեղ գտած է միայն երեք տուն, իսկ առաջին տողն ալ նշուած է հետևեալը. «Թուրքը լսեց անունդ Չաուշ»:

Երգին առաջին տողը նշուած է նաև այսպէս. «Քիւրտը ըսաւ՛ «Անունդ Չաուշ»»:

ԳԷՈՐԳ ՉԱՒՈՒՇԻ ԵՐԳԸ

Թուրքը լսաւ անունդ Չաուշ,
Դէմքդ սիրուն, լեզուդ անուշ.
Կեանքիդ մէջ հանգիստ չունեցար,
Թշնամեաց դարձուցիր ապուշ:

Սասունն է քո ապաստան:
Վրէժ է քո դատաստան:

Հայոց համար սպարապետ,
Անդրանիկին ընկեր, վարպետ.
Սասունը կանգուն պահեցիր,
Օգնող է քեզ Սուրբ Կարապետ:

Սասունն է քո ապաստան:

Վրէժ է քո դատաստան:

Կոտորեցիր քանիցս վաշտ,
Անոնց արեամբ ներկեցիր դաշտ.
Անվախ հերոս անոնց դէմը՝
Մինչև վերջը մնացիր անհաշտ:

Սասունն է քո ապաստան:
Վրէժ է քո դատաստան:

Անվախ հերոս ես ճշդապէս
Հայք պիտ՚յիշեն քեզ մշտապէս,
Քաջաց քաջն ես, Գէորգ սարդար.
Վարդանի տիպ ես իսկապէս:

Սասունն է քո, ապաստան:
Վրէժ է քո դատաստան:

Յաջորդ երգը՝ «Սարսափն ահաւոր, սոսկումն ահագին», կը խօսի Գէորգ Չաուշի՝ 25 ապրիլ 1905 թ. Մշոյ Ղարս գիւղի մէջ մղած կռիւին մասին:

Գէորգ Չաուշ Մշոյ շրջանի Ղարս գիւղ մուտք կը գործէ ապրիլ 1905 թ.: Գիւղը խանդավառ ու կատարեալ խրախճանքի մէջ էր, կարծէք ուխտագնացութեան օր մը ըլլար:

Ղարս (Խարս, Խարծ, Հարս, Քարս, այժմ թրք.՝ Կիւնէիք) գիւղը կը գտնուի Արևմտեան Հայաստանի Պիթլիս նահանգի Մուշ գաւառի մէջ՝ Մուշ քաղաքէն 30 քմ արևելք, Մուշ-Պիթլիս ճանապարհի ձախ կողմը: 1880-ական թուականներուն ունէր 180 տուն՝ 1500 հայ բնակիչով: Բնակչութիւնը կը զբաղէր երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Խարսը ունէր Սբ Աստուածածին և Սբ Բարսեղ եկեղեցիներ:

Գէորգ Չաուշի՝ Ղարս գիւղ մուտքով անմիջապէս և կայծակի արագութեամբ Մշոյ և Պիթլիսի իշխանութիւնը անոր ներկայութեան մասին լուր առած էր: Շուտով հազարապետ Սուլէյման աղայի և Հիւսնի բէկի կը հրահանգուի իրենց զօրքով հասնիլ Ղարս գիւղ: Նոյն հրահանգները կը տրուին նաև քիւրտ աշիրէթապետերուն, ինչպէս նաև Չաուշի ծանօթ Ղասըմ բէկին, որուն յանձնուած էին բոլոր այն ճամբաները, որոնք Ղարս գիւղ կը տանէին: Տեղի կ՚ունենայ բաւական ծանր կռիւ: Ֆետայիները փոքր խումբով կը դիմադրէին թրքական բանակի մեծաթիւ զօրքին, որ զինուած էր արդիական զէնքերով և ունէր շատ առատ զինամթերք:

Մշոյ Ղարս գիւղի կռիւը սարսեցուց շրջանի բոլոր գիւղերը, իսկ ֆետայիներու անունը մինչև երկինք բարձրացաւ: Թուրքերը և քիւրտերը սկսան մեծ համակրութիւն տածել անոնց նկատմամբ իրենց քաջութեան և ճարպիկութեան համար: Նոյնիսկ սկսան Գէորգի մասին երգեր հիւսել և անոր քաջագործութիւնները պատմել առասպելներու նման: Անգամ թուրք սպաներէն ու պաշտօնեաներէն ոմանք սկսան համակրել ֆետայիներուն, որոնք արդարութեան համար կը կռուէին անձնազոհութեամբ:

«Սարսափն ահաւոր, սոսկումն ահագին» երգը մեզի կը պատմէ օրուան եղելութիւնը իր ամէնէն թափանցիկութեամբ: Երգին խօսքերը յատկապէս ցոյց կու տան, որ ան հիւսուած է ժողովրդական երգի ընդհանուր բնոյթով ու ոճով: Շարահիւսուած բառերը եթէ վերլուծելու ըլլանք, ապա հոն պիտի տեսնենք, որ ի յայտ կու գան օսմանեան բռնատիրութեան և «Համիտէի» գունդերու յառաջացուցած ահաւոր սարսափն ու սոսկումը, ոճիրին դէմ պայքարողները, ազատութիւն տենչացողները, և օսմանեան ծանր լուծին տակ տնքացողները կը տողանցեն՝ ամբողջ պատմութիւն մը նկարագրելով: Հոն կը տողանցեն մեր քաջ ֆետայիները իրենց կատարած սխրագործութիւններով, մանաւանդ «վեհ Գէորգ առիւծն ահաւոր»ը: Վերոնշեալ միտքերը իրենց լրումին կը հասնին երգի կարգ մը տուներու մէջ նաև փոխվրէժի ամէնէն ցայտուն զգացումներու շեշտադրումով:

Սարսափն ահաւոր, սոսկումն ահագին,
Կրկին պաշարեց գահը սուլթանին,
Ամբողջ թիւրքութիւնը եղաւ ահաբեկ
Կորուստ տուին շատ աղա ու բէկ:

Հազար ինը հարիւր հինգ թուականին
Ապրիլ ամսոյն քսան և հինգին,
Ամբողջ թիւրքութիւնը վայրագ մոլեգին,
Մշոյ Ղարս գիւղը կրկին պաշարին:

Ո՞ւր է վեհ Գէորգ առիւծն ահաւոր,
Իր անպարտելի խմբովը բոլոր,
Զօրքը գիւղը խուժեց՝ խենթ անսովոր,
Կարծելով զիրենք ուժեղ զօրաւոր:

Հազարապետ՝ մեծ փառք, պատիւ ու պարծանք,
Առնելու համար գործեց արշաւանք,
Քոմսեր Հիւսէյն բէկ գազան այլանդակ,
Գնդապետ՝ Եաւուր ոսոխ դժնդակ:

Ռուֆաթ բէկ՝ հպարտ Մահմուտ Միատին,
Ազնիւ Մարգարի տան շուրջը պատեցին,
Ո՞ւր է վրէժ խնդիր Սերոբ փաշային,
Կատակի առնելով՝ նրանք կ՚ասէին:

Սասնոյ սէգ առիւծ ի ժամ տագնապին,
Կը խորհէր ան ահ սիկարը ձեռին,
Երբ որ սաստկացաւ տարափն գնդակին,
Կոչեց ընկերաց՝ ի ձայն հրացանին:

Դէհ ելէք ընկերք ելէք միաբան,
Այս օրն է ժամը վրէժխնդրութեան,
Այս օր պիտ հիւսենք պսակը յաղթութեան,
Մեր անունը անմահ թողենք յաւիտեան:

Վրէ՛ժ կոչեցին ընկերք միասին,
Չորս կողմերից շուտ դուրս վազեցին,
Կատակ առնողները գետինը փռեցին,
Սերոբի մոսին Հիւսնուց վերցրին:

Մէկ կողմէ Գալէն, Թարփաթոզ և Պոդէն,
Զօրքի մէջ ընկած անխնայ կը քաղեն,
Միւս կողմէ՝ Մուրատ, Մկրոն և Մոսոն,
Շղթան պատռելով, ճամբան կը հարթեն:

Մէկ խօսքով գիշերուայ մութը կոխած էր,
Ռազմագէտ Սարհատ[6] ճամբան ընկած էր,
Հարիւր քսան դիակ գետինը փռած էր,
Աղբիւր Սերոբի վրէժը լուծած էր:

Գէորգ Չաուշին նուիրուած երգերուն մեծ մասը՝ հայերէն, քրտերէն, նոյնիսկ թրքերէն, Սուլուխի կռիւի մասին է: Այդ մասին կը վկայէ Ռուբէն Տէր-Մինասեան իր «Հայ Յեղափոխականի մը յիշատակները» գիրքին Դ. հատորին մէջ. «Սուլուխի կռիւին վրայ յօրինուեցան բազմաթիւ երգեր՝ հայերէն, թրքերէն, քրտերէն, որոնք մինչև այժմ ալ մոռցուած չեն»[7]:

Պատմական կարևորութեան համար խիստ անհրաժեշտ է ներկայացնել Սուլուխ գիւղն ու հոն տեղի ունեցած կռիւը:

Սուլուխի կռիւը տեղի ունեցած է 1907-ի մայիս 27-ին Սուլուխ գիւղին մէջ Գէորգ Չաուշի ֆետայիներու խումբի և թուրքերու միջև: 1904-ի Սասունի ապստամբութենէ յետոյ ՀՅԴ կուսակցութեան՝ շրջանի ղեկավարութիւնը որոշեց հրաժարիլ պայքարի ֆետայական գործելակերպէն՝ համարելով այն անհեռանկար և թուրք իշխանութիւններու հակահայկական քաղաքականութիւնն ուժեղացնելու պատրուակ ստեղծող: ՀՅԴ Արևելեան բիւրոյի հրահանգով Գէորգ Չաուշը (որ չէր պատկերացներ իր գոյութիւնը առանց հայդուկային կռիւներու) Տարօնէն կ'անցնէր Կովկաս, սակայն կը ձգձգէր իր մեկնումը:

1907-ի մայիս 27-ին Գէորգ Չաուշ և Ռուբէն (ՀՅԴ Տարօնի լիազօր ներկայացուցիչ, ուր մայիս 26-ին եկած էր Սուլուխ) իրենց ֆետայիներով գաղտնի գործով հաւաքուած էին Սուլուխ: Երկու ժամ անց գիւղը կը շրջապատեն թուրքերը: Սուլուխի կռիւը սկսած է նոյն օրը և տևած մինչև մայիս 28-ի առաւօտ:

Կռիւին սկիզբը ֆետայիները ետ կը մղեն թշնամիի յարձակումը, կը զոհուի Գալէն, ծանր կը վիրաւորուի Գէորգը: Թուրքերը կը խուժեն գիւղ, կը գրաւեն պաշտպանուողներուն դիրքերը, սակայն թուրք զօրքի հրամանատարներէն Քէօսէ Պինպաշիի մահը խուճապի կը մատնէ զանոնք: Գիշերային անսպասելի յարձակումով ֆետայիները կը ճեղքեն թշնամիի օղակը, դուրս կը բերեն վիրաւոր Գէորգը և կը հեռանան: Մայիս 28-ին Գէորգը կը մահանայ, զինք կը թաղեն Մուշի մէջ:

Սուլուխի կռիւին կը զոհուին 3 ֆետայի, 18 գիւղացի, 130 թուրք:

Այսպիսով՝ Գէորգ Չաուշ կ'անցնի Տարօնի առասպելներու ոսկեայ էջերուն, ուր հերոսներու փառքը կը հիւսեն ժողովրդական երգեր:

Ահա այս կռիւի պատմութեան նուիրուած է «Սուլուխ գիւղի կռուի երգը» խորագրեալ, բայց աւելի ծանօթ որպէս «Սոսկումն ահաւոր պատեց Մշոյ դաշտ» երգը, որ փաստական շարադրանք մըն է կռիւի ընթացքի մասին: Այս ամէնուն շարքին խիստ պատկերաւոր նկարագրուած են Գէորգ Չաուշի վիրաւորուիլն ու նոյնիսկ այդպէս դիրքերը չզիջելու պահը:

Երգի խօսքերուն հեղինակն է Ա. Ալիխանեան: Ան իսկապէս իրապաշտ մօտեցումով, բառերու ընտրութեամբ, շարահիւսական գեղեցիկ բանաձևումով կրցած է տալ կռիւին ամբողջական պատկերը: Այլ խօսքով՝ կարելի է ըսել, որ Ալիխանեան պատմական այս կարևոր դէպքը արխիւացուցած է:

Հեղինակը կը նկարագրէ, որ «Զարնուեր էր Գէորգ, սարերի ասլան, / Իր զէնքին նայեց մեկ ալ իր արեան, / Ուղղեց մոսինը իր նպատակին, / Ոնոաց (այսինքն՝ որոտաց կրակը – Ա. Գ.), վար ինկաւ Քէօսէ պինպաշին»: Քէօսէ Պինպաշին Քուպանի թաթարներէն էր, ազգութեամբ քապարտին: 1878-ին մասնակցած էր ռուս-թրքական պատերազմին իբրև կամաւոր: Կռուած էր նաև Շիբքայի պատերու տակ: Եմենի և Մակեդոնիոյ կռիւներու մէջ բարձրացած էր հարիւրապետի աստիճանին: Վերջին տարիներուն եկած էր Մուշ և, Սասնոյ մեծ ապստամբութիւնը ճնշելով, դարձած էր Բաղէշ նահանգի ամենահեղինակաւոր զինուորականը:

Այնուհետև թուլացող Գէորգը տանիքէն կը դիտէ թշնամիի նահանջող շարքերը և, ոգևորելով հայ ֆետայիները, կը գոռայ. «Զարկէ՛ք, անխնայ, տղերք, կը ձայնէր, / Թող մեր հրացանի որոտման ձայնէն, / Սարսափի Սուլթան Ելտըզի գահէն»:

Ելտըզը սուլթանական պալատն է՝ Ելտըզ սարայը, որ թարգմանաբար կը նշանակէ «Աստղային պալատ» և 1876-1909 թուականներուն եղած է Ապտուլ Համիտ Բ.-ի նստավայրը:

Այս երգը թէ՛ բառերու և թէ՛ երաժշտական կառոյցով մեր ֆետայական երգերու ամէնէն յուզումնախառներէն կը համարուի: Այն կը բաղկանայ 9 տուներէ, իւրաքանչիւր տուն՝ 6 տողէ:

Երաժշտութիւնը չափաւոր և ծանր կշռոյթով է, որպէս հայկական բնոյթի ոճ, թէև յուզումնալից և ցաւալի կը սկսի իւրաքանչիւր տունի առաջին չորս տողը, բայց յետոյ՝ 5-րդ տողէն, երաժշտական մեղեդին հետզհետէ կ'աշխուժանայ, և այսպիսով իւրաքանչիւր

Մշո Առաքելոց վանքը 1900-ականների սկզբին

տունի 5-րդ և 6-րդ տողերը պայծառ հնչեղութիւն կը ստանան:

Կարելի է ըսել, որ երգին մէջ արարքի նկարագրութիւնը իր հնչական ուժգնութեամբ և խօսքերու եղերերգայնութեամբ կը համապատասխանէ եղանակի պատմողական ընթացքին:

Ստորև «Սուլուխ գիւղի կռուի երգը» կը ներկայացուի ըստ «Նոր քնար» երգարանի (հրատարակութեան տեղն ու թուականը չեն նշուած, էջ 164):

ՍՈՒԼՈՒԽ ԳԻՒՂԻ ԿՌՈՒԻ ԵՐԳԸ

Սոսկումն ահաւոր պատեց Մշոյ դաշտ,
Նորէն հառաչեց հէգ Սուլթան անհաշտ,
Սարսափը մեծ էր, վախցաւ օսմանցին
Ղումանտար կանչեց Քոսի[8] պինպաշին,
Հասիր բանակով, ապստամբ Սուլուխ,
Սկսի կրակ, բարձրանայ վեր մուխ:

Ազատ որդիներ, Գէորգ և Ռուբէն
Ինչ միջոց պէտք է որ ի գործ դնեն,
Ուզեցին քաշուիլ ի սէր գիւղացուց,
Պինպաշին կռուոյ փողը հնչեցուց,
Տասնեակ զատուելով տղերք դիրք առին,
Աստուած կանչելով կրակ բաց արին:

Կռուեցէք, տղերք, Գէորգ կը ձայներ,
Տաքցաւ հրացան, վառեց գնդակներ,
Ի մէջ մեծ յուզման քաջ ֆիտաներին,
Աւրեր էր հրացան Գէորգ Չաուշին,
Երբ ինք անտարբեր հրացան կը քննէր,
Գնդակի կայծ մը ձախ կողը կը մտնէր:

Զարնուեր էր Գէորգ, սարերի ասլան,
Իր զէնքին նայեց մեկ ալ իր արեան,
Ուղղեց մոսինը իր նպատակին,
Ոռնաց, վար ինկաւ Քոսա[9] պինպաշին,
Երբ ինկած տեղից ուզեց վեր կայնել,
Հասաւ Մքոյից գնդակ մահաբեր:

Տանիքն ընկողմած Գէորգ կը դիտէր,
Զարկէք, անխնայ, տղերք, կը ձայնէր,
Թող մեր հրացանի որոտման ձայնէն,
Սարսափի Սուլթան Ելտըզի գահէն:
Դեհ կռուի՛նք, տղե՛րք, մինչև շունչ վերջին:
Արժանի լինինք փառաց պսակին:

Տաճկաց բանակը կոտրած սգաւոր,
Դարձաւ դէպի Մուշ Սանճաք սևաւոր,
Կորուստը մեծ էր, յաղթանակ շքեղ,
Վերանայ լինի քամբախտ Սուլուխ գեղ:
Ղարսեցի Յակոն, Գալէն Սպաղանցին,
Երկու կտրիճներ նահատակուեցին:

Արևն որ անցաւ Իննակեան սարէն,
Մարտադուլ կանչեց ռազմագէտ Ռուբէն,
Սարհատ, սիրական հետերնիդ տարէք,
Կանաչ դաշտի մէջ զքաջն պառկեցուցէք,
Եւ արտասուախառն ֆէտայիները,
Համբուրել գացին Գէորգ Չաուշին:

Լուսին բարձրացաւ դէպ երկինք կամար
Մշոյ դաշտ տրտում, տխուր կ'երևար,
Է, մնաս բարեաւ, հառաչեց Սարհատ,
Ա՜խ, չտեսայ զքեզ վայրկեան մը ազատ:
Փչեց վերջին շունչ, ըսաւ լուսնակին.
Սիրոյ ողջոյնս տար Անդրանիկ պետին:

Մեռնիմ քեզ, լուսնակ գոհար պատուական,
Անտոք, ֆըրֆըրքար, Տարօն սիրական,
Քեզ պիտ գան պատմեն հայ հերոսներէն,
Երբ որ գաս անցնիս Մշոյ սարերէն,
Սաչքի-Դուրանի պառկած քաջերէն,
Վրէժխնդրութեան ձայներ կը հնչեն[10]:

Գէորգ Չաուշի վերջին կռիւը՝ 27 մայիս 1907-ին, և նահատակութիւնը ամենայն հարազատութեամբ ու մանրամասնութեամբ նկարագրուած են «Գէորգ Չաուշի յիշատակին» երգին մէջ, որ աւելի յայտնի է առաջին տան առաջին տողով՝ «Հազար ինը հարիւր եօթ թուականին»:

Երգին հեղինակը Ներսէս եպիսկոպոս Խարախանեանն է:

Ո՞վ էր Ներսէս եպիսկոպոս Խարախանեանը:

Աւազանի անունը՝ Հմայեակ: Ծնած է 1850 թ. Աւրան գիւղը (Մուշի գաւառ): Հոգևորական էր, ազգային-ազատագրական շարժման գործիչ:

Սորված է Մուշի Ս. Կարապետ վանքի Ժառանգաւորաց վարժարանին մէջ:

1874-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, ապա՝ ստացած ծայրագոյն վարդապետի աստիճան:

1880-ին՝ Քղիի հոգևոր առաջնորդ:

Ժողովուրդին քարոզած է ինքնապաշտպանութեան գաղափարներ, օժանդակած ազգային-ազատագրական շարժման գործիչներուն (Արաբօ, Մարգար վարժապետ և ուրիշներ):

1887-ին ընտրուած է Ս. Կարապետ վանքի վանահայր և Տարօնի առաջնորդ:

1890-ին հանդիպած է Արևմտեան Հայաստան մեկնող երիտասարդ գործիչներու (Թիֆլիսի «Երիտասարդ Հայաստան» կազմակերպութեան, Մոսկուայի ուսանողութեան ներկայացուցիչներու) հետ, օգնած և խորհուրդներ տուած անոնց:

1893-ին ձերբակալուած է, 2,5 տարի արգելափակուած Բաղէշի (Պիթլիս) բանտին մէջ, Կ. Պոլսոյ պատրիարք Մ. Իզմիրլեանի պահանջով տարուած է Կ. Պոլիս, սակայն 1896-ին անոր հետ աքսորուած է Երուսաղէմ:

Երիտթուրքական յեղաշրջումէն (1908) յետոյ վերադարձած է Տարօն, ցկեանս եղած Տարօնի թեմի առաջնորդ:

Մահացած է Մեծ եղեռնէ քանի մը օր առաջ՝ 12 ապրիլ 1915 թ., Մուշ:

«Գէորգ Չաւուշի յիշատակին» երգը կը բաղկանայ 12 տուներէ, սակայն վերջին քանի մը տասնեակ տարիներուն հրատարակուած կարգ մը երգարաններու մէջ յաճախ 5 կամ 6 տուները տեղ գտած են: Իսկ բնագրի մասին կամ հեղինակի անունի յիշատակումը ևս խախտած է. երբեմն՝ յիշուած, երբեմն ալ՝ ոչ:

Հոս օրինակ կը բերենք 3 երգարան միայն.

ա. «Գողթան քնար» երգարան, հրատարակիչ՝ նկարիչ Աւօ, Հալէպ, 1947, էջ 16-17: Բնագրի վերջաւորութեան նշուած է հեղինակի անունը՝ Ներսէս եպ. Խարախանեան (Մշոյ առաջնորդ): Երգարանին մէջ տեղ գտած է միայն 5 տուն:

բ. «Յեղափոխական և ժողովրդային երգեր», հրատարակութիւն «Մշակ» մատենաշարի, Պէյրութ, 1972, էջ 59: Ասոր մէջ նոյնպէս տեղ գտած է 5 տուն միայն, սակայն հեղինակի անունը չէ նշուած:

գ. «Նոր քնար» երգարան, հրատարակութեան տեղն ու թուականը չեն նշուած, էջ 171-172: Բնագրի վերջաւորութեան նշուած է հեղինակի անունը՝ Ներսէս եպիսկոպոս Խարախանեան:

Շուրջ քսան տարի զէնք գրկած Գէորգ Չաւուշ ունեցաւ նոյնքան հերոսական նահատակութիւն, որքան որ հերոսական էր անոր կեանքը: Սակայն Գէորգի նահատակութեան դրուագին մէջ ամէնէն տպաւորիչը եղան անոր ապրած վերջին ժամերը: Ուստի յեղափոխական դէմք եղող Խարախանեան առաջնորդը «Գէորգ Չաւուշի յիշատակին» երգը այնքան յստակ ու ստոյգ բառերով կառուցած է, որ ամբողջութեամբ նախ կը համընկնի պատմութեան, ապա 12 համարներու մէջ պատմագրուածը կարծէք տեսանիւթ ըլլայ, որ կը դիտէք: Երգին մէջ հայդուկներու և թրքական զինուորներու ընդհարման մասին հաղորդուած տեղեկութիւնները հաւաստի են: Միւս կողմէ՝ անվարան կարե լի է ըսել, որ երգին խօսքերը ցոյց կու տան, որ այն հիւսուած է ժողովրդական երգի ընդհանուր բնոյթով ու ոճով:

Երաժշտութիւնը չափաւոր է, քիչ մը՝ մելամաղձոտութեան թեքուող, առաջ գացողը նիւթն է, երգին բառերը: Մեղեդիին մէջ կը զգանք գաղափարայուզական բովանդակութեան նշանակալիութիւնը: Այս երգը յուշարձան մըն է Գէորգ Չաւուշի հերոսութեան: Խօսքերու եղերերգութեամբ կը համապատասխանէ եղանակի պատմողական ընթացքին:

Հետագային կարգ մը երգիչ-մեկնաբաններ աշխուժ, խանդավառ ռիթմերով երգած են յիշեալ երգը, զգալիօրէն աղաւաղած են երգի խորքերը թաքնուած ոգին:

Կարևորութեամբ կ'արժէ նշել, որ հայրենի հանրայայտ երգիչ Ներսիկ Իսպիրեանը նշեալ երգը կ'երգէ բնագրային աննշան շեղումներով և յաւելումներով:

Ստորև կը ներկայացնենք Գէորգ Չաւուշին նուիրուած և ամէնէն շատ ժողովրդականութիւն վայելող երգը՝ իր բոլոր տուներով: Երգը, քանի որ, երաժշտութենէ զատ, նաև բառերով աղաւաղուած կամ յարմարեցուած է, ուստի որոշ բառերու համար կցած ենք օգտագործուած այլ տարբերակներ:

ԳԷՈՐԳ ՉԱՒՈՒՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հազար ին[ս] հարիւր եօթ թուականին,
Չքնաղ Մայիսի քսան և եօթին,
Տօն[1] է բազմաշխատ[2]՝ մահուան Գէորգին[3],
Սասնոյ հարազատ մեծանուն[4] քաջին:

Որ գրկած հողը հայրենի երկրին[5],
Մօտ[6] քսան տարի ծառայեց ազգին,
Կռուեցաւ անվերջ հետը տուշմանին[7],
Միշտ յաղթեց մէկով անոնց[8] հազարին:

Վերջին կռիւ մ'ալ կը սպասէր քաջին,
Պսակելու զինք փառաց երկնային,
Եւ ահա զօրքը պաշարեց Սուլուխ,
Եռաց կռիւ մ'ալ ինչպէս հրաբուխ:

Յառաջ արշաւեց Ք[է]օսա պինպաշին,
Կանչեց՝ Ֆետայի՛ք, մահն է ձեր բաժին:
Որոտաց Գէորգ՝ Անիրա՛ւ տուշման,
Եկո՛ւր թանկ կեանքդ ծախեմ շատ աժան:

Հարուածը խօսքէն[9] շատ աժան[10] չեղաւ,
Իսկոյն պինպաշին ձիէն վա[յ]ր ինկաւ.
Երբ ինկած տեղից ուզեց վեր կանգնել,
Հասաւ Մքոյից գնդակ մահաբեր:

Վրէ՛ժ, ընկերներ, դիմենք դէպի մահ,
Պարոն Ռուբէնը մոնչեց անահ,
Ա՛լ չվախենանք թշնամու սրից,
Ազատ մեռնիլը քաղցր է ամէնից:

Քաջի մոսինը գոռաց երեք ժամ,
Երկինք ու երկիր թնդաց մի անգամ,
Խիստ իրարանցում եղաւ զօրաց մէջ,
Փոուող[11] դիականց չկար թիւ ու վերջ[12]:

Թնդաց սրտերը տասնեակ քաջերուն,
Կռուեցան անվերջ մինչև իրիկուն,

Նորշեն (ներկայիս Սունկոս) գյուղը

Սուլուսիի կամուրջը

Իսկ երբ գիշերեց[13]՝ Գէորգը շալկած,
Գիւղէն դուրս ելան և գացին տրտմած[14]։

Ճամբան աղաչեց քաջը մահամերձ[15].
«Հանգիստ ձգէք[16] զիս, մի ընէք շնչահեղձ,
Դրէք զիս այստեղ, ծածկէք խոտերով[17],
Գացէք, ընկերներ, դուք գացէք բարով[18]։

Վերջին բարևներս տարէք հայ ազգին[19],
Վերջին համբոյրներս՝ որդւոյս Վարդգէսին»,
Լացին ընկերներ, մօտեցան կարգով,
Համբուրեցին զինք ու անցան խմբով[20]։

Նայեց բոլորտիք, ալ չկար ընկեր,
Ընկած կռուի դաշտ տառապէր անտէր[21],
Համբուրեց հողը քաղցր հայրենեաց,
Փակեց աչքերը ներքևն աստեղաց[22]։

Հանգիստ, փրկութիւն իր սուրբ ոսկերաց,
Պատուաւոր, յարգի անունդ անմոռաց,
Հայն[23] ալ միշտ պիտի տօնէ դարէ դար
Ազնիւ Գէորգի տօնը անդադար։

1. Օրն։
2. Բազմաշխարհ։
3. Գէորգ Չաւուշին։
4. Անուն մեծ, անմոռաց։
5. Գլուխ չը դրաւ փափուկ անկողնին։
6. Ճիշդ։
7. Կռուեցաւ անվախ՝ վրէժ իւր կրծքին։
8. Թուրքի։
9. Հարուածն ու խօսքը։
10. Հեռու։
11. Մեռնող։
12. Ոչ թիւ կար, ոչ վերջ։
13. Գիշերին։
14. Յոգնած ու տանջուած։
15. Քաջ Շմաւոնին։
16. Թողէք։
17. Ծածկեցէք խոտով։
18. Իսկ դուք, ընկերներ, գացէք ապահով։
19. Անդրանիկ փաշին։
20. Անցան ապահով։
21. Ինքն էր կռուի դաշտ՝ տառապեալ, անտէր։
22. Փչեց վերջին շունչ, հասաւ լուսնեակին։
23. Ժողովածուին մէջ՝ Նոյն։

«Գէորգ Չաւուշի յիշատակին» կամ, ինչպէս յայտնի է, «Հազար ինը հարիւր եօթ թուականին» երգը, վերոնշեալ տուներէ կամ բառերու այլ տարբերակներէ զատ, ունի երկու տարբերակներ ալ. բնագիրը բնականաբար առաջինն է, որ 12 տունէ կը բաղկանայ։

Ստորև տրուած երգին բնագիրը կը պահուի Հայաստանի Հանրապետութեան ԳԱ հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտի բանահիւսութեան արխիւին մէջ՝ FF IV, 8045-8047։ Երգած է 67 տարեկան Կ. Յովոյեանը Արթիկի շրջանի Մանթաշ գիւղին մէջ 1968-ի նոյեմբերին։ Գրի առած է Ստեփան Խաչատուրեանը։

Յովոյեանը երգը սորված է Արևմտեան Հայաստանէն գաղթած Տիգրան անունով մէկէ մը 1918-ին։ Տիգրանենց ընտանիքը այդ օրերուն ապրած է Յովոյենց տունը։

ԳԷՈՐԳ ՉԱՒՈՒՇԻ ԽԱՂԸ

Հազար ինը հարիւր եօթ թուականին՝
Զքնաղ Մայիսի քսանըեօթին,
Տօն է բազմաշխատ մահուան Գէորգին,
Սասնու հարազատ մեծանուն քաջին։
Իր գրկած հողը՝ հայրենեաց երկիր,
Մօտ քսան տարի ծառայեց ազգին,
Կռուեցաւ անվախ հետը տուշմանին,
Միշտ մէկով ախտեց էնոնց հազարին։
Առաջ արշաւեց Քէօսա Պինպաշին,
Ասաց. «Ֆետայի, մահ է ձեր բաժին»։
Որոտաց Գէորգ. «Անիրաւ տուշման,
Էկուր, թանկ կեանքդ խիստ ծախիր շատ էժան»։
Խիստ իրարանցում էղաւ զօրաց մէջ,
Մեռնող, դիակաց չկար թիւ ու վերջ։
Կռուեցան անվախ մինչև իրիգուն,
Իսկ երբ գիշերին Գէորգ շալակած,
Գիւղից դուրս ելան, գնացին տրտում,
Ճամբան աղաչեց քաջ Շմաւոնին.
«Թողէք զիս հանգիստ, մ'էնէք շնչահեղձ,
Դրէք զիս այստեղ, ծածկեցէք խոտով,
Իսկ դուք հընգերներ, գնացէք ապահով։
Վերջին բարևս տարէք հայ ազգին,
Վերջին համբոյրս՝ որդուս Վարդգէսին»։
Լացին հընգերներ, մօտեցան կարգով,
Համբուրեցին զինք, անցան ապահով։
Նայեց բոլորը՝ էլ չկար հընգեր,
Ինքն էր կռուի դաշտ՝ տառապեալ, անտէր։
Համբուրեց հողը քաղցր հայրենեաց,
Ու փակեց աշկեր ներքև աստեղաց։

Իսկ յաջորդ տարբերակի բնագիրը կը պահուի Հայաստանի Հանրապետութեան ԳԱ հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտի բանահիւսութեան արխիւին մէջ՝ Բ. Ղազիյեանի ֆոնդ, 1981 տ., № 1: Երգած է Անդրանիկի կամաւորական գունդի նախկին զինուոր, ծագումով մշեցի, 81 տարեկան Ե. Պաղտասարեանը 1971-ին Երևանի մէջ: Գրի առած է Բ. Ղազիյեանը:

Մէկ այլ տարբերակ երգած է Թ. Պօղոսեանը 1984-ին Երևանի մէջ: Սորված է լսելով:

ԳԷՈՐԳ ՉԱՒՈՒՇԻ ԵՐԳԸ

1907 թուականին,
Չքնաղ մայիսի քսան և եօթին,
Տօն է բազմաշխատ մահուան Գէորգին,
Սասնա մեծանուն հարազատ քաջին:

Յառաջ արշաւեց Քէօսա պինպաշին
Կանչեց՝ ֆիտայիք, մահն է ձեր բաժին,
Որոտաց Գէորգ. անիրաւ տուշման,
Եկուր քու կեանքը գնեմ շատ էժան:

Քաջի մուսենինին գոռաց երեք ժամ,
Կարծեց երկինքը շարժուեցաւ մի անգամ,
Խիստ իրարանցում եղաւ զօրքի մէջ,
Փոռուած դիակներին ոչ թիւ կայ, ոչ վերջ:

Երբ գիշեր մութն էր, շալկեցին զԳէորգ,
Ճամպին աղաչեց. ինձ դրէք գետին,
Խոտով ծածկեցէք, մի անէք մահաշունչ:
Լացին ընկերներ, կանգնեցան շարքով,
Համբուրեցին զքաջ և անցան կարգով:
Փչեց վերջին շունչ, հասաւ լուսնակին:

Գնացէք ընկերներ, գնացէք դուք պարով,
Վերջին ողջոյնս Անդրանիկ փաշին,
Վերջին բարևս հայ ժողովուրդին,
Վերջին համբոյրս որդեակ Վարդգէսին,
Փակեց աչքերը ու գնաց բարով:

Յաջորդը «Գէորգ Չաւուշին» խորագրով երգն է, որ նոյնպէս ճանչցուած է երգի առաջին տան առաջին տողով՝ «Մայիս ամսուն մէջ...», յար ու նման նուիրուած է Սուլուխի կռիւին և Չաւուշի նահատակութեան:

Երգը խորազդեցիկ բառերու ընտրութեամբ, գեղեցիկ բանաձևումով ու յուզական մեղեդիով բաւական յուզաթաթաւ է: Երգին բառերը պարզ ու մատչելի են, և միտքը շատ յստակօրէն կը հասնի ունկնդիրին:

Երգը, բառ ու երաժշտութիւն միաձուլած, կը պատկերացնէ Գէորգ Չաւուշի նահատակութեան վայրկեանները. Սուլուխի կռիւի աւարտին՝ մութը իյնալէ ետք, երբ Գէորգին ընկերները կը յաջողին զինք անվնաս դուրս բերել գիւղէն և կը յուսադրեն, որ պիտի լաւանայ, ան Ռուբէնին կ'ըսէ. «Լմնցած է, դիակի մը համար խումբը մի՛ վտանգէ, անցէք գնացէք, Վարդգէսը և Եղսոն քեզի ամանաթ»: Այդ պահուն Գէորգ ունէր իրաւունքը և կարելիութիւնը՝ որպէս հայդուկապետ կարգադրութիւններ ընելու, որ զինք ապահով տեղ փոխադրեն ու միջոցներ ձեռք առնեն իր վէրքը բուժելու: Սակայն մահամերձ Գէորգ իր վէրքին առթած ցաւերուն մէջ իսկ կը գիտակցէր խումբին ծանր վիճակին: Փոքր անզգուշութիւն մը կրնար վերջ տալ թէ՛ ֆետայիներուն և թէ՛ գիւղի ամբողջ բնակչութեան: Ան յանձն կ'առնէ մեռնիլ և փրկել խումբն ու ժողովուրդը: Մեծ գիտակցութեամբ և ամենայն սառնասրտութեամբ կ'ըսէ. «Անցէք գնացէք....»:

Այնուհետև Կարօ Սասունի առիթով մը այսպէս պիտի նկարագրէր Չաւուշի թաղման արարողութիւնը. «Հերոսին թաղումը կատարուեցաւ հայ աշակերտներու և կղերականներու շքերթով, կառավարութեան կարգադրութեամբ: Մշոյ ժողովուրդը տուները քաշուած էր, կոտորածի վախէն: Ու ինչ որ զարմանալի է, կառավարական նուագախումբը հետևեցաւ Գէորգի դագաղին, նուագեց Շոփէնի մահերգը, ինչ որ ըրած էին թուրք զօրավարին: Գէորգը թաղուեցաւ Ծիրինկատարի ստորոտը, հայ գերեզմանոցին մէջ»[11]:

Վերոնշեալ տողերը աւելի կը դիւրացնեն յստակացնեն «Գէորգ Չաւուշին» երգի ամբողջական բնութագրումը:

Երգին բառերու ընտրութիւնը, միտքերու հաղորդումը, դէպքին ճշգրիտ նկարագրումը կ'արտացոլացնեն նախ երգի բառերու հեղինակին հոգեկան ներքին տագնապը և զգացումները, ապա՝ Գէորգ Չաւուշի երևոյթը, անոր նահատակութիւնը:

«Գէորգ Չաւուշին» երգի երաժշտութեան ոճը քնարերգական է, չափաւոր ու հանդարտահոս: Հոն զգալի է մորմոքախառն ու խորաշունչ ալիքներու երանգը:

Սոյն երգը բառերու առումով ունի երկու տարբերակ: Առաջինը բնագիրն է, որուն մէջ կարգ մը բառեր ևս ունեն տարբերակներ, ուստի ատոնց համար կցած ենք օգտագործուած այլ տարբերակներ: ■

Հղում

1. Կառավարութեան:
2. Այժմ՝ Քըրքէօյ:
3. Աւօ, Յեղափոխական Երգեր, հրտ. Յեղափոխական Ալպոմ, Թ. տիպ, Պէյրութ, 1979, էջ 56, նոթաշար, պտկգ.:
4. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Գ. հատոր, Բ. հրատարակութիւն, Պէյրութ, 1974, էջ 243:
5. Մուրատ Պոյաճեան:
6. Գէորգի ծածկանունը:
7. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Դ. հատոր, Բ. հրատարակութիւն, Պէյրութ, 1975, էջ 181:
8. Քէօսէ պինպաշի:
9. Քէօսէ:
10. «Գողթան քնար» երգարան, հրատարակիչ՝ նկարիչ Աւօ, Հալէպ, 1947, էջ 24-25, 35-36: Երգարանին մէջ տեղ գտած է միայն 7 տուն: Հոն վերնագիր գրուած է «Գէորգ Չաւուշի Սուլուխի կռիւը»: Տես՝ նաեւ Աւօ, Յեղափոխական երգեր, հրտ. «Յեղափոխական Ալպոմ», Թ. տիպ, Պէյրութ, 1979, էջ 49-50, նոթաշար, պտկգ.:
11. Սասունի Կ.,

Դրվագներ Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարի պատմությունից (1722-1730 թթ.) (պայքարի սկզբնավորման 300-ամյակի առթիվ) (մաս 2)

Արարատ Հակոբյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Մաս երկրորդ

3. Ազատագրական պայքարը Սյունիք-Կապանում: Դավիթ-Բեկ (1722-1730 թթ.)

Նույն շրջանում հայ քաղաքական-ազատագրական պայքարի գործուն թատերաբեմ է դառնում նաև Սյունիք-Կապանը: Ընդգծված ռուսական կողմնորոշում ունեցող և ազատագրության հույսը հիմնականում ռուսական օգնության հետ կապող արցախահայության պայքարի համեմատությամբ՝ շատ ավելի ազդեցիկ ու ծանրակշիռ կարելի է համարել այդ նույն տասնամյակին՝ 1720-ական թթ., Դավիթ Բեկի (1669-1728) գլխավորած Սյունիքի ազատագրական կռիվները: Պատմական իրողությունն այն է, որ Սյունիք-Կապանի ազատագրական պայքարի համար արտաքին ազդակ հանդիսացավ այդ շրջանում Պարսկաստանում ստեղծված քաղաքական անկայուն դրությունը, մասնավորապես՝ ռազմատենչ աֆղան ցեղերի 1721 թ. արշավանքը դեպի մայրաքաղաք Սպահան և թուլակամ շահ Սուլթան Հուսեյնի գերեվարումը: Հարկ է նաև նշել, որ ինչպես Արցախում, այնպես էլ Սյունիքում սկսված շարժումը նախ ուղղված էր լեզգի ասպատակիչ ու կողոպտիչ հրոսակախմբերի դեմ: Եվ պատահական չէր, որ ավելի վաղ ժամանակներից լեզգի լեռնականներին ավելի մոտ գտնվող Արցախում կառուցվել էին պաշտպանական ամրություններ, որոնք, ինչպես արդեն ասվեց, կոչվում էին սղնախներ:

18-րդ դարի սկզբներից օսմանյան իշխանությունների հրահրմամբ լեռնական լեզգիները ուժեղացնում են իրենց ավարառուական ասպատակությունները Անդրկովկասի քաղաքների ու մյուս բնակավայրերի վրա: Այդ վտանգը, Արցախից զատ, սպառնում էր նաև Սյունիքին: Եվ այստեղ ինքնապաշտպանական պայքարը կազմակերպելու և ղեկավարելու համար պարսից շահի հրամանով, փաստորեն, Այսրկովկասի կառավարիչ նշանակված Վախթանգ 6-րդը, Սյունիքի հայերի խնդրանքով, իր զորականներից հայազգի Դավիթ Բեկին իր թիկնապահ զորախմբով, 20 քաջակորով հարյուրապետներով 1722 թ. աշնանը հրավիրում է իր հայրենի Կապան՝ սկզբում նրստավայրը դարձնելով Շինուհայր ամրոցը, ապա՝ Տաթևը[1]: Կարելի է ընդունել Լեոյի այն տեսակետը, որ Դավիթ Բեկի գլխավորած շարժումը ծնվել էր ներսում՝ Կապանում, և այնքան էլ արտաքին ազդակներով չէր պայմանավորված[2]:

Դավիթ Բեկին հաջողվում է տեղի թյուրք-թաթարական ցեղախմբերի դեմ դժվարին մարտեր մղելով, նաև ներքին դավաճանական փորձերը ճնշելով ստեղծել զորեղ, շուրջ 10-հազարանոց բանակ: Նա իր մերձավոր զինակից Մխիթարին նշանակեց բանակի հրամանատար (սպարապետ): Այս գործառույթները անգամ ճանաչեց պարսից շահ Թահմասպ 2-րդը: Բանն այն է, որ Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական պայքարն առաջին հերթին ուղղված էր տարածաշրջան թուրքական ներխուժման դեմ: Դավիթ Բեկի ստեղծած բանակն աչքի է ընկել երկաթյա կարգապահությամբ, ինչը համարվում է ցանկացած բանակի ռազմական հաջողության առաջնային կողմերից մեկը: Շատ ուսանելի է, որ նրան հաջողվել է հնարավորինս ճնշել ներքին դավաճանական փորձերը: Փաստեր կան, որ մարտական կարգապահությունը խախտելու համար Դավիթ Բեկը գլխատման միջոցով մահապատժի է ենթարկել Պապ զորապետին, անգամ ծեծի է ենթարկել (գլխատումը փոխարինելով ծեծի) Մխիթար Սպարապետին, էլ չենք խոսում հայտնի դավաճանների և ուրացողների մասին[3]:

Հայտնի է, որ ռազմաքաղաքական իրավիճակը տարածաշրջանում բարդանում է, երբ թուրքական կանոնավոր զորքերը 1725-1726 թթ. հարձակում են ձեռնարկում նաև Սյունիքի վրա:

Երևանի գրավումից հետո Արևելյան Հայաստան ներխուժած թուրքական բանակը 1726 թ. հարձակվեց Կապանի հայկական իշխանության վրա: Դավիթ Բեկը ստիպված ամրացավ իր նոր կառուցած Հալիձորի բերդում: 1727 թ. մարտին Հալիձորը պաշարվեց: Դավիթ Բեկը, Մխիթար Սպարապետը, Տեր-Ավետիսը և 300 զորական քաջորդիներ ամրացան Հալիձորի բերդում և այնտեղից անակնկալ հակահարձակումով ջարդեցին

ու փախուստի մատնեցին մեծաքանակ թուրքական զորքերին՝ տանելով փառավոր հաղթանակ: Տվյալներ կան, որ օսմանցիները տվել են 13 հազար զոհ, ինչը, մեր կարծիքով, չափազանցություն է, մարտի դաշտում թողել 148 դրոշ և այլն[4]:

Նույն շրջանում Արցախի ազատագրական կռիվների օրինակը ցույց է տալիս, որ անիմաստ էր դրսից, ի մասնավորի՝ Ռուսաստանից օգնություն ակնկալելը, մի անհուսալի բան, ինչը զինուժի շարքերում պիտի հուսալքություն առաջ բերեր: Դրան հակառակ՝ Դավիթ Բեկը, ապավինելով սեփական ուժերին, հանդես բերելով աննկուն կամք ու վճռականություն, մի քանի նոր հաղթանակներով կարողանում է թշնամուն դուրս քշել Կապանից և Մեղրիից, ինչն արժանանում է շահ Թահմասպ 2-րդի հավանությանը: Պարսից տիրակալը 1727 թ. Դավիթ Բեկին ճանաչում է Սյունիքի կուսակալ: Դավիթ Բեկը ստանում է վասալական (ինքնավար) իշխանի նշաններ, առանձին դրոշ (խաչվառ), նժույգ և պատվական զգեստներ: Նրան տրվեց նաև սեփական դրամ հատելու իրավունք: Բոլոր տեղական թուրք իշխանավորներն իրենց զորամասերի հետ հնազանդություն են հայտնում Դավիթ Բեկին[5]:

Բացի քաջակորով զորավարի կարողություններից՝ Դավիթ Բեկը հանդես է բերել նաև դիվանագետի ու պետական հեռատես գործչի ունակություններ: Հատկանշականն այն է, որ իր գլխավորած ազատագրական պայքարի 6 տարիների ընթացքում նա կարողացավ հայ ժողովրդի ազգային շահերը ներդաշնակել պարսից պետական շահերի հետ և պաշտոնապես ճանաչում ստանալ Իրանի շահի կողմից:

Մեր կարծիքով՝ սա պատմական ուսանելի մի օրինակ է նաև մեր ժամանակների համար, թե ինչպես կարելի է փոխադարձ շահերի հաշվառումով կառուցել միջպետական հարաբերություններ՝ երկրորդ պլան մղելով կրոնադավանաբանական և արհեստական այլ կարծրատիպերը: Դավիթ Բեկի որդեգրած քաղաքականության շնորհիվ կրոնական գործոնը դառնում է երկրորդական, և պայքարը ձեռք է բերում քաղաքական բնույթ: Դավիթ Բեկն ու իրեն հավատարիմ ռազմաքաղաքական շրջապատը ավելի քան երեք դար առաջ արդեն իսկ կուտակված պատմական ու իրական փորձով քաջ գիտակցում էին, թե Իրան կամ Թուրքիա երկընտրանքում ում հետ պետք է գործակցել և պայքարի սուր սլաքը ում դեմ ուղղել: Հարկ է նաև ընդգծել, որ Սյունիքի դավիթբեկյան կռիվների ժամանակ արձանագրվել են նաև օսմանյան զորքերի դեմ հայ-պարսկական զինուժերի համատեղ գործողությունների օրինակներ:

1728 թ., սակայն, Դավիթ Բեկի մահը շրջադարձային եղավ ու կանխորոշեց Սյունիքի ազատագրական պայքարի վախճանը: Դավիթ Բեկի մահից հետո Սյունիքի ազատագրական պայքարի ղեկավարումը ստանձնում է նրա հավատարիմ զինակից Մխիթար Սպարապետը: Ի վերջո, 1729 թ. թշնամին գրավում է Հալիձորը: Ներքին անհամաձայնությունների ու պառակտումների հետևանքով դրությունը գնալով ծանրանում է: 1730 թ. խնձորեսկցիների կողմից Մխիթարի եղերական սպանությունը վերջ դրեց Սյունիքի ազատագրական պայքարին, որը, անշուշտ, ամենախոշոր ելույթն էր 18-րդ դարի հայ ազատագրական շարժման ու պայքարի պատմության մեջ:

Բազմավաստակ պատմաբան Լեոն, շատ բարձր գնահատելով Դավիթ Բեկի ապրած կյանքն ու ռազմաքաղաքական գործունեությունը, իրավացիորեն նշում է, որ «նա իր հետ գերեզման տարավ և իր գործը, մնալով հայոց պատմության մեջ մի փայլուն, առանձնացած երևույթ, որ իբրև ազգային ազատագրության մարմնացում՝ չուներ իր նմանը Կիլիկիայի հայոց անկախության խորտակումից հետո (ընդգծումը մերն է – Ա. Հ.)»[6]:

4. Խամսայի մելիքությունները իբրև հայոց պետականության արտահայտություն

Ինչպես արդեն նշվեց, թուրքերը Անդրկովկաս էին ներխուժել 1723 թ.: Նոյեմբերին գրավել էին Թիֆլիսը, 1724 թ. սեպտեմբերին՝ Երևանը: Պարսկաստանում ծավալվող ներքին խռովությունները, աֆղանների ներխուժումները, գահակալական կռիվները և այլ խնդիրներ հնարավորություն չէին տալիս շահին կանգնեցնելու թուրքերի առաջխաղացումը դեպի Թավրիզ և հակահարված տալու թշնամուն: Թշնամին ի վերջո գրավում է նաև Թավրիզը: 1725 թ. իր իսկ մերձավորների կողմից սպանվում է աֆղան Միր-Մահմուդ շահը, և իշխանությունն անցնում է նրա հորեղբորորդի, մի նոր արյունարբու Աշրաֆին, իսկ տակավին իշխանազրկված թագաժառանգ Թահմասպ 2-րդը Արդաբիլում էր ապաստանել: Այդ ամենի հետևանքով 1727 թ. հոկտեմբերին Համադանում կնքվում է թուրք-պարսկական պայմանագիր՝ վերջինիս համար շատ ծանր պայմաններով[7]:

Պարսկաստանի համար տարածաշրջանային աշխարհաքաղաքական լուրջ իրավիճակ ստեղծած ու ծանր հետևանքներ առաջ բերած գործընթացները կարողանում է շտկել Թահմասպ 2-րդի մոտ

Նադիր Խան

Դավիթ-Բեկ

ծառայության անցած Խորասանի թուրքմենական աֆշար ցեղից զորավար Թահմազ Ղուլի (թարգմ.՝ «ստրուկ») Նադիր խանը՝ հետագայի հռչակավոր Նադիր շահը: Նախ Նադիր Ղուլի խանը ջախջախում է աֆղաններին ու շահ Աշրաֆին, որը մինչ այդ սպանել էր թագաժառանգ Թահմասպ 2-րդի գահազուրկ ծերունի հորը՝ Սուլթան Հուսեյնին, իսկ ինքն էլ սպանվեց բելուջների կողմից: Ճկուն դիվանագետ ու դաժան զորավար Նադիր Ղուլի խանը կարգվում է շահ Թահմասպ 2-րդի զորքի գլխավոր հրամանատար: Նա 1729 թ. լիակատար պարտության է մատնում ապստամբ աֆղաններին և գործնականում դառնում պարսից տերության միանձնյա տեր: 1732 թ. Նադիր խանը Թահմասպի մանկահասակ որդուն կարգում է թագավոր՝ Շահ Աբաս անունով, իսկ 1736 թ. մարտին՝ Նովրուզ-բայրամի օրը, նա Մուղանի դաշտում Իրանի աշխարհիկ և հոգևոր առաջնորդների մասնակցությամբ հանդիսավոր կերպով թագադրվում (օծվում) է պարսից շահ: Ի դեպ, շահի թագադրման արարողությանը մասնակից է եղել Դիզակի մելիք Եգանը: Իսկ գլխավոր արարողություններից մեկը՝ նորընտիր շահի գոտուն թուր կապելը, կատարել է հայոց Աբրահամ Կրետացի կաթողիկոսը[8]: Այդպիսով Սեֆյանների թագավորությանը փոխարինելու եկավ Աֆշարականը: Նադիր շահին հաջողվում է հետ բերել պարսից տերության կորսված, այդ թվում՝ մերձկասպյան տարածքները:

Հայտնի է, որ Նադիր շահը հետագայում դաժան նվաճումներով ու դրանց ուղեկցող կողոպուտներով հասել է մինչև Հնդկաստանի մայրաքաղաք Դելի: Նա դավադրաբար սպանվել է մերձավորների կողմից:

Հարկ է նաև արձանագրել, որ 1720-1730-ական թթ. դեպի Անդրկովկաս՝ Իրանի ազդեցության գոտիներ ներխուժած Օսմանյան Թուրքիայի ոտնձգությունների դեմ պայքարում պարսկական, հատկապես Նադիրի զորքերի հետ համագործակցում էին հայ աշխարհիկ ու հոգևոր իշխանավորները, անգամ հայ կամավորների զորախմբերը մասնակցություն են ունեցել թուրքերի դեմ մղվող կռիվներին: Նշանակալի էր 1735 թ. հունիսին Եղվարդի մոտ տեղի ունեցած մեծ ճակատամարտը, որի ժամանակ Նադիրի զորքը, հայ աշխարհազորայինների մասնակցությամբ, ջախջախիչ պարտության մատնեց օսմանյան ենիչերական բանակին: Ճակատամարտի ժամանակ սպանվում է թուրք սերասկյար (գլխավոր հրամանատար) Քյոփրուլու Աբդուլլահ փաշան: Դրանից հետո պարսից զորքը արշավեց դեպի Կարս և Էրզրում, և սա բավարար եղավ, որ թուրքերը հանձնեն Երևանը, հեռանան Անդրկովկասից, և վերականգնվի տարածքային-սահմանային նախկին վիճակը:

Իբրև հայերի ցուցաբերած հավատարմության ու մատուցած ծառայության (համագործակցության) արժևորում՝ Իրանի բարձր իշխանությունները և անձամբ Նադիրը հատուկ հրովարտակով առանձնաշնորհումներով ու նվերներով պատվեցին Մայր Աթոռ Սբ Էջմիածնին: Բացի այդ՝ հենց Նադիր շահի նախաձեռնությամբ 1736 թ. արցախյան ինքնավար վարչական հինգ (Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի) միավորների՝ մելիքությունների միախմբումից հիմնվեցին պատմությանը հայտնի Խամսայի (արաբերեն՝ «հինգ») մելիքությունները, որոնց կառավարման իրավունքը խանի և բեկլարբեկի (իշխանաց իշխանի) կարգավիճակով տրվեց 18-րդ դարի 30-ական թթ. հայ իրականության քաղաքական խոշորագույն դեմք Դիզակի մելիք Եգանին[9]:

1730-ական թթ. պարսից Նադիր խան-շահը Հայաստանից ու Անդրկովկասից վտարեց թուրքերին և, այդ ընթացքում ստանալով հայերի զորակցությունը, հայ ժողովրդի հանդեպ վարեց բարյացակամ քաղաքականություն: Նա Ամենայն հայոց կաթողիկոսությանը և հայ մելիքական տներին տվեց նոր կալվածքներ ու արտոնություններ: Ուշագրավ է, որ Նադիրը 1000 թումանով վերանորոգել տվեց Էջմիածնի վանքը և տաճարին նվիրեց 15 կգ-անոց ոսկե ջահ:

Հարկ է նշել, որ Ղարաբաղը՝ իբրև հսկայական լեռնային միջնաբերդ, տարածքային առումով երբեմն ներառել է նաև Սյունիքը՝ Մեծ ու Փոքր Ղափանները: 16-րդ դարի սկզբից, այսինքն՝ Սեֆյանների ժամանակներից, դրանց տիտղոսավոր կառավարիչ-իշխանները կրում էին շահի ֆարմանով[10] հաստատված «մելիք» կամ «մալիք» պատվանունը (տիտղոսը): Լեռյի պարզաբանմամբ՝ «մելիք»-ը սեմական ծագում ունեցող բառ է և նշանակում է «թագավոր»[11]: Իսկ

Խամսան հինգ մելիքությունների ամբողջություն է:

Անշուշտ, Արցախի 15-ամյա ազատագրական պայքարի արգասիք կարելի է համարել Խամսայի մելիքությունների ստեղծումը, որոնք՝ որպես մեկ ամբողջություն, իրենց ժամանակի մեջ դարձան **պետականության իմաստ ու բովանդակություն** պարունակող հայկական մի յուրահատուկ կառույց: Մեծ դրվատանքի է արժանի հայ մեծանուն պատմավիպասան Ռաֆֆու՝ պատմագեղարվեստական ոճով շարադրված «Խամսայի մելիքությունները» կոթողային աշխատությունը[12]: Խոսելով երբեմնի հին և միջնադարյան հայկական թագավորությունների անկման մասին՝ նա միաժամանակ հիշեցնում է, որ դրանցից հետո էլ, «պահպանված նախկին փառքի մոխիրի մեջ», չմարեցին հայոց պետականության «կայծերը»[13]: Եվ պետականության նման դրսևորումներից մեկն էլ նա համարեց Խամսայի մելիքությունները, որոնց և նվիրեց իր համանուն ստեղծագործությունը:

Տեղին է Ռաֆֆու, ինչպես նաև Արցախի մելիքական տների և հայ մելիքությունների պատմության՝ մեր ժամանակների ճանաչված հետազոտողներից Ա. Մաղալյանի տված գնահատականը, որ մելիքական տներն իսկապես կարելի է դիտել հայոց պետականության բեկորներ ու շարունակություն[14]: Պատահական չէ, որ Արցախի մելիքներն իրենց համարում էին «հայոց թագաւորաց ազնիւ զինուորաց մնացեալ ժառանգք»[15]: Պետք է նաև արձանագրել, որ եթե պարսկական իշխանության պատմաշրջանում հայ մելիքական տներն ինչ-որ չափով հայկական պետականության ատրիբուտներ պարունակող իշխանական կառույցներ էին, ապա արևելահայ երկրամասերի՝ Ռուսաստանին միացվելուց հետո ցարական իշխանությունները փաստորեն քայքայեցին դրանք:

Ամփոփում

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ Արցախի և Սյունիքի (Կապանի) 18-րդ դարի 20-30-ական թթ. զինված ազատագրական պայքարի հետևանքն այն եղավ, որ ստեղծվեցին և մի կարճ ժամանակահատված գոյություն ունեցան հայկական **ինքնատիպ (ինքնիշխան) պետականություններ՝ Կապանի և Խամսայի**, որոնք Իրանի հովանու տակ էին: Բայց կղզիացած ու մեկուսի այդ իշխանությունները, հասկանալի է, այն ժամանակվա աշխարհաքաղաքական բարդ պայմաններում չէին կարող հարատևել: Դրանից հետո հայ ժողովրդի պայքարը ազատագրման ու անկախության համար, արտաքին աննպաստ գործոններով պայմանավորված, առժամանակ թուլացավ, և անկախություն ձեռք բերելու գործընթացը հետաձգվեց:

Մյուս կողմից, երեք դարի հեռավորությունից պատմական փորձի ու դասերի առումով հանրագումարի բերելով Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարի ռազմաքաղաքական դրվագները, կարելի է ար-ձանագրել, որ դրա բացերից մեկն այն էր, որ այն չստացավ համահայկական բնույթ և սահմանափակվեց միայն Արցախով և Սյունիքով: Արցախի և Սյունիքի ազատագրական պայքարի փորձը ցույց տվեց, որ այդ ընթացքում հաճախ գլուխ է բարձրացրել ներքին անմիաբանությունը, որին հետևել են ներքին մատնությունները, ձախողումները և սպանությունները:

Այդ տասնամյակների քաղաքական իրողություններից մյուսն այն էր, որ Ռուսաստանից ակնկալվող օգնությունը չստացվեց: Բայց դրա փոխարեն դրվատանքի արժանի ուսանելի փորձ եղան Թուրքիայի դեմ պայքարում հայ-իրանական ռազմաքաղաքական գործակցության առանձին դրսևորումները: Բայց և այնպես, Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարը՝ իր պատմական փորձով և հարուստ դասերով հանդերձ, պետք է դիտել որպես դրվատանքի արժանի քայլ հայոց պետականության վերականգնման ճանապարհին:

Պատմական անցյալի ուսանելի փորձի և արդի իրողությունների համադրական վերլուծությունից կարելի է հետևեցնել, որ ՀՀ ներկայիս արտաքին քաղաքականության հայեցակարգը մշակելիս անշուշտ պետք է փորձել նոր մակարդակի բարձրացնել հայ-իրանական հարաբերությունները՝ իբրև Հայաստանի անվտանգությունը և տարածքային ամբողջականությունը երաշխավորող արտաքին ազդեցիկ գործոն:

Եվ վերջապես, պետք է արձանագրել, որ հետագա՝ 19-20-րդ դարերի հայ ազատագրական պայքարի համար մեծապես պարտական ենք Արցախ-Սյունիքի պայքարի այս դրվագներին, մի պայքար, որն ի վերջո հանգեցրեց 1918 թ. «Մայիսի 28»-ի պատմական մեծ խորհրդին՝ հայոց անկախ պետականության վերականգնմանը:

Հղում

1. Տես Հայոց պատմություն, հ. 3, գ. 1, էջ 44:
2. Տես Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 203:
3. Տես Սեբաստացի Ղ., Դավիթ Բեկ կամ պատմություն դափանցոց, թարգմ. Ա. Մաղդյան, Եր., 1992, էջ 39 և 49: Տես նաև Գրիգորյան Գ., Հախվերդյան Ս., Սյունիքի պատմություն, Եր., 2001, էջ 186-187:
4. Տես Սեբաստացի Ղ., նշվ. աշխ., էջ 61: Տես նաև Գրիգորյան Գ., Հախվերդյան Ս., նշվ. աշխ., էջ 188:
5. Տես Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 203:
6. Նույն տեղում, էջ 206:
7. Տես Ջուլալյան Մ., նշվ. աշխ., էջ 99:
8. Տես Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 221: Տես նաև Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 201-202:
9. Տես Հայոց պատմություն, հ. 3, գ. 1, էջ 55:
10. «Ֆարման»-ը թուրքական սուլթանի կամ պարսիկ շահի հրամանագիրը, հրովարտակն է (տես «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 4, Եր., 1980, էջ 814):
11. Տես Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 16:
12. Տես Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Եր., 1959, էջ 165-395:
13. Նույն տեղում, էջ 165:
14. Տես Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 21 և 42:
15. Նույն տեղում, էջ 35:

Մեր մղձաւանջը՝ անզօրութեան զգացումն այս

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Այս պահուս, երբ համակարգիչիս պաստառին առջև նստած՝ գրի կ'առնեմ այս տողերը, չեմ գիտեր, թէ մինչև անոնց լոյս տեսնելը ինչ պատահած պիտի ըլլայ, մղձաւանջը որքան աւելցած, որքան այլափոխուած կամ... փարատած պիտի ըլլայ:

Հասկնալի է՝ խօսքս կը վերաբերի մեր հայրենիքի վիճակին, որ շատ բացասական ազդեցութիւն կ'ունենայ մեր մտաշխարհին վրայ՝ վիատութենէն, հիասթափութենէն մինչև անյուսութիւն, ժխտում, հրաժարում և, սատանան գիտէ, ուրիշ ի՛նչ ապրումներ:

– Հայաստանը հայրենիքս չէ:

– Հայաստանով չեմ հետաքրքրուած, Հայաստանի լուրերը չեմ ուզեր լսել:

– Այլևս ոչ մէկ օգնութիւն Հայաստանին, մենք մեր գլխուն ճարը նայինք, Սփիւռքի կարիքներով զբաղինք:

Եւ այսպէս «մտքեր» կը սաւառնին մեր շուրջ: Չակերտեցի այդ բառը, կրնայի այլ բառ մը գուցէ գործածել՝ անմտութիւնները:

Կը լսեմ, կ'ըմբոստանամ, կը զայրանամ, կ'ուզեմ լուսաբանել, յանդիմանել, հակաճառել, կ'անդրադառնամ, սակայն, թէ արտաքին պայմանները այնպիսի ճնշում կը բանեցնեն մեր վրայ, որ խօսքերը դժուար թէ ազդեն այդպիսի ապրումներու հակազդելու համար: Բան մը պէտք է փոխուի այնտեղ՝ սահմանէն անդին, մեր հողին վրայ, և ա՛լ աւելի կը սաստկանայ անզօրութեան զգացումը, քանի որ ինձմէ կախում չունի, մեզմէ կախում չունի այդ ակնկալուած փոփոխութիւնը, եթէ ոչ ամբողջովին, գէթ մե՛ծ մասամբ կախում չունի մեզմէ: Եւ կամայակամայ կը վերյիշեմ Վահագն Դաւթեանի «Հողն այս մի պատառ»-ը, որուն հետևեալ անմոռանալի տողերը գրուած օրէն՝ 1964-էն ի վեր, տևաբար կը հնչեն ականջներուս մէջ.

Աշնանամուտ է... Իմ լեռնաշխարհն է շողում ոսկեղոր,
Մասիսի վրայ լոյսի ծուէն է ձիւնը նորապարտ...
Քայլում եմ, քայլում... Չգիտեմ սակայն, թէ ինչ խօսքերով
Եւ ինչպէ՞ս լինեմ ես շնորհապարտ
Նրանց, որ հողն այս, փոքրիկ այս հողը՝ նման նշխարի,
Փրկել դարերից, փրկել դաւերից ագահ աշխարհի,
Փրկել են, բերել ու ինձ շնորհել...

Ես այդ փրկուած փոքրիկ հողէն զրկուած մըն եմ, ինչպէս զրկուածներ էին մեծ ծնողքս, ծնողքս, և զրկուած են զաւակներս ու թոռներս: Զրկուածներ ենք բոլորս, հայրենազրկուած, տարագրուած ու տակաւին հայրենազրկուող ու տարագրուող այս ժողովուրդս:

– Հայաստանը հայրենիքս չէ: Չէ՞: Ապա ուրեմն ո՞րն

է հայրենիքս:

Չշփոթենք: Հայրենիք, ծննդավայր, բնակավայր: Նոյնը չեն, չեն կրնար ըլլալ, բայց բախտաւոր են անոնք, որոնց բնակավայրը իրենց ծննդավայրն է, իսկ իրենց ծննդավայրը իրենց հայրենիքն է: Հիմա արդէն մեզի համար, մեզիպէսներուն համար, բայց ոչ միայն մեզի համար բնակավայրը ծննդավայրը չէ, ծննդավայրն ալ հայրենիքը չէ:

Հայրենիքդ հոն է, ուր դարերով ապրեր են նախահայրերդ, զայն շէնցուցեր, քաղաքակրթութիւն են ստեղծեր այնտեղ, զայն պաշտպաներ են թշնամիներէն, տիրութիւն են ըրեր անոր: Ծննդավայրդ ծնած վայրդ է, եղեռնապուրծ հայութեան պարագային՝ արդէն հայրենիքէդ դուրս, յաճախ հեռու տեղ մը: Իսկ բնակավայրդ շատ հաւանաբար ծննդավայրդ ալ չէ այլևս, քանի որ տարբեր պատճառներով, յատկապէս ապրուստի աւելի լաւ ու հանգիստ պայմաններու որոնման ի խնդիր տարբեր վայր մըն է արդէն: Եւ սա է երևի ներկայ աշխարհի իրողութիւնը, քանի որ գաղթերը այլևս միայն հալածանքներու և զրկանքներու հետևանք չեն: Եւ, ի հարկէ, այս իրողութիւնը կը զրկէ մեզ նաև այն ապրումէն, որ բանաստեղծը այսպէս կ'երգէր.

Միայնութեան մէջ յաճախ եմ խորհել.
Ես ինչ կ'անէի, եթէ չլինէր հողն այս մի պատառ,
Թէ ճամբիս վրայ չիշշար բարդին այս բարձրակատար,
Թէ աշնան քամին թոնրի հուրն առած դէմս չվազէր,
Թէ չշնչէի բոյրը այս հողի, ուրցի, փշատի,
Թէ չշրջէի ճանապարհներին հին Արտաշատի,
Եւ աւերակն այս քարէ լռութեամբ
Ինձ նախնիներիս պատգամը չասէր:

Նախնիներուս այդ պատգամը այդ հողէն կու գայ միայն, որքան ալ մենք փորձեցինք ու դեռ կը փորձենք լսել և մեր յաջորդ սերունդներուն փոխանցել մեր հոգեկան հայրենիքէն, մանաւանդ մեր մայրենիքէն՝ մեր լեզուէն, մեր մշակոյթէն ու պատմութենէն եկող պատգամները:

Ո՛չ, սիրելի՛ Վահէ Օշական, ողբացեալ ընկեր, Սփիւռքը Երկիր չէ, արտերկի՛ր է:

Այո՛, հայ ըլլալու և հայ մնալու ճիգը պիտի շարունակենք գործադրել՝ միաժամանակ չմոռնալով նաև մեր հաւատարմութիւնն ու պարտաւորութիւնները մեր ծննդավայրերուն ու բնակավայրերուն նկատմամբ, բայց զանոնք հայրենիք չենք կրնար համարել:

Սխա՛լ: Կը համարենք, սկսեր ենք համարել, քանի որ արդէն կէս հայ ենք շատերս, քառորդ հայ, ... մէկվաթսունչորսերորդ հայ, որուն նախահայրերէն փոքր-փոքր տոկոս մը միայն Հայաստանը ունէր որպէս հայրենիք:

Եւ ահա ձուլման այդ ընթացքին մէջ ինչպէ՞ս զգալ ու վայելել Դաւթեանի տողերն այս վերջին.

Ես ի՞նչ կ՚անէի, եթէ չլինէր հողն այս մի պապրաս,
Ինչո՞վ կը լցուէր անհունը հոգուս:
Երակների մէջ իմ արիւնապրար
Ինչպէ՞ս կը խայտար և ինչպէ՞ս դէպի սիրտս կը հոսէր
Այն զգացումը,
Որ հողէ մարդուն դարձնում է ապրուած
Եւ կոչւում է սէր...
Ինչպէս աւիշը ծառաբունն ի վեր,
Նա մայր հողից է բարձրանում իմ մէջ երակ առ երակ,
Մի բուռ սրտիս մէջ, դառնում է անծուխ, անբո՛ց մի կրակ,
Այրում է, փանջում,
Եւ այնպէս քաղցր է այդ փանջութիւնը...

Եւ փանջութիւնն այդ զուցէ հէնց ինքը՝
երջանկութիւնն է....

Հ.Յ.Դ. Բիւրոյի յայտարարութիւնը

Վճռականօրէն դատապարտում ենք վերջին օրերին ՀՀ վարչապետի հրապարակային ելոյթներում տեղ գտած խիստ վտանգաւոր և հակազգային դիրքորոշումներն ու մօտեցումները և այդ հիմքով Պրահայում Եւրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի շրջանակներում տեղի ունեցած բանակցութիւնների ընթացքում ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները:

Յայտարարում ենք.

– ՀՀ վարչապետը և իշխող վարչախումբը չեն սպասարկում հայկական շահերը և չունեն լեգիտիմ մանդատ՝ Հայաստանի ու հայութեան անունից ստորագրելու որևէ փաստաթուղթ, որը հարցականի տակ է դնում Հայաստանի և Արցախի ինքնիշխանութիւնն ու հայ ժողովրդի շահերը:

– Միջազգային իրաւունքի սկզբունքների և նորմերի կոպիտ ոտնահարմամբ, մասնաւորապէս ուժի կիրառման և ուժի սպառնալիքի կիրառման, ինչպէս նաև Ադրբեջանի կողմից բացայայտ ագրեսիայի և Հայաստանի ինքնիշխան տարածքների բռնագրաւման պայմաններում սահմանազատման և սահմանագծման ուղղութեամբ ցանկացած գործընթացի նախաձեռնում և իրականացում անընդունելի է:

– Արցախն իր ինքնիշխանութիւնը հռչակել է միջազգային և ներպետական իրաւական կառուցակարգերին համապատասխան, և այն սակարկման ենթակայ չէ:

– Հայաստանի Հանրապետութիւնը որևէ պարագայում չի կարող հրաժարուել Արցախի ժողովրդի անվտանգութեան և ինքնորոշման իրաւունքի երաշխաւորի կարգավիճակից: Նման քայլը անխուսափելիօրէն կը յանգեցնի Արցախի հայաթափմանն ու արցախահայութեան հայրենազրկմանը:

Ակնկալում ենք, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները հաւատարիմ կը մնան իրենց ստանձնած մանդատին ու պարտաւորութիւններին և հետևողական կը լինեն հռչակուած սկզբունքների հիման վրայ Արցախի հիմնախնդրի կարգաւորման հարցում:

Կո՛չ ենք ուղղում հայ ժողովրդին չտրուել իշխանութեան կողմից սերմանուող պարտուողական տրամադրութիւններին, յուսահատուել, համախմբուել ազգային ուժերի շուրջ և բեկում մտցնել իրավիճակի մէջ: Դա ենթադրում է արմատական փոփոխութիւններ երեք հիմնական ուղղութիւններով՝

ա) Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան վերականգնումով համահայկական զօրաշարժի իրականացում,

բ) պաշտպանութեան և անվտանգութեան հրատապ խնդիրների լուծում,

գ) կենսական զիջումները բացառելուն ուղղուած արտաքին զօրակցութեան ապահովում:

Այս առաջնահերթ խնդիրների լուծումը հնարաւոր է միայն ժողովրդի վստահութիւնը վայելող ազգային համաձայնութեան նոր կառավարութեան ձևաւորման դէպքում:

Մենք վճռական ենք, յստակ պատկերացնում ենք մեր անելիքները և կոչ ենք անում միասնական պայքարի:

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՕ
8 հոկտեմբեր, 2022 թ.



ԴՐՕՇԱԿ